

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՀ ԼՈՒԺՈՎԿԱՄԱՑ

# ՀԵՐՆԱՐԿ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՀԱՄԱՐ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԽՈՀՈՀՈՀՈՅ

ՅԵՐԵՎԱՆ

1938 թ.

Հ 2103 ՀԱՅԱՍՏԱՆԻ Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ  
372.2 120-10  
2-46

## ՀԵՐՆԱՐԿ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԴԱՏԻԱՐԱԿԻ ՀԱՍՏԱՐ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱԽՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ - Բազես

ՅԵՐԵՎԱՆ

ԼՈՒՍԴՐԱՑ

1938 թ.

18 SEP 2013 Հայաստան  
Կոնսուլ Արքայութիւն Ա. ՅԵՐԻՑՅԱՆ  
ՄԱՐՏԻՐԻՒ Ա. ԲՈԼԱԲԱՆՅԱՆ

50.600

## Հ Ր Ա Մ Ա Ն № 176

Հայկական ԽՍՀ Լուսավորության Ժողովրդական Կոմիտարիատի  
15 նոյեմբերի 1938 թ.

### § 1

Հաստատել «Մանկապարտեզի կանոնադրություն»-ը և «Ձեռնարկ մանկապարտեզի դաստիարակի համար» ծրագրա-մեթոդական ցուցումները՝ փախադրված ՌԽՖՍՀ Լուսժողկոմատի համառուն գրքից, ՀԽՍՀ Լուսժողկոմատի նախադպրոցական բաժնի կողմից, մասնակցությամբ նախադպրոցական ակտիվի:

### § 2

Պարտադրել զբանային (քաղաքային) ժողկրթության բաժինների վարիչներին՝ ուժեղացնել իրենց վերահսկողությունը մանկապարտեզների աշխատանքի նկատմամբ՝ կոնկրետ ոգնություն ցույց տալով մանկապարտեզների վարիչներին ու դաստիարակներին նրանց պատվավոր ու պատասխանատու աշխատանքում:

Հայկական ԽՍՀ Լուսավորության ժողովրդական կոմիտար՝  
Բ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



59864.66

Գլավիտի լիազոր Ա-4113 Պատվեր № 770: Տիրաժ 2000

Ժ. Հայկական ժողովրդական տպարան, Յերևան

## ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՆԱՍԴՐՈՒԹՅՈՒՆ

### I. ԷՆԴՅԱՆԱՔ ԳՐՈՒԹՅՈՒՆ

§ 1. Մանկապարտեզը 3—7 տարեկան յերեխաների հասարակական խորհրդավին դաստիարակության պետական հիմնարկ և, վորի նպատակն եւ ապահովել յերեխաների բազմակողմանի զարգացումը և կոմունիզմի վորով դաստիարակությունը։ Մանկապարտեզը միաժամանակ ոժանդակում և մայր-կանանց՝ մասնակցելու տնտեսական, պետական, կուլտուրական ու հասարակական-քաղաքական կյանքին։

ԾԱՆՈթՈՒԹՅՈՒՆՆ.— Այս դեպքում, յերբ 7 տարեկան յերեխաներին հնարավոր չեւ տեղափորել զպրոցի նախագաղաքական դասարանում, նրանց համար մանկապարտեզում կարելի յեւ կազմակերպել առանձին խմբակ։

§ 2. Մանկապարտեզը անկախ նրանից, թե վոր կազմակերպության կամ հիմնարկության և նա յենթակա, իր աշխատանքը կատարում և ՀԽՍՀ Լուսավորության Ժողովրդական կոմիսարիատի կողմից հաստատված «Մանկապարտեզի կանոնադրության» և ծրագրա-մեթոդական ցուցումների հիման վրա։

§ 3. Այս կանոնադրության § 1-ում նշված նպատակները կենսագործելու համար մանկապարտեզը՝

ա) Հոգ և տանում յերեխաների առողջության մասին և ապահում և նրանց ֆիզիկական կանոնավոր զարգացումը՝ մանկապարտեզի վողջ ըրջադրությունն ու ռեժիմը նախադպրոցական յերեխայի առողջության ու առողջապահական պահանջների համապատասխան կազմակերպելու, բազմատեսակ և լավ սնունդ տալու, ողը, ջուրն ու արևն առավելագույն չափով և ճիշտ ոգտագործելու, համապատասխան խաղեր կազմակերպելու, ֆիզիկական վարժություններ տալու և յերեխաների մեջ առողջապահական տարրական կանոններն ինքնուրույն կերպով կատարելու ունակություն դաստիարակելու միջոցով։

բ) Գրավիչ խաղերի ու զբաղմունքների, զեղարվեստական

խոսքի, յերաժշտության, յերպի, դեպի ընությունը կատարվող եքսկուրսիաների, զբուանքների և շրջապատի կյանքին յերեխաներին ծանոթացնելու միջացով կենսագործում և նախադպրոցական յերեխայի մտավոր զարգացման ու գեղարվեստական դաստիարակության խնդիրը. յերեխաների մեջ դաստիարակում և կազմակերպվածություն, կոլեկտիվում իրենց պահելու, միասին խաղալու կարողություն, հարգանք և դաստիարակում դեպի ծնողներն ու մեծերը և սովորեցնում և ճիշտ վարվել ու խնամքով վերաբերվել իրենց ոգտագործմանը հանձնված իրերի նկատմամբ. նկարչության, ծեփի և թղթի ու այլ նյութերով զբաղմունքների միջոցով տալիս և մատիտի, մկրատի, ներկերի, կափի, սոսինձի և այլ պիտույքների հետ վարվելու յերեխաներին մատչելի տարրական ունակություններ ու հմտություններ:

զ) Յայտուն, յերեխաներին մատչելի որինակներով նրանց մեջ դաստիարակում և սեր դեպի մեր սքանչելի սոցիալիստական հայրենիքը, դեպի մեր հիանալի խորհրդային ժողովուրդը, դեպի նրա առաջնորդները, հերոսները, դեպի մեր քաջարի Կարմիր Բանակը, դեպի դործարանների ու սոցիալիստական դաշտերի ստախանովականները:

դ) Իրազործում և յերեխաներին հակակրօնական և ինտերնացիոնալ վոգով դաստիարակելու խնդիրները:

Մանկապարտեզի դաստիարակչական աշխատանքը նպաստում և յերեխայի հետաքա, դպրոցական հաջող ուսուցմանը:

§ 4. Մանկապարտեզը պետք է նախադպրոցական հասակի յերեխաների ճիշտ դաստիարակության կենդանի որինակ հանգիստանա և ողնի ծնողներին՝ յերեխաների ընտանեկան դաստիարակության գործը հաջող տանելու:

§ 5. Մանկապարտեզում աշխատանքը տարվում և յերեխաների մայրենի լեզվով:

§ 6. Մանկապարտեզում յերեխաների դաստիարակության կարերը ու պատասխանատու գործը կատարում և մանկապարտեզի դաստիարակը:

## II. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԵՐԵՐ ԲԱՑԱԼԻ ԿԱՐԳ

§ 7. Մանկապարտեզները կազմակերպվում են ժողկրթության բաժինների, ֆաբրիկա-գործարանային ձեռնարկությունների, հիմնարկությունների, կոոպերատիվ ու խորհրդային կազմակերպությունների կողմից:

§ 8. Մանկապարտեզներ բացելիս տնտեսական բոլոր կազմակերպություններն ու հիմնարկությունները պարտավոր են խստորեն պահպանել մանկապարտեզի շինարարության և պահպանության վերաբերյալ ՀԽՍՀ Լուսժողկոմատի և Առժողկոմատի սահմանած սահմանական կանոնների, շենքի ծավալի, կահավորության, ուսումնական պիտույքների, սննդի և յերեխաների բուժ-սպասարկման նորմաները:

§ 9. Բոլոր մանկապարտեզները, անկախ նրանից, թե ում նկողության տակ են գտնվում, պարտադիր կարգով պետք և գրանցվեն համապատասխան շրջանային կամ քաղաքային ժողկորթության բաժնում՝ շրջանային միասնական համարակալման կարգով:

§ 10. Մասնավոր անձանց թույլ չի տրվում մանկապարտեզ կազմակերպել:

## III. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

§ 11. Մանկապարտեզների հիմնական տիպերը հանդիսանում են 3 կամ 4 խումբ ունեցող մանկապարտեզները:

§ 12. Մանկապարտեզի խմբերը կոմպլեկտավորվում են յերեխաների տարիքային կազմի համապատասխան, այն հաշվով, սակայն, վոր յուրաքանչյուր խմբում հաջորդական յերկու տարիքից ավելի հասակի յերեխաներ չկինեն (3—4 տարեկաններ՝ փոքրերի խումբ, 4—5 տարեկաններ՝ միջնակների խումբ, 5—6 տարեկաններ՝ մեծերի խումբ):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1. Բազմակոմպլեկտ մանկապարտեզներում թույլատրվում է կազմակերպել զուգընթաց խմբեր. նվազագույն տարեքի յերեխաներից կազմվում է առանձին խումբ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 2. Լուսժողկոմատի թույլատրվությամբ կարելի յերեխաների նաև յերկոմպլեկտ ու միակոմպլեկտ մանկապարտեզներ:

§ 13. Մանկապարտեզի յուրաքանչյուր խմբում պետք և լինի 25 յերեխա:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 3—4 տարեկանների խմբում 18 յերեխայից ավելի չպետք և լինի:

§ 14. Երեխաների մանկապարտեզում մնալու տեվողությունը (3, 9 և 12 ժամ) վորոշվում է ձեռնարկության, հիմնարկության կամ կազմակերպության բանվարժների, ծառայողների (վորոնց յերեխաներին սպասարկում և տվյալ մանկապարտեզը) աշխատանքով:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Սաանձին մանկապարտեղներում սպասարկելու համար այն յերեխաներին, վորոնց ծնողները գիշերային հերթերի յին աշխատում, կարելի յև կազմակերպել տանձին խմբեր՝ աշխատանքի լրիվ որպա տեղողությամբ (24 ժամ):**

**§ 15. Յերեխաները մանկապարտեղում պետք ե սնվեն՝ 7 ժամ մանկապարտեղում մնալու դեպքում—2 անգամ, 9 ժամ մնալու դեպքում—3 անգամ, 12 կամ 24 ժամ մնալու դեպքում—4 անգամից վոչ պակաս:**

**§ 16. Մանկապարտեղն աշխատում ե կլոր տարին, բայց առությամբ կարմիր որացույցի որերի և համապատասխան կարգով սահմանված հանդստի որերի:**

#### IV. ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԳԻ

**§ 17. Ժողկրթության որգաններին յենթակա մանկապարտեղներում յերեխաների ընդունելությունը կատարում ե անձամբ մանկապարտեղի վարիչը: Տնտեսական կազմակերպությունների, հիմնարկությունների և կոլտնտեսությունների մանկապարտեղներում յերեխաների ընդունելությունը կատարում են համապատասխան ձեռնարկությունների և հիմնարկությունների վարչությունները՝ արհմիության տեղիումի հետ համաձայնեցնելով, և խորհունտեսության վարչությունը:**

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կույր, համր ու խուլ յերեխաները սովորական տիպի մանկապարտեղներ չեն ընդունվում. այդպիսի յերեխաները պետք և ուղարկվեն հատուկ մանկական հիմնարկներ:**

**§ 18. Յերեխաներին մանկապարտեղ տանելիս ծնողներից կամ այն անձերից, վօրոնց դաստիարակության տակ են դանը վում յերեխաները, պահանջվում ե ներկայացնել՝ ա) գիմում յերեխային մանկապարտեղ ընդունելու մասին, բ) վկայական յերեխայի տարիքի մասին և գ) տեղեկանք ծաղիկը ծեծած լինելու մասին:**

**Յերեխաներին մսուրից մանկապարտեղ փախադրելիս պահանջվում ե հանձնել նրանց բժշկական քարտերը.**

**§ 19. Մանկապարտեղում յերեխաներին հաջորդ բարձր խումբ փոխադրելը կատարվում ե սեպտեմբերի մեկից մինչև 15-ը:**

**Խմբերում ազատվող տեղերի հաշվին մանկապարտեղի վարիչը պարտավոր ե ընդունելություն կատարել ամբողջ տարվա ընթացքում:**

**Յերեխայի վարումը մանկապարտեղից թույլատրվում է միայն այն դեպքում, յերբ յերեխան, համապատասխան բաժնիմարդկի յեղակացության համաձայն, հատուկ բուժիմարդկությամբ կարիք ունի:**

#### V. ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂԻ ՂԵՂԱՎՈՐՈՒՄԸ

**§ 20. Մանկապարտեղի գլուխ կանոնած և վարիչը:**

**§ 21. Մանկապարտեղի վարիչին նշանակում ու արձակում և շրջանային (քաղաքային) ժողկրթության բաժնի վարիչը:**

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Տնտեսական հիմնարկների ու կազմակերպությունների մանկապարտեղների վարիչների նշանակումն ու արձակումը կատարվում ե տվյալ հիմնարկի կամ կազմակերպության վարչությունը համապատասխան շրջ-քաղաքային ժողկրթության բաժնի համաձայնությամբ:**

**§ 22. Մանկապարտեղի վարիչը նշանակվում ե այն անձերից, վօրոնք ունեն ընդհանուր միջնակարգ կրթություն, ինչպես և նախադպրոցական միամյա դասընթացներից վոչ ցած մասնագիտական կրթություն և յերկու տարուց վոչ պակաս մանկապարտեղային աշխատանքի ստած:**

**§ 23. Մանկապարտեղի վարիչը**

**ա) Ղեկավարում ե մանկապարտեղի վողջ աշխատանքը:**

**բ) Կազմակերպում ե դաստիարակների աշխատանքը և սիստեմատիկաբար ստուգում այն՝ անձնապես հաճախելով խմբերը և ստուգելով դաստիարակների աշխատանքի պլանները:**

**շ) Հոգ և տանում դաստիարակների ընդհանուր ու քաղաքական մակարդակի և արտադրական վորակի բարձրացման մասին,**

**դ) Մանկապարտեղն ապահովում ե համապատասխան կանորությամբ, խաղալիքներով ու պիտույքներով:**

**յե) Ապահովում ե յերեխաների բավարար չափով և բազմատեսակ սնունդը, թույլ չտալով իջեցնել Ասուղղկոմատի կողմից մանկապարտեղի յերեխայի սննդի վերաբերյալ սահմանված նորմաները:**

**զ) Ապահովում ե սանիտարական—առողջապահական կանոնների, հականդեհային միջոցառումների, ինչպես և մանկապարտեղի շենքի վերանորոգման ժամանակին կատարումը:**

**ե) Ապահովում ե յերեխաների առողջությունն ամրապնդելու վերաբերյալ բոլոր անհրաժեշտ պայմանները (ձիշտ ու եժմիմի:**

դործագրում, յերեխաներին ամառանոց տանելու դործի, քնի կազմակերպում և այլն):

բ) Փողկրթության բաժնին և ներկայացնում մանկապարտեղի դաստիարակների նշանակման կամ արձակման հարցերը և ինքնուրուցն կերպով ընդունում ու արձակում և տնտեսվարին ու սպասարկու տեխնիկական կազմին՝ խստորեն պահպանելով աշխատանքային համապատասխան որենքները:

թ) Ապահովում և մանկապարտեղի աշխատողների աշխատավարձի ժամանակին վճարումը:

ժ) Ապահովում և մանկապարտեղի նախահաշվի կազմումն ու կատարումը և անձնապես պատասխանատու լինում միջոցների ճիշտ, ժողկրթության բաժնի կամ համապատասխան ձեռնարկության կողմից հաստատված նախահաշվի համեմատ ծախսան համար:

ի) Կազմակերպում և դրամական և նյութական—մթերային հաշվետվության ճիշտ վարումը:

լ) Կազմակերպում և աշխատանքը ծնողների և ազգարնակության մեջ՝ յերեխաների դաստիարակության և նախապրոցական յերեխայի կենցաղն ընտանիքում բարելավելու հարցերի վերաբերյալ:

§ 24. Գործը լավագույն ձևով դնելու նպատակով մանկապարտեղի վարիչը պարբերաբար մանկապարտեղի աշխատողների խորհրդակցություններ և հրավիրում և մանկապարտեղի աշխատանքի մեջ ներդրավում ծնողական ակտիվին, միաժամանակ սերտ կապ պահպանելով տեղական պետական հիմնարկների, հասարակական կազմակերպությունների և մամուլի հետ:

§ 25. Մանկապարտեղի վարիչն իր ամբողջ աշխատանքի ընթացքում զեկավարված և յերեխաների դաստիարակության վերաբերյալ կուսակցության ու կառավարության վորոշումներով, «Մանկապարտեղի կոնոնագրությամբ» և կուսակցումատի ծրագրա—մեթոդական ցուցումներով:

### ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԸ

§ 26. Մանկապարտեղի դաստիարակի նշանակումն ու արձակումը կատարում և շրջանային՝ (քաղաքային) ժողկրթության բաժնի վարիչը՝ մանկապարտեղի վարիչի առաջարկությամբ:

ԾԱՆՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ.— Այս կամ այն ձեռնարկության, հիմնարկության յենթակա մանկապարտեղի դաստիարակի նշանակումն ու արձա-

կումը կատարում և համապատասխան հիմնարկության վարչությունը՝ շրջանային (քաղաքային) ժողկրթության բաժնի վարիչի հետ համաձայնեցնելով:

§ 27. Մանկապարտեղի դաստիարակը նշանակվում և այն անձերից, վորոնք ավարտել են նախադպրոցական մանկավարժական ուսումնարանը կամ ունեն միջնակարգ կրթություն և մասնագիտական պատրաստություն են ստացել նախադպրոցական դասրնթացներում:

ԾԱՆՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ.—Առանձին դեպքերում մանկապարտեղի դաստիարակի աշխատանքը կարելի յեթույլ տալ այն անձանց, վորոնք միջնակարգ կրթություն չունեն, սակայն սիստեմատիկաբար բարձրացնում են իրենց գորակը շրջանային (քաղաքային) ժողկրթության բաժնի կողմից սահմանված ժոմանակամիջոցում:

§ 28. Մանկապարտեղի դաստիարակն անձնապես պատասխանատու յեր իր խմբի ամեն մի յերեխայի ճիշտ դաստիարակությունը՝ իր աշխատանքի ընթացքում անշեղ զեկավարվելով կուսակցության պահպանման ու ճիշտ դաստիարակության համար:

§ 29. Մանկապարտեղի դաստիարակը

ա) Ապահովում և իր խմբի ամեն մի յերեխայի ճիշտ դաստիարակությունը՝ իր աշխատանքի ընթացքում անշեղ զեկավարվելով կուսակցության պահպանման արագական ցուցումներով:

բ) Հոգատար և ուշադիր վերաբերմունք և ցուցաբերում դեպի իր խմբի ամեն մի յերեխայի հետաքրքրությունն ու կարիքները:

գ) Կատարում և յերեխայի առողջության պահպանման ու ամբացման հետ կապված պահանջները:

դ) Խնամքով նախապարաստված և յերեխաների հետ տարգելիք իր պարապմունքներին:

յե) Մասնակցում և մանկապարտեղի վարիչի հրավիրած մանկապարժական խորհրդակցություններին:

զ) Ծնողների մեջ աշխատանք և տանում մանկապարտեղում և ընտանիքում յերեխաների դաստիարակության վերաբերյալ հարցերի շուրջը:

ե) Կազմում և յերեխաների հետ իր տանելիք և տարածաշխատանքի պլաններն ու հաշվետվությունները:

§ 30. Ամեն մի դաստիարակ պարտավոր և սիստեմատիկաբար բարձրացնել իր վորակը:

§ 31. Մանկապարտեղի դաստիարակն աշխատում և մանկա-

պարտեղի վարիչի ղեկավարությամբ և հաշվետու յե նրա առաջի աշխատանքի համար:

§ 32. Մանկապարտեղի դաստիարակի համար իբրև աշխատանքի տևողության նորմա սահմանվում և որական վեց ժամ:

### Բ Ժ Ի Ծ Կ Ը

§ 33. Մանկապարտեղի բժշկի վրա դրվում են հետևյալ պարտականությունները.

ա) Յերեխաներին բժշկական քննության յենթարկել (աշխատանքի յերեխաների ընդունելության ժամանակ և գարնանը՝ յերեխաներին ամառանոց տանելուց առաջ) և անհրաժեշտ ավյալ ները մտցնել նրանց անձնական բժշկական քարտերի մեջ:

բ) Յերեխաների ընդհանուր խմբից առանձնացնել այն յերեխաներին, զարոնք հատուկ բռնժման կարիք ունեն, անցկացնել նրանց պոլիկլինիկայի կամ տեղական այլ բուժիթարկերի միջոցով և այնուհետեւ մանկապարտեղում հետեւել նրանց առողջությանը:

գ) Բուժողնություն ցույց տալ անակնկալ հիվանդացող յերեխաներին և մանկապարտեղում անցկացնել անհրաժեշտ պլուֆիլակիկ միջոցառությունը (ախտահանում և այլն):

դ) Կազմակերպել ու անցկացնել յերեխաների պրաֆիլակտիկ սրսկումներ:

յե) Պարբերաբար հսկել յերեխաների առողջական վիճակին ու նրանց ֆիզիկական զարգացմանը (պարբերական բժշկական քննություններ, ամսեամիս կշռում, անտրոպոմետրիկ չափումներ և այլն):

զ) Հսկողություն ունենալ մանկապարտեղի սանիտարական գրության վրա (մասնավորապես՝ խոհանոցի և մթերքների պահպատճենի):

ե) Մշտական հսկողություն ու վերահսկողություն կատարել յերեխաների սննդի պատրաստման վորակի և ճաշացուցակի կազմման վրա:

ը) Մանիտարական-լուսավորական աշխատանք կատարել յերեխաների ծնողների և մանկապարտեղի դաստիարակների ու տեխնիկական անձնակազմի մեջ՝ յերեխաների անձնական առաջադարձանության, վարակիչ հիվանդությունների կանխման, շենքը

սանկտարական լավ վիճակում պահելու և այլ հարցերի վերաբերյալ:

### ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐԻՉ

§ 34. Տնտեսավարն աշխատում է մանկապարտեղի վարիչի դեկավարությամբ և հաշվետու յե նրա առաջ:

§ 35. Մանկապարտեղի տնտեսվարը

ա) Ապահովում է սննդի ճիշտ կազմակերպումը և պատասխանատու յե պատրաստված սննդի վօրակի ու մթերքների պահպանության համար:

բ) Ապահովում է կահավորման իրերի ժամանակին ձեռքբերումը, պատասխանատու յե մանկապարտեղի հակառակենային պաշտպանության պահանջների կատարման համար, կազմակերպում է մանկապարտեղի ինվենտարի և վազջ ունեցվածքի կանոնավոր պահպանումը:

գ) Ապահովում է վառելիքի ժամանակին ձեռքբերումը և մանկապարտեղի շենքի վերանորոգումը:

դ) Կազմակերպում է մանկապարտեղի սպասարկու տեխնիկական անձնակազմի աշխատանքն ու վերահսկողության յենթարկում այն:

յե) Տնտեսվարի աշխատաժամերի նորման որական 8 ժամից չպետք է անցնի:

### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆՁՄ

§ 36. Տեխնիկական անձնակազմն աշխատում է մանկապարտեղի վարիչի կարգադրությունների ու ցուցումների և մանկապարտեղի ներքին կարգապահական կանոնների համաձայն:

§ 37. Տեխնիկական անձնակազմի աշխատանքային որվանորմա սահմանվում է օրական 8 ժամ: Մանկապարտեղի վազջ անձնակազմը պարբերաբար յենթարկում է բժշկական քննության:

§ 38. Գիշերային հերթապահություն տանող անձնակազմը հերթապահության ժամերին իրավունք չունի քննելու, ու իր հերթապահության ամբողջ ժամանակամիջոցում պարտավոր է հսկել յերեխաների քննին ու մանկապարտեղի կարգին:

### VI. ԴՆՈՂԱԸՆ ԿՈՄԻՏԵ

§ 39. Մանկապարտեղի վարիչին սպնելու նպատակով, վարպետությունը կենսագործի մանկապարտեղի աշխատանքի ամրաց-

ման ու նրա վորակի բարձրացման սւլգությամբ անհրաժեշտ ձեռնարկումները, մանկապարտեզների վարիչներին առընթեր կազմակերպվում են ծնողական կոմիտեներ:

Մանկապարտեզի ծնողական կոմիտեն (մոտավորապես 1-2 ներկայացուցիչ մանկապարտեզի յերեխաների յուրաքանչուր խմբից) ընտրվում ե ծնողական ընդհանուր ժողովում, ձայների պարզ մեծամասնությամբ:

§ 40. Ծնողական կոմիտեն ընտրվում ե մեկ տարի ժամանակով:

§ 41. Ծնողական կոմիտեն իր միջից ընտրում ե նախագահ և քարտուղար:

§ 42. Ծնողական կոմիտեն

ա) Ոգնում ե վարիչին՝ կազմակերպելու յերեխաների առողջացման աշխատանքը մանկապարտեզում, ապահովելու մանկապարտեզը համապատասխան կահավորությամբ, դիտողական պիտույքներով ու խաղալիքներով:

բ) Մասնակցում ե ընտանիքների հետ տարվելիք աշխատանքի գծով մանկապարտեզի առանձին միջոցառություններին:

Ոգնում ե մանկապարտեզի վարիչին՝ կազմելու մանկապարտեզի պահպանման նախահաշիվը, վերանորոգելու շենքը և կագորելու մանկապարտեզը:

գ) Պարբերաբար վերահսկողություն ե ունենում մթերքների կանոնավոր ծախսման, յերեխաների սննդի վորակի, մթերային ու դրամական հաշվետվությունների կանոնավոր կազմման, մանկապարտեզի շենքի և ունեցվածքի պահպանության վրա:

§ 43. Ծնողական կոմիտեյի վորոշումները հաստատում ե մանկապարտեզի վարիչը:

## VII. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԱՍՏԵՔՆԵՐԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՑԵՎ ԳՐԱՅԻ ՏՆՈՐԻՆՈՒՄԸ

§ 44. Մանկապարտեզի հաստիքները սահմանվում են ՀԽՍՀ էլուստողկոմատի և Ֆինժողկոմատի կողմից հաստատված պետական հաստիքների հիման վրա:

§ 45. Յուրաքանչյուր մանկապարտեզ ունենում ե իր առանձին բյուջեն և տարեկան նախահաշիվը՝ հաստատված համապատասխան շրջանային (քաղաքային) ժողկրթության բաժնի կամ համապատասխան ձեռնարկության, հիմնարկության, խորհ-

ոնտեսության վարչության կողմից, նայած, թե ում բյուջեյոմն ե գտնվում տվյալ մանկապարտեզը:

§ 46. Մանկապարտեզի վարիչը հանդիսանում ե վարկերի կարդադրիչը:

§ 47. Մանկապարտեզի ամբողջ ունեցվածքը (շենք, կահավորություն, գրագարան և այլն), վոր գոնվում ե մանկապարտեզի ոգտագործման տակ՝ հանդիսանում ե պետական կամ կոռպերատիվ կոլտնտեսային սեփականություն:

§ 48. Յուրաքանչյուր մանկապարտեզ ունենում ե իր կողմից:

## ՁԵՌՆԱՐԿ

ՄԱՆԿԱԳՈՐԾԵԶԻ ԴԱՍՏԻՐԸՆԿԻ ՀԱՐՄԱ  
(Մրագրա-սեթողական ցուցումներ)

Ներածություն

Համ Կ(բ)կ Կենտկոմի 1936 թ. հուլիսի 4-ի վորոշումը՝  
«Մանկարանական խեղաթյուրումների մասին Լուսժողկոմատների  
սիստեմում», մերկացրեց մանկարանության ամբողջ կեղծ գի-  
տականությունն ու հետադիմականությունը և այն հսկայական  
վիճակը, վոր նա հասցըրել ե ժողովրդական կրթության զործին:

Համ Կ(բ)կ Կենտկոմի այս վորոշումով վերականգնվում  
է են մանկավարժի իրավունքներն ու մանկավարժությունը և ա-  
ռավելագույն պարզությամբ նշվում են այն ուղիները, վորոն-  
ջով աճող սերնդի դաստիարակությունը հասցվելու յե այնպիսի  
օրարձրության, վորպիսի բարձրության վրա նա պետք ե կանո-  
յնած լինի սոցիալիստական պետության մեջ,

Մանկարանությունն ուժեղ կերպով տարածվել ու արմատ-  
ներ եր ձգել վոչ միայն զպրոցում, այլ և նախադպրոցական  
դաստիարակության տեսության մեջ ու պրակտիկայում։ Այդ  
կեղծ գիտաւթյան հիման վրա եյին կազմվում մանկավար-  
տեղների համար նախատեսված «գեղավար» փաստաթղթերը։

Այդ հիմնական փաստաթղթերից մեկը հանդիսանում եր  
1934 թվին Լուսժողկոմատի կողմից հրատարակված «Մանկավար-  
տեղի ծրագրերն ու ներքին կարգ ու կանոնը»։

Յեւնելով մանկարանական կեղծ գիտության դլխավոր հե-  
տադիմական «որենքից», թե՝ «յերեխաների բախտը ճակատա-  
գրութեն պայմանավորված և կենսարանական և սոցիալական  
գործոններով, ժառանգականության և ինչ-վոր անփոփոխելի  
միջավայրի ազդեցությամբ», 1934 թ. ծրագրերը բոլոր յերեխա-  
ների համար խստորեն սահմանում եյին զարգացման անփոփո-  
խելի ստադիաներ ու հասակային նորմաներ։



Այսպես՝ «Խոսքի զարգացման» ծրագրում յերեխան Յ տարեկան հասակում պետք է շրջապատի առարկաների անունները տար, Յ ու կես տարեկան հասակում՝ Նկարի վրա յեղած առարկաների անունները, և տարեկան հասակում՝ գործողությունների անունները, իսկ Յ ու կես տարեկան հասակում՝ առարկաների հատկությունների անունները:

Ֆիզիկական դաստիարակության ծրագրում՝ պահանջվում եր, վոր Յ տարեկան յերեխան առաջին կիսամյակում ոճառով լվանա ձեռքի գաստակները և անպայման «բոլորաձեւ» շարժումներով, իսկ յերկրորդ կիսամյակում՝ յերեսը լվանա առանց ոճառի. Յ ու կես տարեկան յերեխան՝ պետք և սովորեր արձակել սպիտակեղենի կոռակը կողքից, իսկ Յ տարեկան հասակում՝ կոճկեր կողքի կոճակները:

Անգամ այս մասնակի որինակները վկայում են, վոր 1934 թվի ծրագրերով՝ արհեստականորեն մասնատվում եր յերեխայի զարգացումը, սահմանվում եյին յերեխայի զարգացման մտացածին նորմաներ:

Յերեխայի զարգացման վրա «միջավայրի» ազդեցության ամենակարության վերաբերյալ մանկաբանական կեղծ գիտական տեսությունների համապատասխան, 1934 թվի ծրագրերը դաստիարակի աշխատանքը հանդեցնում եյին «միջավայրի» կազմակերպման:

Հետեւկելով ծրագրի ցուցումներին, դաստիարակը պետք և սահմանափակվեր «միջավայրի» կոտմակերպմաբք և միայն դիտեր յերեխայի վարքը, չիրագործելով յերեխայի իսկական դաստիարակությունը:

Դաստիարակության թերությունները զբարարեն բացատրվում եյին ընտանեկան միջավայրով կամ յերեխայի ժառանգականությամբ և կամ՝ մանկապարտեղի վոչ բավարար կահավորությամբ:

Այսպիսով, 1934 թվի ծրագրերով՝ հասակն ու «միջավայրը» դիտվում եյին վորպես ճակատագրական յերեսությներ, վորոնցով ամբողջովին պայմանավորվում ե յերեխայի զարգացումը. դրա հետեւանքով վերացվում եր դաստիարակից յերեխաների դաստիարակության պատասխանավորվությունը, դաստիարակությունը վեր եր ածվում տարերային պրոցեսի, մանկաբարժությունն արհամարհվում եր, հեղնաբար հայտարարվում եր «եմպիրիկ» և «գիտությունանման դիսցիպլին»:

Քանի վեր, ըստ ծրագրի, այս կամ այն ստադիան վորոշ հասակում պետք է սկսվեր ինքն իրեն, ապա դաստիարակը մատնվում եր անզործության, նրան մնում եր միայն դիտել, թե ինչպես յերեխան «ստադիայից ստադիա» լե անցնում. նա միայն պետք է «կազմակերպեր միջավայրը», առանց յուրաքանչյուր առանձին յերեխայի դաստիարակման սլրիոմների ու մեթոդների վրա աշխատելու:

Ծրագրերը դաստիարակից ծածկում եյին կենդանի, կոնկրետ յերեխաներին իրենց բոլոր առանձնահատկություններով ու հետաքրքրություններով, դաստիարակին կողմնորոշում եյին դեպի ինչ-վոր «միջին» վերացական յերեխան, վորն իրը թե զարգանում եր անփոփոխելի, ճակատագրորեն պայմանավորված հասակային ստանդարտների համաձայն:

Այդ վնասակար ծրագրերը, յենեկով յերեխայի մասին կեղծ գիտական մանկաբանական տվյալներից, արհամարհում եյին նախադպրոցական հասակի յերեխայի առանձնահատկությունները և մանկապարտեղի՝ վորպես Յ—Դ տարեկան հասակի յերեխաների դաստիարակության հիմնարկի՝ յուրահատկությունը:

1934 թվի ծրագրերը նախադպրոցական հասակի յերեխաներից պահանջում եյին չափազանց մեծ ծավալով ֆորմալ գիտելիքների և ունակությունների յուրացում, վորը դաստիարակին ստիպում եր ծանրաբեռնել յերեխաներին նրանց անմատչելի գիտելիքներով և ունակությունների մարզումով:

Որինակ, «Նկարչություն, ծեփ և աշխատանքային զբաղմունքներ» վերտառությամբ ծրագրում առաջին տեղը տրվում եր յերեխաներին փայտի, կառորի (գործվածքի) և թղթի հատկությունների մասին զիտելիքներ տալու խնդրին: Յերեխաներն անպայման պետք ե իմանային, վոր թուղթը պատովում, ճկվում և ձմռում ե: Մանկապարտեղներում պետք ե ստեղծվեյին «աշխատանքային սենյակներ»՝ «աշխատանք» կատարելու համար. նախադպրոցական հասակի յերեխաներին սովորեցնում եյին մուրճով հարվածելու ձիշտ ձեվերին, սովորեցնում եյին տախտակները միացնել «ուղիղ անկյունով» և այլն: Բոլորին անտեսվում եյին յերեխայի ստեղծագործական ընդունակությունների, նախաձեռնության, ըմբռնողության զարգացման խնդիրները:

«Բնական գիտելիքների առաջերը» ծրագրում յերեխաներից մեծ ծավալով փորձալ գիտելիքներ և ունակություններ ելին պահանջվում և ամենեվին չեր ապահովվում այնպիսի դաստիարակչական խնդիրների կենսագործումը, ինչպես հասաքը քրությունը գեպի բնությունը, գիտունակությունը, հարցասիրությունը զարգացնելն եւ և այլն։ Յերեխաների կողմից դիտվող ամեն մի յերեվույթ մասնաւում եր, դրվում վորոշ սխե. մայի մեջ։

Ծրագրում արված եր կենդանիների արտաքին հատկանիշների թվարկում, մորոնք յերեխաների կողմից պետք եւ յուրացվելին վորոշ ժամանակամիջոցում։

Սնդամ խաղերը 1934 թվի «ծրագրերում» արված ելին ուսուցման տեսանկյունով, խաղը նկատվում եր վորպես յերեխաների մեջ այս կամ այն գիտելիքն ու ունակություննը «ամրապնդելու» մեթոդներից մեկը, վորպես թեմաները (կոմպլեքսներ) «մշակելու» յուրատեսակ մեթոդ։ Ծրագրերը դաստիարակին կողմնորոշում ելին այսպես կոչված «խթանված խաղերի» ուղղությամբ, այսինքն խաղեր, վորոնք դաստիարակի կողմից անց ելին կացվում «համապատասխան միջավայր» ստեղծելու, խաղալիքների և այլ «թթանների» ընտրության միջոցով։ Ամեն մի հասակի համար սահմանվում ելին ստեղծագործական խաղերի թեմաներ, յերեխաները դրկվում ելին իրենց ստեղծագործությունը; Նախաձեռնությունը, ֆանտազիան ի հայտ բերելու հնարավորությունից և ստիպված ելին խաղալ դաստիարակի նախագծած պլանով։

1934 թվի ծրագրերում առանձնացված եր աշխատանքի հատուկ մի բաժին՝ «Հասարակական դաստիարակություն» վերատառությամբ։

Այս բաժնում նույնպես, 1934 թվի «ծրագրերի» ընդհանուր դրույթի համաձայն՝ յուրաքանչյուր հասակի յերեխաների համար տուաջարկվում եր Փորձալ գիտելիքների և ունակությունից վորոշ ծավալ։

Յերեխաների հետ քաղգրագիտությունից յուրատեսակ «պարապմունքներ» ելին տարիում, փոխանակ մանկապարտեղի բովանդակ աշխատանքով յերեխաների մեջ դաստիարակելու բնավորություն, ընկերականություն, սեր դեպի մեր հայրենիքը, դեպի նրա առաջնորդները։

Ստեղծելով յերեխաներին սիստեմատիկաբար դպրոցի համար նախապատրաստելու յերեվութականությունը, ծրագրերը գրա-

գիտության ուսուցման գործում որինականացնում եր ամբողջական բառերի հակագիտական, վնասակար մեթոդը, վորը տեղիք եր տալիս ուղղագրական անգրագիտության և խանգարում յերեխաներին այնուհետև դպրոցում գրագիտությունը հաջողությում յուրացնելու։

Մանկարանական խեղաթյուրումները ցայտուն արտահայտություն են դասել նաև մանկապարտեղի որվա ոեժիմի մեջ։ Որվա ոեժիմի չափազանց մանրացումը, յերեխայի կյանքի խիստ ոեղամբնառավորումը բոպեներով դաստիարակին հարկադրում եր հաճախ յերեխաներին պահել լարված վիճակում, կոպիտ կերպով խախտել նրանց շահերը՝ ոեժիմն ամենայն ճշությամբ, բոպեն բոպենին կատարելու նպատակով։

Ծրագրերի մանկաբանական խեղաթյուրումը խորացվում եր նրանով, վոր սահմանվում եր յերեխաների հետ տարվելիք աշխատանքի կազմակերպման ընդհանրական (ունիվերսալ) մի մեթոդ, այն եւ թեման (կոմպլեքս): Թեմաները 1934 թվի ծրագրերի գրույթի ուղղակի հետևանք ելին, վորոնք յերեխաներին տալիս ելին ֆորմալ գիտելիքներ և ունակություններ։ Մի քանի որվա ընթացքում թեմայի «մշակման» հետեւանքով յերեխաները պետք եւ վորոշ գիտելիքներ ստանային այս կամ այն յերեվույթի մասին։

Թեմա-կոմպլեքսներով յերեխաների հետ տարվող աշխատանքը հանդում եր կամպանեականության, խորացնում եր ֆորմալիզմը, յերեխաների մեջ ձանձրույթ եր առաջացնում և արգելակում եր նրանց բազմակողմանի զարգացումը։

1934 թվի ծրագրերը, որինականացնելով դաստիարակի չմիջամտելը յերեխայի զարգացման գործին, մանկապարտեղի աշխատանքի մեջ ելին քաշում ազատ դաստիարակության մասը բուրժուական տեսությունը։

Միաժամանակ, Փորմալ ուսուցման դիրքավորում տալով յերեխաների կյանքից դուրս մղելով իսկական խաղը, ծրագրերը մանկապարտեղում արմատացնում ելին «մուշտրովիկա»։ Սրա մեջ եր կայանում ծրագրի յերկությունը, վորը արտացոլում եր բուրժուական տեսությունների աղղեցությունը և յերեխայի ազատության վերաբերյալ կեղծ Փրազներով քողարկում եր յերեխայի շահերի կոպիտ խախտումը։

Վերեվում ասածներից ամենայն ակնհայտությամբ բղխում ե այն, վոր 1934 թի ծրագրերը հսկայական վնաս են հասցը և յերեխաների դաստիարակության գործին, մանկապարտելիներում տարածելով կեզծ դիտությունը՝ մանկաբանությունը:

1934 թի ծրագրերը, վորպես վնասակար, խորհրդային մանկապարտեղի խնդիրներին հսկասող ծրագրեր, հանված են դեռ 1937 թ.: Անհամեշտ ե մերկացնել 1934 թ. «ծրագրերի» և նրանց կից մեթոդական ցուցումների ամրող վնասակալությունը, մինչև վերջն արմատախիլ անել այդ «ծրագրերի», նրանց հեղինակների և վոգեշնչողների կողմից տարիների ընթացքում արմատացած խեղաթյուրումները:

Խորհրդային մանկապարտեղը պետական հիմնարկ ե և իւրագործում ե յերեխաների կոմունիզմի վոգով հասարակական դաստիարակության խնդիրները, ապահովելով նախադպրոցական յերեխայի բազմակողմանի զարգացման անհամեշտ պայմանները:

Յերեխայի առողջության, նրա ֆիզիկական ձիւտ դարպացման հոգսը մանկապարտեղի կարեվորագույն խնդիրն ե:

Յերեխաների ձիւտ ֆիզիկական դաստիարակությունն առանովելու համար յուրաքանչյուր մանկապարտեղ պետք ե իւրագործի սահմանված որվա ոեժիմը, պետք ե բավական ժամանակ հատկացնի յերեխաներին բոց որում պահելու, ինչպես և քնին, վորոշակի ժամանակ հատկացնի ուսուելուն, ապահովի բարությա և շենքի ներսում տեղի ունեցող խաղերի ու զբաղմունքների միջանց կանոնավոր հաջորդումը:

Յերեխաներին պետք ե ապահովել միշտ ժամանակին աըրվագան և համեղ ոննդով: Յերեխայի առողջության ու կանոնավոր ֆիզիկական զարգացման համար անհրաժեշտ են խաղերն ու ֆիզիկական վարժությունները: Պետք ե յերեխաներին սպորտեցնել կատարել առողջապահական տարրական կանոնները, պետք ե նրանց մեջ սեր դաստիարակել գեղի մաքրությունն ու կարգ ու կանոնը, պետք ե յերեխաների մեջ ինքնուրույնություն զարգացնել, վորպեսդի այն, ինչ կարող են, իրենք կատարեն (լվացվել, հագնվել, խաղալիքները հավաքել ու տեղը գնել և այլն):

Հետաքրքրական խաղերի ու զբաղմունքների միջոցներ, բնությանն ու շրջապատի կյանքին ծանոթացնելով, մանկապարտեղը պետք ե ապահովի յերեխաների մտավոր զարգացումը,

նրանց մտահորիզոնի ընդարձակումը: Անհրաժեշտ ե զարգացնել յերեխաների զգայարանները, ըմբռնողությունը, քաջալերել նրանց հարցասիրությունը, զարգացնել դիտունակությունը, խելամտությունը, ուշադրությունը, հիշողությունը, ւերեակայությունը, խոսքը:

Դաստիարակչական աշխատանքի պրոցեսում, բայց վոչ յերեք հատուկ վարժությունների միջոցով, դաստիարակը սովորեցնում ե յերեխաներին կանոնավոր վարվել իրենց ոգտագործմանը հանձնված իրերի հետ. այդպիսով յերեխաները ձեռք են բերում մի շարք վոչ բարդ հմտություններ՝ կանոնավոր ոգտագործել մատիտը, մկրտարը, վրձինը, սոսինձը և այլն:

Մեծ նշանակություն ունի յերեխաների գեղարվեստական դաստիարակությունը: Հենց նախադպրոցական վաղ հասակից մանկապարտեղը պետք ե զարգացնի յերեխայի ստեղծագործական ընդունակությունները, սերը գեղի այն ամենը, ինչ գեղիական է: Յերաժշտությունը, յերգը, վոտանավորները, հերթիաները, գեղարվեստական նկարները, խաղերը, նկարչությունը, ծիփը և այլն նպատակում են այդ խնդիրների կենսագործմանը: Բնության գեղեցկությունը, նրա մեջ յեղած ձևերի, գույնների, ձայնների հարստությունը գրավում են յերեխաներին, նրանց տալիս են վառ տպագորություններ, հաճույք են պատճառում, դաստիարակում են նրանց գեղարվեստական ձաշակը, սերը գեղի գեղեցիկը:

Յերեխաների կոլեկտիվ կյանքը, նրանց ընդհանուր խաղերն ու զբաղմունքները դաստիարակին մեծ հնարավորություններ են տալիս յերեխաների մեջ զարգացնելու ընկերասիրություն, կազմակերպվածություն, կոլեկտիվում իրեն պահելու, միասին խաղալու, միմյանց ոգնելու կարողություն:

Մեր հայրենիքի անվանի մարդկանց կյանքից վերցրած ցայտուն, յերեխաներին մատչելի որինակների, բազմապիսի հետաքրքրական խաղերի ու զբաղմունքների միջոցով, իր ամենորյա բովանդակ աշխատանքի պրոցեսում մանկապարտեղը պետք ե դաստիարակի յերեխաների բնավորությունը, նրանց կամքը, հաստատակամությունը, տոկունությունը, համարձակությունը, ձշմարտասիրությունը և հարգանքը գեղի ծնողներն ու մեծերը:

Մանկապարտեղի կարեվոր խնդիրն ե՝ յերեխաների մեջ

սեր դաստիարակել գեղի մեր սքանչելի սոցիալիստական հայշընիքը, գեղի մեր առաջնորդները, հերոսները, գեղի մեր քաջարի Կարմիր բանակը, գեղի մեր զործարանների ու սոցիալիստական դաշտերի ստախանովականները, գեղի Խորհուրդների յերկրի լավագույն մարդիկ:

Դաստիարակը, ծանոթացնելով յերեխաներին շրջապատի կյանքի վառ, նրանց մատչելի փաստերին, պատմելով Լենինի ու Ստալինի կյանքի մասին, բոլոր ժողովուրդների աշխատավորների դեղի Լենինն ու Ստալինը տաճած սիրո մասին, հերոսությունների հոչակավոր որինակների մասին, յերեխաների մեջ դաստիարակում ե սեր գեղի մեր հայրենիքը, հապատաշյուն՝ մեր սավառնակներով, աշխարհում լավագույն մեր մետրոյով, մեր պիոներական պալատներով և այլն:

Մանկապարտեզը յերեխաներին դաստիարակում ե ինտերնացիոնալ և հակակրանական վոդով:

Մանկապարտեզի դաստիարակչական աշխատանքը պետք է համապատասխանի նախադպրոցական հասակի յերեխայի առանձնահատկություններին և նպաստի յերեխայի հետազա հաջող սովորելուն դպրոցում:

Նախադպրոցական յերեխաներն աչքի յեն ընկնում իրենց խիստ շեշտված հուզականությամբ: Յերեխաների հետ տարվող խաղերն ու զբաղմունքները պետք ե լինեն բազմապիսի ու հետաքրքրական: Մանկապարտեզում պետք ե բավարարվեն յերեխաների աշխատությունը, կենսուրախությունը, ակտիվությունը, խաղալու պահանջը: Խաղը յերեխայի կյանքի հիմնական բովանդակաւթյունն ե կազմում: Խաղը յերեխային մեծ բավականություն ե պատճառում և նպաստում ե նրա բազմակողմանի զարգացմանը: Այդ պատճառով զրավիչ խաղերը պետք ե մանկապարտեզի վողջ աշխատանքում հիմնական տեղը գրավեն:

Ի՞նչպես ապահովել այս բոլոր խնդիրների կենսագործումը, վոր դրված են մանկապարտեզի առաջ:

Ամենից առաջ պետք ե ամբողջությամբ վերականգնել դաստիարակի, իրեն մանկավարժի, իրավունքները, վարովնետեվ հատկապես դաստիարակի աշխատանքն ե, և վոչ թե տարեցային միջավայրը կամ ձակատագրական ժառանգականությունը, վոր վճռական դեր ե կատարում յերեխայի անձնավորության պարգացման գործում:

Դաստիարակն ամբողջապես պատասխանատու յե ամեն մի յերեխայի միշտ դաստիարակության համար: Լավ իմանալ իր գործը, ուշադիր, զգայուն ու սիրով վերաբերվել գեղի յերեխաները՝ ահա դաստիարակի հաջող աշխատանքի հիմնական պայմանը: Դաստիարակը պետք ե լավ ճանաչի այն յերեխաներին, վորոնց նա դաստիարակում ե Խաղերի ու զրագմունքների միջոցին սիստեմատիկ գիտողություններ կատարելով յերեխայի նկատմամբ, դաստիարակը կարող ե պարզ պատկերացում կազմել յուրաքանչյուր յերեխայի անհատական առանձնահատկությունների մասին և ճիշտ գնել յերեխաների հետ տանելիք իր դաստիարակչական աշխատանքը:

Դաստիարակը, վորպես իր սոցիալիստական հայրենիքի պատրիոտ, յերկրի հասարակական—քաղաքական կյանքի ակտիվ մասնակից, համարձակ, հաստատակամ, կազմակերպված, յերեխաների համար որինակ և ընդուրինակման արժանի մեկն և հանդիսանում:

Դաստիարակի քաղաքականապես գիտակից լինելը, նրա նվիրվածությունը Լենինի-Ստալինի գործին, անհաշուությունը գեղի ժողովրդի թշնամիները, սերը գեղի հայրենիքը՝ յերեխաներին խակական կոմունիստական վուգով դաստիարակելու յերաշխիքներ են հանդիսանում: Դաստիարակի արվեստը նախ և առաջ կայանում ե նրանում, վոր նա զանազան ուղիներով ու միջոցներով իրականացնում ե յերեխայի բազմակողմանի զարգացման խնդիրը, հաշվի առնելով նրա անհատական հետաքրքրությունն ու ընդունակությունները:

Դաստիարակն իր գործում վարպետ ե, լի ձեռներեցությամբ, ստեղծագործությամբ: Նա կարողանում ե իր աշխատանքի ընթացքում ոգտագործել ընկերների լավագույն փորձը և շատ ե սովորում: սա ունի բազմապիսի ունակություններ՝ յերեխաների համար նրանց աշքի առաջ թղթից հետաքրքրական խաղալիքներ կարող ե պատրաստել գրավիչ հերիթներ պատմել, «Պետքուշկա» ցույց տալ, հետաքրքրական խաղեր հորինել և այլն: «Դուք ամեն բան կարողանում եք», — ասում են յերեխաները, հիացմունքով զիտելով, թե դաստիարակը վորպիսի հմտությամբ բանեցնում ե մուրճը, ամուր հանգույց անում պարանը, ինչ հաջողությամբ ծեփում ե, նկարում և այլն:

Դաստիարակն զգայուն և ուշադիր ե գեղի յերեխաները նա հասկանում ե նրանց մանկական ապրումներն ու ցանկու-

թյունները, նրանց հետ ուրախ ծիծաղում, խաղում ե, սակայն, յեր հարկավոր ե, նաև պահանջուտ ե ու հաստատակամ: Ամաչ- կոտ յերեխային, յերկոտ նորեկին նա քաջալերում ե իր ժպի- տով ու գովարանում նրան: Կամակորություն անող փոքրիկնե- րին նա հանգստացնում ե իր մեղմ տոնով և ներդրավում նրանց հետաքրքրական զբաղմունքի, խաղի մեջ:

Ահա նորեկ յերեխան, մի կողմ քաշված, նայում ե մյուս յերեխաներին ու չի համարձակվում մոտենալ, մասնակցել նը- րանց զվարճանքին: Դաստիարակը մոտենում, սիրալիր խոսում ե նրա հետ և խաղացողների շրջանը մտցնում. յերեխան, մոռանա- լով իր անհամարձակությունը, սկսում է զվարճանալ մյուսների հետ միասին:

Դաստիարակը յերեխայի՝ մանկապարտեղ հաճախելու առաջին որերի վրա մեծ ուշադրություն սկսոք ե գարճնի: Նա պետք ե յերե- խային ոգնի շուտ ընտելանալու մանկապարտեղի նրա համար նոր շրջադրությանը, ընկերներին: Դաստիարակը պետք ե նրան խաղալիքներ, նկարներ, գրքույկներ ցույց տա և ընդհանուր խաղերի մեջ ներդրավի:

Դաստիարակը գեպի յերեխաները ցուցաբերած իր ուշագիր ու սիրալիր վերաբերմունքով լավ կտրամադրի նրանց գեպի ին- քը և կընտելացնի անհրաժեշտության գեպը ու ոգնու- թյանը:

Նորեկ յերեխային քաջալերելու համար դաստիարակը կա- րող ե նրան դիմել, որինակ, հետևյալ խոսքերով. «Ի՞նչ տաք ձեռ- նոցներ ու փափուկ գլխարկ ունես, գիտես վճրտեղ պետք և պա- հես»: Այսպիսով յերեխան աստիճանաբար կոռզորի զգեստն իր տեղը կախել, կսովորի լվացվել, ինտմքով վերաբերվել գեպի խաղալիքներն ու պիտույքները:

Դաստիարակն իր պատվի գործը պետք ե համարի այն, վոր իր խմբի բոլոր յերեխաները լինեն առողջ, առույգ ու կինսու- րախ: Դաստիարակի կարևորագույն պարտականություններից մեկը յերեխաների առողջության, նրանց ֆիզիկական աճման նկատմամբ նրա հոգատարությունն ե:

Դաստիարակը պետք ե հոգ տանի, վոր յերեխաները ժա- մանակին համեղ ու վորակյալ մնունդ ստանան, ըստ հնարավո- րին բաց ողում շատ լինեն, խաղան, զվարճանան, զարգացնեն- իրենց մկանները:

Դաստիարակը յերեխաների առողջությունն ամրապնդելու

ուղղությամբ իր տարած աշխատանքը պետք ե կապի դաստիա- րակչական մյուս խնդիրների հետ և: Ահա յերեխաներն զբո- սանքի ժամանակ, խաղալով, միաժամանակ դիտում են բնու- թյունը: Անտառից ճանապարհի վրա յե զլորվում ծակծկող մի գնդիկ: Յերեխաները շրջապատում են վոզնուն և հետաքրքրու- թյամբ զննում նրան: Դաստիարակը յերեխաների հետ միասին վերհիշում ու վերաբարձրում և վոզնու մասին իրենց կարգա- ցածը:

Փողոցումն ել դաստիարակը յերեխաներին ցույց տալու բան կգտնի. ահա փայլվուն ապակիներով մեքենան, այսուղ կամուրջ ու տուն են շինում, տրակտորն ե անցնում, այնտեղ ապրանքատար ավտոմոբիլից արկղեր են փոխադրում խանութ: Յերեխաներն զգուշությամբ անցնում են փողոցը՝ ուշադիր ստու- գելով, թե արդյոք աղատ ե ձանապարհը:

Ուտելու ժամանակ սեղանի շուրջը դաստիարակը պետք ե հետեւ, վոր յերեխաները մաքուը լինեն: Փոքրիկ պատառաքաղը, մաքուը անձեռոցիկը և մյուս բոլոր առարկաները, վորոնցից ոգտվելը հաճելի յե ու հարմար, յերեխային տրամադրում են կուլտուրականության և մաքրասիրության:

Շարժական խաղերը, նշան խիելը, ցատկումները ձարպկու- թյուն են զարգացնում և միաժամանակ ընտելացնում յերեխա- ներին՝ համերաշխ խաղով, միմյանց նկատմամբ զիջող լինել և փոխադարձարար ոգնել իրար:

Դաստիարակը պետք ե ձգտի յերեխաների հետ կատարած իր աշխատանքի ընթացքում ոգտագործել այն ամեն արժեքա- վորն ու հիմնալին, վոր ստեղծվել և մեր սոցիալիստական հայ- րենիքում և վոր մատչելի յե յերեխային: Դաստիարակը հետե- վում ե հասարակական՝ քաղաքական անց ու դարձին՝ թերթեր և կարդում, թատրոն և հաճախում, դիտում և մեր հիմնալի հե- ղափոխական ֆիլմերը, հետեվում և զեղարվեստական զբակա- նությանը: Իր ստացած ապագորություններն ու գիտելիքները նա ոգտագործում ե ամեն հարմար առիթով: Դաստիարակը միշտ պատրաստ պետք ե լինի պատասխանելու յերեխայի ամեն մի հարցին:

Ահա յերեկային քնից հետո յերեխաները հոգնվում են նրանցից մեկն անսպասելի կերպով հարցնում ե. «Իսկ սահմա- նապահներն ինչ են անում հիմա»: Դրան ի պատասխան, դաս-

տիւարակը կարդացած գրքից, ժուռնալներից, զիտած կինոնը՝ կարից յերեխաներին պատկերավոր կերպով պատմում ե մի քանի հետաքրքրական եպիզոդներ. — այստեղ և նոր լնկերոջ սիրալիք ընդունելությունն ե սահմանապահների կողմից, և խիզախ մարտիկը, վար գարանակալում ե սահմանը խախտողին, և սահմանապահ խելացի շան հնարագիտությունը. Դաստիարակի պատմածները խոր տպագորություն են թողնում յերեխաների վրա. Նրանց աչքերը փայլում են, նրանք վախենում են բառ բաց թողնել. Յերեխաներից մեկը խախտում ե լուսաթյունը — «Այդպես ել հարկավոր և նրան, այն լրտեսին»:

Յերեխաները՝ դաստիարակից շատ պատմություններ կլսեն մեր լավագույն մարդկանց հերոսության, մեր հայրենիքի նվաճողների մասին. այդ բոլորի մասին նրանք կտեղեկանան նաև գրքերից, նկարներից, դիացողիտվներից:

Ահա յերեխաները նստել են նկարելու. Նրանցից վումանք պատկերում են կարմիր բանակայիններ, ուրիշները՝ պապանինականներին սաղցաղաշախ վրա. Յերեխաները աշխույժ զրուցում են. դաստիարակը մասնակցում ե նրանց զրույցին: Յերեխաների աշխատանքի մեջ նոր բովանդակություն ե հանդես գալիս. Մեկը պատկերում ե՝ թե ինչպես պապանինականները ուղիղովիր են հղում Մոսկվա, մի ուրիշի մոտ սառուցների միջից մոտենում ե փոքրիկ «Մուրմանեցը». Ահա և ծխով ու հրով բռնված թշնամու ողանակը: «Յերբ յես մեծանամ, անպայման պապանինական կդառնամ» — զմայլված շշնջում ե մի աղջիկ, կապույտ մատիտով համարձակ նրագույնելով սառուցը:

— Իսկ յես ինքնաթիւներ կշինեմ:

— Յես շատ, շատ տրակտորներ կշինեմ ու տրակտորիստ կդառնամ — յերազում են մյուսները:

Յերեխաները հաճախ ժուռնալներում, ալբոմներում դիտում են ընկերներ լինինի, Ստալինի և Վորոշիլովի նկարները և զանազան պատկերներ նրանց կյանքից, լսում են դաստիարակի պատմածները նրանց կյանքից վերցրած հերոսական եպիզոդների մասին:

Յերեխաներից յուրաքանչյուրն ուզում ե անպայման նմանվել բոլորի կողմից սիրված առաջնորդներին. Անվերջ հարցեր են տալիս սիրելի առաջնորդների կյանքի մասին, պարծենում են նրանցով:

Դաստիարակը յերեխաներին ծանոթացնում ե յերեխաների

հետ. Աժառը նա յերեխաներին կտանի պիոներական ճամբար-մինչ այդ, «Պիոներ կանչի» և «Պիոներսկայա Պրավդա»-ի նյութերի հիման վրա կպատմի նրանց, թե պիոներներն ինչպիսի ջանակաւորությամբ են սովորում, ինչպես են իրենց մայրերին տնտեսության մեջ ոգնում, ինչպես պիոներունեւուն հաջողվել ե, կարմիր վզկապը թափահարելով, կանխել գնացքի խորտակումը:

Յերեխաներին առանձնապես մեծ ուրախություն են պատճառում հեղափոխական տոնները՝ Մայիսի 1-ը, Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխության առաջդարձը, Կարմիր Բանակի որը, Մանկապարտեղում սկսվում ե տոնի նախապատրաստությունը. Դաստիարակները նոր հետաքրքրական դրբեր, նկարներ, խաղալիքներ են բերում: Յերեխաները հոկտեմբերին, մայիսի 1-ին կարմիր Բանակին նվիրված յերգեր են յերգում, լսում են դաստիարակների պատմածները, զարդարանքներ, նվերներ են պատրաստում: Յերեխաները տոնի մոտեցումը իրենց տներումն ել են զգում նրանց համար ծնողները նոր շորեր են կարում, նվերներ գնում: Տոնի մոտենալու հետ մանկապարտեղը լցվում է ուրախ իրարանցումով. յերեխաները վոզեվորված հավաքում ու զարդարում են սենյակները: Փոքրերն անգամ ոգնում են փոքրիկ գրոշակները կախել, տիկնիկներին նոր հագուստներ հացցնել, դիտում են իրենց տոնական զգեստների փոքրիկ կարմիր բանդովիկները:

Իսկ բուն տոնակատարությունն ինչպիսի տպագորություն կգործի յերեխաների վրա: Հանդիսավոր յերթն ազգային (ուկրաինական, ուզբեկական և այլն) պճնազարդ տարագներով, զվարթ պարերը, հյուրերի քաղաքացիական կոփլների մասնակցի կամ հերօսի, ստախանովականի պարզ ու հետաքրքրական պատմությունը կողնի յերեխաների մեջ սեր դաստիարակելու գեպի մեր հայրենիքը, պարծանք ու հիացմունք՝ մեր հրաշալի ինքնաթիւններով, տրակտորներով, ավտոմոբիլներով, մեր մետրոյով, վորն առաջինն ե ամերող աշխարհում, պիոներական պատաներով, զպրոցներով, մանկապարտեղներով և այլն:

Խորհրդային մանկապարտեղում դաստիարակվում են զանազան ազգությունների յերեխաներ: Նրանք ապրում են համերաշխ՝ միասին խաղում են, միասին աշխատում: Գրքերից, նկարներից, դաստիարակի պատմածներից նրանք տեղականում են, վոր Խորհրդային Միության մեջ համերաշխ կերպով ապրում

Ան զանազան ժողովուրդներ: Դաստիարակը յերեխաներին ծանոթացնում և այդ ժողովուրդների հեքիաթներին, յերգերին, պարերին: Մեր խորհրդային յերեխաները դաստիարակվում են ինտերնացիոնալ վագով:

Լավ դաստիարակն արթուն կերպով պաշտպանում և յերեխաներին խորթ ազդեցություններից, կրոնական նախապաշառութմբ ու սնոտիապաշտություններից. տակտով, սակայն համառորեն, այնպես և անում, վոր վոչ մի յերեխա չձառնակցի յեկեղեցական ծիսակատարություններին: Դա առավել ես կհաջողվի դաստիարակին, յեթե նա կենդանի կապ պահպանի ընտանիքի հետ և հմուտ կերպով ազդի նրա վրա: Դաստիարակը մատչելի ձևով բացատրում է յերեխաներին, հարկավոր գեպքում նաև մեծերին՝ կրոնական սովորությունների ու սնոտիապաշտությունների ամբողջ վնասակարությունն ու անմըտությունը:

Մանկապարտեզի խնդիրներից մեկն ել յերեխայի բնավարությունը դաստիարակելն ե: Դաստիարակը պարզ պետք և պատկերացնի, թե ինչ գծեր պետք ե դաստիարակի յերեխաների մեջ: Դաստիարակը ձգում է նրան, վոր յերեխաները մեծանան համարձակ, կազմակերպված ու ճարպիկ՝ ինչպես հերոսողաչուները, ինչպես կարմիր բանակայինները, համառ արգելքները հաղթահարելու մեջ, ազնիվ ու ճշմարտասեր:

Դաստիարակը շարունակ ու հետեղական կերպով աշխատում է ինքն իր վրա: Դաստիարակին չի հաջողվի ազատագրել յերեխային յերկյուղի դպացումից, յեթե ինքը վախենում է մթից, գորտից և այլն:

Թափթփված և փնթի դաստիարակը չի կարող յերեխաներին կարգ ու կտնոնի և մաքրության ընտելացնել: Դաստիարակը յերեխաների համար լավ որինակ պետք ե հանդիսանա: Նա չի կարող խռոտմազանց լինել. ավելի լավ ե մերժել յերեխայի խնդիրը, յեթե այն չի կարելի կատարել, քան խոստանալ ու չկատարել:

Գրավիչ պատմությունն ու գիրքը, հետաքրքրական ու բազմազան խաղերը և զբաղմունքները նպաստում են յերեխայի բնավորության կերտմանը: Նկարելու, ծեփելու, խաղալիքներ պատրաստելու ընթացքում յերեխայի մեջ զարգանում և տոկու-

նություն, նա վարժվում և հաղթահարել արգելքները և սկսած գործը հասցնել մինչև վերջը:

Խաղերի ընթացքում զարգանում են նաև յերեխաների նախաձեռնությունը, ստեղծագործությունը, ինքնուրույնությունը:

Դաստիարակը յերեխաներին սովորեցնում և ինքնուրույն լինել Յերեխաներին իրենք են սեղան պատրաստում, դաստիարակին ոգնում են պարապմունքների համար նյութեր պատրաստել, փոքրիկներին ոգնում են հագնվել, սովորում են կենդանիներին ու բույսերին ինքնուրույն խնամել: Դաստիարակը յերեխաներին ծանոթացնում ե բանվորների ու կոլտնտեսականների աշխատանքին: Յերեխաները դիտում են, թե ինչպես են աշխատում դաշտում, բանջարանոցում, թե ներկարարն ինչպես ե ներկում, ատազձագործն ինչպես ե սպոցում ու ուանգում, բանվորներն ինչպես են տուն կառուցում: Յերեխաների մեջ աստիճանաբար դաստիարակվում ե հարգանք և զարթնում ե հետաքրքրություն գեպի աշխատանքը: Նրանց մեջ ցանկություն ե առաջանում գառնալ ողաչու, շոփեր, տրակտորիստ և այլն:

Վաղ հասակից մեր յերեխաները զգում են այն հոգատարությունը, վորով շրջապատված են, և իրենք ել սովորում են ուշագերի ու հոգատար լինել գեպի մեծերն ու իրենց ընկերները

Դաստիարակը յերեխաներին աստիճանաբար սովորեցնում է թեթև ծառայություններ մատուցել՝ աթոռ առաջարկել հյուրին, զերցնել ընկած իրը, կապել փոքրիկների կողիկի կապը և առանձնապես հոգատար լինել գեպի հիվանդներն ու ծերերը: Իրենց հիվանդ ընկերություն յերեխաները հետաքրքրական նկարներ են ուղարկում, ամառը նրա համար ծագիկներ են քաղում, ուրախանում են նրա առողջանալով և, մանկապարտեզ վերադառնուց հետո, հոգատարությամբ ինամակալում են նրան:

Դաստիարակը կենդանի հետաքրքրությամբ յերեխաների հետ զրուցում է նրանց ընտանեկան կյանքի, յեղայրների, գույրերի մասին, հարցնում ե, թե ինչպես են նրանք միմյանց և իրենց մորն ոգնում: Այս բոլորը մտերմություն են ստեղծում դաստիարակի և յերեխաների միջև, ինչպես և յերեխաների մեջ հարգանք են դաստիարակում իրար հանդեպ և գեպի մեծերը: Յերեխայի բնավորությունը դաստիարակվում է վողջ առորյայի խաղերի ու զբաղմունքների, դաստիարակի հետ ունեցած խոսակցությունների, ծնողների ու յերեխաների փոխհարաբերու-

թյունների ընթացքում: Յերեխայի բնավորությունը դաստիարակելու վրա ներգործում են նաև յերգն ու յերաժշտությունը:

Դաստիարակը մեծ ուշադրություն ե դարձնում յերեխաների մտահորիզոնի ընդարձակման, նրանց խելամտության և դիտունակության զարգացման վրա: Զբոսանքների ժամանակ դաստիարակը յերեխաների ուշադրությունը դարձնում ե վերեկ տերենի, թիթեռի գույնի, ձևի վրա: առաջարկում ե հանելուկներ լուծել: Նույն նպատակով դաստիարակը յերբեմն կարող ե նաև անմիջապես չպատասխանել յերեխայի հարցին, այլ առաջարկել՝ «Ապահնաք մտածիր», կամ՝ «Հայկ դիտիր և կհասկանաս»: Դրանից շահագրգոված, յերեխան ինքնուրույն կինտոփ պատասխանը:

Յերեխաների դիտունակությունը զարգացնելու համար ընդարձակ հորիզոն ե բաց անում բնությունը: Զբոսանքի ժամանակ, բնության անկյունում կենդանիներին և բույսերը խնամելիս յերեխաները սովորում են դիտել, նրանք նկատում են ջահել, թարմ տերևների գույները, կեշու գնդիկները, ձկան գեղեցիկ շրջադարձն ակվարիումում, մայիսյան բղեղի ծանոթ թիւչքը և այլն: Այսպիսով դաստիարակը դիտողությունների, խաղերի ու զբաղմունքների միջոցով զարգացնում ե յերեխաների խելամտությունը և կռահելու ու նկատելու կարողությունը:

Յերեխաները ե' մանկապարտեզում, ե' փողոցում շատ գեղեցիկ բաների յեն հանդիպում: Բնության գեղեցկությունը, նոր շենքերն իրենց հոյակապ ուրվագծերով, տոնականորեն զարդարված փողոցը, յերածշությունը, հնչուն վոտանավորները, նկարները, քանդակները—այս բոլորն ուրախություն են պատճառում յերեխաներին, զարգացնում նրանց գեղարվեստական ճաշակը յերեխակայությունը: Սակայն այս ել ինքնարերաբար չի տեղի ունենում: Դաստիարակը պետք ե կարողանա յերեխաների ուշագրությունն ուղղել շրջապատի գեղեցկության վրա:

Յերեխաներն հիմում են գեղեցիկ առարկաներով ու բնության յերեսույթներով և արտահայտում իրենց տպավորությունները, նրանք աշխույժ պատմում են իրենց տեսածի մասին և գեմքի վրա արտահայտում այն, ինչ առանձնապես դուր ե յեկել իրենց: Հարուստ տպավորություններն ոգնում են նրանց գեղեցիկ զարգանկարներ, գույների հաջող զուգորդումներ կատարել և կավի միջոցով տալ առարկաների տարբեր ձեերը, մարդկանց ու կենդանիների շարժումը: Նրանք խորանարդներից

ձողիկներից հատակին գեղեցիկ շենքեր են կառուցում, նման այն տներին, վոր զրոսանքի ժամանակ առանձնապես դուր և յեկել իրենց:

Յերաժշտությունն ու յերգը յերեխաներին համակռում են կայտառությամբ, ուրախությամբ և ողնում են նրանց կազմակերպմանը:

Յերեխաների գեղարվեստական դաստիարակությանը նպաստում են նաև մանկապարտեզի գեղեցիկ կահավորությունը, պատերի ու կարսիքի գույների գեղեցիկ ներդաշնակությունը, կահույքի գեղեցիկ ու հարմար դասավարությունը, արտահայտիչ խաղալիքները, թարմ ծաղիկները, գեղեցիկ սարքված սեղանը, յերեխաների ու մեծերի ճաշակով հագուստը և այլն:

Դաստիարակը տարբեր ձեերով ե կազմակերպում յերեխաների խաղերն ու զբաղմունքները: Յերբեմն նա զբաղմունքն անց ե կացնում ամբողջ խմբով. այս դեպքում բոլոր յերեխաները նկարում կամ ծեփում են, կամ թե հեքիաթ են լսում, յերգում են և այլն: Մի այլ անգամ յերեխաներն անհատորեն կամ մանը խմբերով զբաղվում են ովք ինչոք ցանկանա՝ վոմանք խաղում են, ուրիշները գիրք են նայում, մի տեղ խաղալիքներ են շինում, մի այլ տեղ՝ ծեփում ու նկարում:

Դաստիարակը հոգ և տանում, վոր յերեխաների համար ամեն մի զբաղմունք հետաքրքրական լինի և դրա համար խնամքով նախապատրաստվում ե: Դաստիարակը, ապահովելով հանդիրձ զբաղմունքների բազմազանությունը, միաժամանակ հոգ ե տանում, վոր յերեխաները հարմարություն ստանան կրկնել կատարված զբաղմունքը կամ խաղը և, այդպիսով, ձեռք բերեն փորշ հմտություններ, ինչպես՝ ողտվել ներկերից, կանոնավոր ողտագործել մկրատը, հեքիաթ պատմել, վոտանավոր արտասանել և այլն:

Դաստիարակը քաջալերում ե յերեխաներին, յերբ նրանք մեծ խմբերով համերաշխ խաղում են միասին: Սակայն նա ուշադիր ե նաև այն դեպքաւմ, յերբ յերեխան խաղում, զբաղվում է առանձին: Դաստիարակն ուշադրությամբ դիտում ե յերեխաներին, ճանաչում ե նրանց առանձնահատկությունները, հակումները և գտնում յուրաքանչյուր յերեխայի մեջ լավագույն գծեր զարգացնելու ուղիները:

Դաստիարակչական աշխատանքն առանձնապես արդյունա-

վետ կլինի, յեթե մանկապարտեղն ու ընտանիքը համանման ազդեցին յերեխայի վրա:

Մանկապարտեղը ծնողներին անհրաժեշտ խորհուրդներ ու շուցումներ և տալիս, միաժամանակ հաշվի առնում նաև ընտանիքի պահանջները:

Այսպես և կառուցվում աշխատանքը մանկապարտեղում Այս բոլորը ցույց են տալիս, վոր յերեխաների հետ տարգող դաս տիարակչական աշխատանքի արդյունքներն ամենից առաջ կախված են դաստիարակից:

Այս թնդրում քիչ դեր չեն կատարում նաև մանկապարտեղի մյուս աշխատողները և, առաջին հերթին, մանկապարտեղի վաշ: Քիչը՝ Նրա հետաքրքրությունը դեպի մանկավարժական աշխատանքը, նրա փորձը, գիտությունը, ուերը դեպի յերեխաները՝ մանկապարտեղում հանգիստ ու առույգ կյանք ստեղծելու նրա հմտությունը մեծապես նպաստում են յերեխաների հետ տարգող դաստիարակչական աշխատանքի հաջողությանը:

Սիրալիր և ուշադիր հավաքարաբն ու մանկապարտեղը սիրող ու նրա մասին հոգ տանող տնտեսվարը պահպանում են մանկապարտեղի կարգավորված կյանքը:

«Զեռնարկ մանկապարտեղի դաստիարակի համար» վերնագիրը կրող ներկա ուղեցույցը պարունակում և մանկապարտեղի դաստիարակչական աշխատանքի վերաբերյալ ծրագրա—մեթոդական անհրաժեշտ ցուցումները: Այդ ցուցումների ճիշտ կատարումը կոգնի դաստիարակին, մեր հայրենիքի յերեխաներին դաստիարակել այնպես, վոր նրանք լինեն ամրակազմ ու առողջ, կողնի դաստիարակել նրանց բնավորությունը, զարգացնել նրանց ստեղծագործությունը, պատվաստել նրանց սեր դեպի մեր հարազատ յերկիրը և դեպի մյուս յերկիրների աշխատավորները:

Մանկապարտեղի ամեն մի դաստիարակ պետք է լավ ծանոթ լինի այս «Զեռնարկ»-ին, շարունակ ողովի նրանից և իր ամենուրյա աշխատանքում իսկական մանկավարժական վարպետություն ցուցաբերի:

«Զեռնարկ»-ն ունի հետեվյալ գլուխները. ա) Յերեխաների ֆիզիկական դաստիարակությունը, բ) Խաղ, գ) Նկարչությունների և այլ նյութերով զրադապունքներ, դ) Յերաժշտական դաս, տիարակություն, յե) Ծանոթացում բնությանը, զ) Խոսքի

պարզացում, ե) Մաթեմատիկական ոկզրնական պատկերացումների զարգացում:

Դրամների այս բաժանումը, սակայն, պայմանական եւ վորսվինեաւ մանկապարտեղում յերեխաների հետ տարվա ամբողջ դաստիարակչական աշխատանքը մի միանալան մանկավարժական պրոցես է, վորը կենսագործում է մանկապարտեղի դաստիարակը:

## ԳԼՈՒԽ I

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր մանկապարտեղ պետք ե իրագործի յերեխաների ճիշտ ֆիզիկական դաստիարակությունը:

Ֆիզիկական դաստիարակության հիմնական խնդիրներն են՝ ապահովել մանկան աճող որգանիզմի նորմալ զարգացումն ու ձեվագորումը, նրա ամրապնդումն ու կոփումը, դաստիարակել մանկան ճշտապահությունը (ակուրատ) և մաքրասիրությունը, կատարել զարգութեալ յերեխայի շարժումները:

Ճիշտ ֆիզիկական դաստիարակության հիմքը պետք ե կարմեն՝ նախադպրոցական հիմնարկության ամրող շրջապատի կազմակերպումը առողջապահության պահանջների համաձայն, կայուն ուժիմը, ոդի, ջրի, արեի և լույսի ճիշտ ոգտագործումը կանոնավոր սնունդը, յերեխաների կուլառուր – առողջապահական ունակությունների դաստիարակման ուղղությամբ տարվող սիստեմատիկ աշխատանքը, խաղերի և վարժությունների միջոցով յերեխաների շարժումների զարգացումը:

Մանկապարտեղի շենքը, կահույքը, խաղալիքները, պիտույքները պետք ե պահպես գերազանցապես մաքուր: Մանկապարտեղի ամբողջ շրջապատը պետք ե լինի հարմար, յերեխաների հասակին և ուժերին հարմարեցված: Մանկապարտեղի հաղամասը պետք ե լինի կանաչազարդ և բացոթյա պարագմունքների համար լավ նախապատրաստված:

Չմեռը հողամասը պետք ե հարմարեցված լինի յերեխաների ձմեռային զվարճալիքների համար:

Անհրաժեշտ ե ապահովել յերեխաների բաց ողում ֆուալու առավելացույն ժամանակամիջոցը՝ ձմեռն որական 3—4 ժամից վոչ պակաս. տարվա տաք յեղանակներին անհրաժեշտ ե յերեխաների հետ տարվող ամբողջ աշխատանքը կազմակերպել բացոթյա, պահպանելով համապատասխան պայմանները: Ապահո-

վել շենքի բավարար ողափոխումն ամբողջ տարվա ընթացքում: Մեծ ուշադրություն պետք ե նվիրել հագուստի առողջապահությանը: Հագուստը չպետք ե կաշկանդի յերեխային ու նրա շարժումները, պետք ե հարմար լինի ինքնուրույն կերպով հանվելու և հազնվելու, մատչելի՝ հեշտությամբ լվանալու և արդուկելու համար, պետք ե լինի ակուրատ և գեղեցիկ, պահպանությունը և առանց պատռվածքի:

Շատ կարևոր ե, վոր յերեխաները մանկապարտեզում յեղած ժամանակամիջոցին ունենան թեթև և հարմար վոտնամաններ:

Կանոնավոր սնունդը յերեխայի նորմալ ֆիզիկական զարգացման հիմնական պայմաններից մեկն ե հանդիսանում: Սնունդը պետք ե պարունակի յերեխայի աճման ու զարգացման համար բոլոր անհրաժեշտ նյութերը: Սնունդը պետք ե լինի գյուրամարս, համեղ, թարմ և բազմազան, բավարար քանակությամբ մրգեղեն, բանջարեղեն, կաթ պարունակող, տոսղապահորեն պատրաստված և կուլտուրական ձևով մատուցված:

Յերեխաները պետք ե սնունդ ստանան 7-9 ժամ մանկապարտեզում անցկացնելու դեպքում 3 անգամ, իսկ 12 ժամ և 24 ժամ մնալու դեպքում՝ 4 անգամ:

Ամենից ավելի մննդարար պետք ե լինի ճաշը, յերկրորդ տեղը պետք ե բոնեն նախաճաշն ու ընթրիքը, և ավելի թեթև հետմատիկը:

Առավոտյան նախաճաշի մեջ բացի մի բաժակ հեղուկից (կաթ, թեյ, սուրճ, կակաո) և բուլկուց՝ կարագով պետք ե մանի նաեւ փորեե տաք ուտելիք (խաշիլ (կաշա), մակարոն, ձվածեղի կարտոֆիլ) ու մրգեղեն՝ հատապուղներ, բանջարեղեն (հում գաղար, կաղամբ):

Մանկապարտեզը պետք ե ունենա կայուն ուժիմ, վորը պետք ե բավարար ժամանակ ապահովի խաղերի ու զբաղմունքների համար, ինչպես և նրանց կանոնավոր հաջորդականությունը, բավարար ժամանակ՝ յերեխաներին բացոթյա պահելու և ընկելու համար, վորոշված ժամանակ՝ սննդի համար:

Նախադպրոցական հասակի յերեխաները, մանավանդ փոքրերը, շուտ են հոգնում, ուստի, կարեոր ե այնպես կազմակերպել նրանց հետ տարվող աշխատանքը, վոր ապահովի խաղերի, զբաղմունքների անհրաժեշտ հաջորդականությունը և իր ժամանակին հանգստանալու հնարավորությունը:

Ճիշտ ուժիմը վոչ միայն ամբապնդում և յերեխային ֆիզիկապես, այլ և նրա մեջ կազմակերպվածություն և ձշտապահություն և դաստիարակում:

Յերեխաների ֆիզիկական դաստիարակությունը մանկապարտեղում պետք և տարվի բժշկի մշտական հսկողության ներքո:

Մանկապարտեղում յերեխայի ֆիզիկական դաստիարակության ճիշտ գրվածքի համար պատասխանատու յե մանկապարտեղի վարիչը:

Դաստիարակը պատասխանատու յե իր խմբի յերեխաների ճիշտ դաստիարակության և առողջության պահպանման համար։ Դաստիարակը պետք ե ուշադիր վերաբերմունք և հոգատարությունն ցուցաբերի յուրաքանչյուր յերեխայի նկատմամբ՝ հետեւ յերեխայի առողջական դրությանը, հոգ տանի մաքրության մասին, հետեւ, վոր յերեխան ուտի իրեն հասանելիք բաժինը, քնի նը՝ պաստավոր պայմաններ ստեղծելուն, յերեխայի մարմնի ճիշտ գիրքին՝ խաղերի և զբաղմունքների ժամանակ։

Դաստիարակը պետք ե աշխատի մշտական կոնտակտ պահպանի բժշկի հետ, խորհրդակցի նրա հետ, տեղյակ լինի յուրաքանչյուր յերեխայի ֆիզիկական զարգացման դրությանը, հայտնի բժշկին յերեխայի առողջության ամենաչնչին խանդարման մասին։

Անհրաժեշտ ե հասնել այն բանին, վոր մանկապարտեղի առողջապահական և առողջացման միջոցառությունները պաշտպանվեն և ամրապնդվեն ընտանիքում։

### ՄԱԿԱՐԱԳՈՐԾԵԶԻ ՈՐՎԱ. ՌԵԺԻՄԸ

1. Յերեխաների հավաքվելը, ազատ խաղեր, առավոտյան մարզանը (5-7 րոպե), լվացվել . . . . .	ժամը 8-9-ը
2. Նախաճաշ . . . . .	» 9,30
3. Խաղեր և զբաղմունքներ . . . . .	» 10
4. Ջրոսանք, բացովյա խաղեր . . . . .	» 10-30
5. Ճաշ . . . . .	» 12-30
6. Քւան . . . . .	» 1,30
7. Ազատ ժամ բաց ողում . . . . .	» 3,30
8. Հետճաշիկ . . . . .	» 4
9. Խաղեր և զբաղմունքներ . . . . .	» 4,30
10. Տուն գնալը . . . . .	» 5,30

Որվա ուժիմը արված ե, յելնելով այն հաշվից, վոր յերեխաները մանկապարտեղ են գալիս ժամի 8-ին։ Այստեղ, վորտեղ յերեխաները գալիս են ավելի ուշ կամ ավելի շուտ (նայած թե յերբ և սկսվում ծնողների աշխատանքը), վորոց չափով փոխվում են նշված ժամերը, պահպանելով ուժիմի հիմնական սկզբունքները, այն եւ սննդի պարբերականությունը (յուրաքանչյուր 3-3 ու կես ժամը մեկ անգամ) և սննդի վարոշակի ժամանակը, նշված ժամանակից կես ժամից վոչ ավելի տարբերությամբ, ցերեկը բաց ողում անցկացնելու տեսղությունը (3-4 ժամ), ցերեկի վաքնի տևողությունը (1 ու կես—2 ժամ), շարժական և հանգիստ խաղերի հաջորդականությունը։

Ուժիմում նշված ժամերը ցույց են տալիս յուրաքանչյուր տվյալ մոմենտի սկիզբը։ Յերեխաների հավաքը ցանկալի յե անցկացնել բացովյա։

Լվացվելը, սրբվելը, սանրվելը, հագնվելը և հանվելը, ինչպես նաև սնունդը, պետք ե կազմակերպել այնպես, վոր հերթեր չգոյանան, սպասությունը չլինեն, վոր յերեխաներն ավելի ժամանակ ունենան խաղերի և զրուանքների համար։ Վորպեսզի զբուանքին հատկացրած ժամանակը չկրծատվի և յերեխաները շատ ժամանակ չկորցնեն վերաբերությունը և կրկնակոշիկները հագնելու վրա, հագնվելը կազմակերպվում ե այնպես, վոր յերեխաների հագնվելուն ողնում և տեխաջխատակիցը։ Հագնվելու և հանվելու մոտավոր տեսղությունը ձմեռը պետք ե լինի 20-25 լուղեյից վոչ ավելի։ Այդ ժամանակամիջոցը հետզհետե կրծառվում ե այնքան, վորքան յերեխաները սովորում են ինքնուրուցն հագնվել ու հանվել։

Այն մանկապարտեղներում, վորտեղ մի քանի խմբեր ունեն հանգելու, լվացվելու մի ընդհանուր սենյակ, նրանցից ոգտվելու ժամանակը պետք ե կազմակերպել ըստ հերթականության։ Այս կապակցությամբ այս կամ այն խմբում ճաշի և զրուանքի գնալու ժամը կարող ե մի փոքր հետ կամ առաջ ընկնել, սակայն այնպես, վոր դրանից չխախտվի ուժիմի հիմնական սկզբունքը։

Նախաճաշից առաջ յեղած ազատ ժամանակը պետք ե ոգտագործել խաղերի և զբաղմունքների համար՝ յերեխաների ազատընտրությամբ։

Նախաճաշից առաջ անց ե կացվում նաև յերեխաների հարդարանքը (լվացվելը, սրբվելը, սանրվելը) և, առողջապա-

հության պահանջների պահպանումով՝ առավոտյան մարդանքը:

Նախաճաշից հետո սովորաբար անց են կացվում սահմանված զրադարձունքները: Նրանց մոտավոր տևողությունն ե՝ գործերի խմբում  $10-15$  րոպե, միջակ և բարձր խմբերում՝  $20-30$  րոպե, 7 տարեկանների խմբում՝  $25-40$  րոպե (նայած պարապմունքների բնույթին):

Զբոսանքների միջոցին ժամանակի մեծ մասը պետք է հատկացնել խաղերին: Այստեղ անհրաժեշտ է հսկ տանել, վոր զբոսանքները լինեն յերեխաների համար հետաքրքրական ու ուշագրավ, շարժուն և հանդարտ խաղերը իրար հաջորդեն, վոր յերեխաները չհոգնեն, ձմեռը չմրսեն և հաճույքով մնան զրուանքներին մինչև վերջը:

Անհրաժեշտ է հետեւել, վոր յերեխաներն զբոսանքի ժամանակ հագնված լինեն ակուրատ, հարմար և սեղոնին համեմատ: Ձմեռը բաց ողում մնալու ընդհանուր տեղողաւթյան ( $4$  ժամ) մեջ մտնում է նաև յերեխայի զբոսանքը տուն գնալուց հետո:

Յերեկվա քնից հետո սմենից հաճախ անց են կացվում ազատ խաղեր և զբազմունքներ, բայց յերեխն զբազմունքները կարող են տարվել ամրող խմբի հետ, որինակ՝ վորեվե բան պատմել, դիմում ցուցադրել, շարժուն խաղ խաղալ և այլն:

Ամառը յերեխաները վեր են կենում ժամը  $7-ին$  և, զրահամեմատ, որվա առաջին կեսի ոեժիմը  $30$  րոպեյով առաջ ե ընկնում: Գիշերային քունը կարող է մի փոքր ուշացվել համապատասխան պայմաններում, ամառը որվա ոեժիմի մեջ մացըդում են ոդային և արմեի վաննաներ, սառը ջրով լողանալ և ջրաթորում:

### ԿՈՒՏՈՒՐ—ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դաստիարակի առաջ խնդիր է զրվում ընտելացնել յերեխաներին մաքրասիրության և ակուրատության, յերեխաների մեջ դաստիարակել մաքրության և կարգապահության սեր իր շրջապատի նկատմամբ, զարգացնել յերեխաների ինքնուրույնությունն այն բանում՝ ինչ վոր իրենք կարող են կատարել:

Դրա համար պահանջվում է սիստեմատիկ դաստիարակչական աշխատանք յերեխաների հետ, մշտական զեկավարություն ու հսկողություն յուրաքանչյուր յերեխայի նկատմամբ:

Փոքրերի խմբից սկսած ղեկավարն ընտելացնում է յերեխաներին առողջապահության հիմնական պահանջների կատարմանը:

Յերեխաներին պետք է սովորեցնել ուտելուց առաջ ձեռքերը լվանալ և ընդհանրապես՝ յերը ձեռքերը վորենե չափով կեղաստվում են, նույնպես և արտաքնոցից գուրս գալուց հետո: Անհրաժեշտության չափով լվանալ յերեսը, վիզը, ականջները: Քնելուց առաջ վողողել բերանը, մաքրել ատամները փոշով (մեծերի և միջակ խմբերը), ոգտվել միայն իր սրբիչից, ակուրատ վարվել նրա հետ և միշտ կախել տեղը: Պետք է յերեխաներին սովորեցնել լվանալ վոտները քնելուց առաջ, լվացվել մինչեւ գոտին (գիշերութիւկ խմբի և ամառային աշխատանքի պայմաններում):

Դաստիարակը հետեւում է, վոր յերեխաները մաքուր լվացվեն, լավ սրբվեն: Փոքր յերեխաներին կամ նոր ընդունված յերեխային գաստիարակը հաճախ ինքն և հիշեցնելու լվացվելու մասին, ցույց ե տալիս, թե ինչպես պետք է լվացվել, սրբվել (վերցնել, բաց անել սրբիչը): Անհրաժեշտ է ոգնություն ցույց տալ յերեխային այն բանում, ինչը նա դժվարանում է ինքն անել, ինչը նա դեռ չի կարող մինչեւ վերջը լավ կատարել:

Միջակ ու մեծերի խմբում յերեխաները հետզհետե ավելի յեն ընտելանում ինքնուրույնորեն լվացվելուն՝ առանց հիշեցնելու (բայց դաստիարակի հսկողությամբ): Վորոշ գեպերում հարկավոր է լինում ոգնել նաև մեծ յերեխաներին:

Անհրաժեշտ է նույնպես սովորեցնել յերեխաներին կուլտուրական և ակուրատ ուտել՝ ճիշտ բռնել գդալը, ոգտվել պատառքաղից (պատառքաղից ոգտվելու միջակ և մեծերի խմբերը), ուտել առաջ շատապելու և լավ ծամել ուտելիքը, ուտել միայն սեղանի մոտ նստած, ոգտվել անձեռոցիկից, սեղանը վայելու գրությամբ թողնել ուտելուց հետո: Դաստիարակը պետք է նոգ տանի յուրաքանչյուր յերեխայի սեղանի մոտ նստելու և ուտե-

լու հարմարության մասին (մոտեցնել ափսեն, գավաթը, մոտիկ դնել հացամանը):

Դաստիարակը հետեւմ և յերեխաների ակուբատությանը ուտեղու ժամանակ, սովորեցնում և զգույշ վարվել պատռաքաղի հետ:

Յերեխաները մասնակցում են նախաճաշի կամ ճաշի սեղանը պատրաստելուն: Միջակ և մեծերի խմբերում հերթապահություն և սահմանվում:

Հարկավոր և, վոր յերեխաները կարողանան ճաշի և նախաճաշի սեղան պատրաստել, իմանան, թե վոր կողմից պետք ե դրված լինի դդալը, անձնոցիկը: Հարկավոր ե նաև սովորեցնել յերեխաներին՝ հոդ տանել սեղանին դրավիչ տեսք տալու մասին:

Սեղանից վեր կենալիս յերեխաները մոտեցնում են աթոռները սեղանին, ակուրատ վայր են դնում անձնոցիկները:

Յերեխաները սովորում են ինքնուրույն հագնվել ու հանգել, ակուրատ վարվել հագուստի հետ, կարդին ծալել շորերն ու կախել իրենց տեղը:

Փոքր յերեխաները դեռ մեծերի (դաստիարակի, տեխաշետակցի) զգալի սովորության կարիք են զգում:

Միաժամանակ չպետք ե ընդդիմանալ յերեխայի ձգտութերին՝ ինքնուրույն անել ինչ վոր կարող ե («ինքս կարող եմ») պետք ե սովորեցնել ինքնուրույն հանել կամ հագնել զոնե հագուստի մի մասը: Այն միջոցին, յերբ մեծերն սովում են յերեխաների մի մասին հագնվել, դաստիարակն առաջարկում ե մյուս յերեխաներին հագնվել ինքնուրույն կերպով: Սակայն դաստիարակը նրանց վրա ևս ուշադրություն ե դարձնում, հետեւ մուտքում ե, վոր յերեխաները միանգամից չվերցնեն բոլոր իրերը, այլ՝ հետզհետե (որինակ, առաջ զուլպաները, անդրավարտիքը, և հետո մնացածը), ակուրատ վարվեն նրանց հետ, ճիշտ հագնեն:

Հանվելու ժամանակ, անհրաժեշտության դեպքում, պետք ե նախ արձակել յերեխաների կոճակները, և մինչև մեծերը հանվեցնում են յերեխաների մի մասին, միւսներն սկսում են իրենք հանել իրենց շորերը և դնել իրենց տեղը:

Միջակ և մեծերի խմբերում յերեխաներն աստիճանաբար

ընտելանում են արդեն բոլորովին ինքնուրույն և արագ հագնվելուն, կոճկվելուն, կոշիկները կապելուն: Դաստիարակն ոգտագործում ե յերեխաների ոգնություննը մեկմեկու, շուրջ և տալիս և բացարարում յերեխային, թե ինչպես պետք ե ճիշտ հագնվել, ինչպես տարբերել աշխատի կոշիկը ձախից, կարգին ծալել հագնվել հագուստի մեծերի յերեխաները հագնվելու և հանգելու համար ևս զգում են մեծերի ոգնության կարիքը:

Հարկավոր և նույնպես սովորեցնել յերեխաներին՝ հետեւել իրենց հագուստի, կոշիկների մաքրությանն ու ակուրատությանը, սովորեցնել սանրվել, ոգտվել թաշկինակից, ակուրատ սովորել արտաքնոցից, հետեւել անկողնի առողջապահությանը (չհագնվել և չհանգել մահճակալի վրա, վեր կենալուց հետո հետոցել վերմակը, վորպեսզի անկողին սղափոխվի):

Դաստիարակը միշտ հոդ և տանում յերեխայի արտաքին տեսքի ակուրատության մասին, դաստիարակում և յերեխաների մեջ ուշադրություն դեպի այդ (յերեխային առաջարկում և ոգտագործել հայելին, թե ամեն ինչ կարգին ե իր մոտ, իր գոհունակությունն ե հայտնում յերեխայի մաքուր և կանոնավոր ըղութեսի առթիվ և այլն):

Յերեխաները սովորում են նույնպես կարգ ու կանոն պահպանել իրենց իրեղենների և շրջապատի նկատմամբ՝ ակուրատ հագարել խաղալիքները, նյութերը. գրքերն ու նկարները վերցնել մաքուր ձեռքով, զբաղմունքների ժամանակ ակուրատ լինել, չաղտոտել բակն ու սենյակները, շենքը մտնելիս վոտքերը սրբել, թափ տալ հագուստի վրայի ձյունը:

Դաստիարակը միշտ հետեւում ե, վոր յերեխաները վորոշ կարգ ու կանոն պահպանեն իրենց խաղալիքներն ու նյութերը պահելու գործում և ոգնում և նրանց այդ բանում: Ժամանակ առ ժամանակ յերեխաները դաստիարակի հետ միասին կարգի յերերում իրենց իրեղենները, լիանում են խաղալիքները, կարգի յեն բերում ծաղիկները, պահարանները, հտաժերկանները:

Մեծ յերեխաներն այդ գործում համապատասխան առաջադրանքներ և հանձնարարություններ են ստանում: Մեծ յերեխաների մեջ այլ ավելի գիտակից վերաբերմունք և դաստիարակվում առողջապահական կանոնները պահպանելու գործում:

Յերեխաներին կարելի յերացարել ատամերը փշանալուց զերծ պահելու համար բերանը վողողելու, ատամերը մաքրելու նշանակությունը, ձեռքերի և յեղունգների մաքրության

նշանակությունն առողջաւթյան համար, բացատրել, թե ինչու պետք է միայն լվացած մրգեղեն և բանջարեղեն ուտել, ինչու հիվանդներին պետք է առանձնացնել առողջներից, ձեռք չտալ նրանց իրերին և այլն: Յերեխաների մեջ դեպի մաքրությունը դրական վերաբերմունք դաստիարակելու համար պետք է ոգտադրծել համապատասխան նկարներ, դրքեր, վոտանավորներ, հանելուկներ, յերգեր, տիկնիկային թատրոնը և այլն, պատմել յերեխաներին պիոներների, կարմիր բանակայինների կենցաղի մասին լագերներում, ֆիզկուլտուրնիկների մասին:

Մեծ նշանակություն ունի շրջապատի և այն առարկաների գրավիչ տեսքը, վորոնցից ոգտվում ե յերեխան. յերեխային հաճելի յեմել գեղեցիկ բաժակավ, լվացվել անուշահոտ սապոնով և այլն:

Կուլտուր-առողջապահական ունակությունների դաստիարակման անհրաժեշտ պայմանն ե հանդիսանում շրջապատի մեծերի որինակը՝ նրանց ակուրատ տեսքը, առողջապահական կանոնների պահպանումը:

Զափազանց կարեոր ե որվա կայուն ոեժիմը խմբում և նրա ձիշտ կազմակերպումը: Դրանով ապահովվում ե առողջապահական պահանջների ոեկառւյար և կրկնողական կատարումը, հնարավորություն ե տալիս յերեխային կատարել այդ կանոնները հանգիստ շրջապատում, հեշտացնում ե դաստիարակի համար յուրաքանչյուր յերեխային հետեւելու գործը:

Կուլտուր-առողջապահական ունակությունների դաստիարակելու և ընդհանրապես ամրող դաստիարակչական աշխատանքում անհրաժեշտ ե համբերատար և փաղաքշական վերաբերմունք ունենալ դեպի յերեխան, խրախուսել նրա հաջողություններն ու նվաճումները, դաստիարակել յերեխայի մեջ կստահությունները դեպի ավելի լավ և ակուրատ կատարելը սովորելու ձգտումը:

Այդ գործում անհրաժեշտ ե անհատական մոտեցում ունենալ յերեխաների հանդեպ: Մի դեպքում հարկավոր ե ոգնություն, հիշեցում, հավանություն, մյուս դեպքում՝ ավելի կատեգորիկ պահանջներ:

Առանձին ուշադրություն պետք ե նվիրել մանկապարտեզը նոր ընդունված յերեխաներին:

ՅԵՐԵՒԵԱՅԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ֆիզիկական դաստիարակության ձիշտ դրվածքի պայման-

ներում մեծ տեղ պետք է հատկացված լինի յերեխայի շարժումների զարգացմանը: Առողջացնելով և ամրացնելով որդանիզմը, ֆիզկուլտուրան միևնույն ժամանակ զարգացնում ե և կատարելագործում կյանքի մեջ անհրաժեշտ հիմնական շարժումները (վագը, քայլվածք, թռիչք) և նպաստում ե յերեխաների մեջ ակտիվության, համարձակության, ձարպկության, կարգապահության գաստիարակմանը:

Ֆիզկուլտուրայի հիմնական աշխատանքի ձևը շարժական խաղերն են: Նրանք զարգացնում են յերեխայի ձարպկությունը, հնարավիտությունը և իր հիմնական շարժումներին (քայլվածքին վագքին, թռիչքին) տիրապետելու ունակությունը: Բացի այդ, խաղերի ոգնությամբ լավ ե կազմակերպվում մանկական կորեկտիվը, խաղերը դաստիարակչական մեծ նշանակություն ունեն:

Դաստիարակը խաղերը պետք ե անցկացնի աշխատյժ և ուրախ:

Իր տեսքով, շարժումների ձիշտ և հմուտ կատարմամբ նա որինակ և ծառայում յերեխաներին:

Ֆիզկուլտուրայի աշխատանքի մյուս ձևը, դա ֆիզկուլտապապմունքներն են: Հիմնականում նրանք կառուցված են խաղի վրա:

Այդ պարապմունքների մեջ են մացվում նաև կարճառեվ վարժությունները, վորոնք զարգացնում են քայլվածքը, վազքը, թռիչքը, ձեռքերի, վստերի, իրանի շարժումները և այլն:

Ֆիզկուլտուրային պարապմունքներն անց են կացվում մոտավորապես հետեւյալ կերպ. նախ պետք ե կազմակերպել մանկական կոլեկտիվը և յերեխաներին նախապատրաստիկ առաջիկա խոտի կամ վարժությունների համար: Որինակ՝ 1—2 շաբաթյուններով շարքեր կամ շրջան կազմել կարճառեվ քայլվածք նվազի կամ թմբկահարության տակ, վազք 15—20 վայրկան և այլն: Այդ շարժումները և շարքի կանգնելը կարելի յեանցկացնել վարժությունների կամ խաղերի ձևով, ինչպես «Զբոսանք» կամ «Գտիք քո գույնը» խաղերն են:

Հետո անց են կացվում այնպիսի մարզանքներ, վորոնց նպատակն ե զարգացնել և ամրացնել մկանների առանձին խմբեր և մշակել մարմնի ձիշտ կեցվածքը: Այս մարզանքների մեջ են մտնում ձեռքերի, վստերի, իրանի շարժումները:

Այդ վարժություններից հետո անց են կացվում կամ խաղ

(վաղքով, թոփչքով և մաղլցումով), կամ պար: Պարապմունքը վերջանում է քիչ շարժում պահանջող խաղով կամ դանգաղ քայլվածքով:

Պարտադիր չե, վոր պարապմունքը իր մեջ պարունակի բուլոր նշված տարրերը: Նա կարող է կազմված լինել մեկ—յերկու տեսակ վարժություններից, նայած առաջադրված նպատակին, յերեխանների հասակին և պարապմունքների տեղին, որինակ՝ ներածական քայլվածք, շրջան կազմել և վաղքով խաղ՝ «Բոնելա վաղք արջանում»:

Փոքրերի խմբում պարապմունքը անց ե կացվում 10—12 րոպե տեղողությամբ և համարյա բացառապես խաղի ձևով: Միջակ խմբում թույլատրվում է 15—20 րոպե տեղողությամբ պարապմունքներ, իսկ բարձր խմբում մինչեւ 20—25 րոպե: Պարապմունքները կարելի ե անցկացնել կամ ամբողջ խմբի հետ, կամ փոքրիկ խմբերով:

Բացի խաղերից և ֆիզկուլտ պարապմունքներից, բուլոր խմբերում (բացի փոքրերի խմբից) ցանկալի յե անցկացնել 4—5 րոպե տեղողությամբ առավոտյան մարմամարզություն բաց ողում կամ լավ ողափոխած և մաքուր շենքում: Աշխատժորեն անցկացված մարմամարզությունը լավ ե կազմակերպում յերեխաններին ու նպաստում և նրանց մեջ փորոշակի և ճշգրիտ շարժումներ մշակելու գործին:

Առավոտյան մարմամարզության մեջ են մտնում հետևյալ վարժությունները,—ներածական քայլվածք, կազմել մի քանի շարասյուներ, ձեռքերի, վոտերի, իրանի մարզանքներ, վաղք շարասյուններով (20—30 վայրկան) և հանդարտ քայլվածք:

Մեծ տեղ պետք է հատկացնել շարժական խաղերին ամենայա զբոսանքների ժամանակ:

Զմեռը կազմակերպվում է բլրակի վրայից սահնակներով սղղալը, դահուկներով ման գալը: Դահուկները տրվում են բարձր խմբի յերեխաններին 20—25 րոպեյով:

Յերեխաններին տրամադրվում են գնդակներ, ողակապեր, շատկիչներ, վորոնք ոդապորձվում են ըստ նրանց ցանկության: Խաղանյութերը հետզհետե փոխարինվում են նորերով՝ պլանի և յերեխանների պահանջների համեմատ: Դաստիարակը հետեւում է, վոր յերեխանները չողովնեն շարժումների մեջ քանակությունից և հատուկ ուշադրություն ե դարձնում թույլ յերեխաններին:

Բոլոր ֆիզկուլտ պարապմունքները պահանջում են առողջապահան պայմանների առանձնապես խիստ պահպանումը: Միանգամայն պարտադիր են՝ մաքուր, լավ ողափոխված շենքը, յերեխանների շարժումները չկաշկանդող հագուստը և վոտնամանները: Ամառը բոլոր պարապմունքները անց են կացվում բաց ողում:

Փոքրերի խումբ: Հիմնական խնդիրը փոքրերի խմբի նըկատմամբ այն ե, վոր ֆիզկուլտ պարապմունքներն ողնեն յերեխաններին տիրապետել քայլվածքին, վաղքին, թոփչքին, մագլցելուն: 3—4 տարեկան յերեխան քայլելում և վաղքում յերեխներու այնքան ել կայուն չե, հաճախ կորցնում և հավասարակըշությունը, շուտ ՚ վայր ընկնում:

Անհրաժեշտ և հնարավորություն տալ յերեխաններին սովորական պայմաններում վարժվել քայլվածքում և վաղքում:

Յերեխանների հետ դաստիարակն անց ե կացնում մի շալք խաղեր, վորոնց ընթացքում յերեխանները վարժվում են վաղելու և քայլելու մեջ փոքր խմբակներով կամ ամբողջ խմբով՝ իրարհետեկից, պահպանելով դաստիարակի ցույց տված ուղղությունը, վարժվում են վաղքի և բայլելու մեջ նաև ցրված խմբերով («Ձիաթաղ», «Թոփչքներ» «Կատուն ու մկները» և այլ խաղեր), սովորում են քայլել կամ վաղել յերկար տախտակի վրայով, վորը դրված ե գետնին կամ 10—15 սմ բարձրության վրա (տախտակի լայնությունը՝ 20—15 սմ), ցատկել գետնին ընկած առարկանների վրայից, որինակ՝ քառանկյունի կամ կլոր զերանների վրայից, գետնին ընկած սանդուխքի աստիճաններով: Խաղերն ու մարզանքները տրված սկզբին ավելի լավ ե անցկացնել փոքրաթիվ յերեխանների հետ, հետզհետե ներգրավելով ամբողջ խումբը: Բարձրությունները պետք ե մտցնել աստիճանարար, որինակ՝ քայլելու և վաղքի դեպքում դաստիարակը սկզբում ողնում ե յերեխաններին մեկմեկու հետեկց շարքի կանգնել, ինքը քայլում ե կամ վաղում առաջից, ապա առաջից գնում ե յերեխաններից մեկը: Ավելի ուշ տրվում են լրացուցիչ սահնակություններ, որինակ՝ քայլել զրոշակներով և դաստիարակի աղդանշանով զրոշակները վեր բարձրացնել իջեցնել, գնել ուսին և այլն: Բացի այդ, դաստիարակը խրախուսում ե յերեխանների ինքնուրույն խաղերը, վորոնք զարգացնում են վաղքը, քայլվածքը, հավասարակշուրությունը, վորի համար տրվում են խա-

Դեր շարժիչ — զլաններով, հողմաղացներով, ինչպես նաև սպառագործվում են բնական պայմանները՝ առվակն անցնելը, նեղ կամուրջով անցնելը, բլրակների վրա բարձրանալը, նեղ շավիդներով ման գալը և այլն:

Զմեռը պատրաստում են յերկայն ու տափակ ձնակույթաբ-  
(բարձրությունը  $15-20$  սմ, լայնությունը  $40-30$  սմ), վորոնց  
կրայով յերեխաները ման են գալիս:

Տարրեր ձևերի թոփչքները դեռևս սակավ մատչելի յեն այդ հասակում: Յերեխաները աստիճանաբար վարժվում են վեր ցատկել տեղում, ցատկել փոքրիկ բարձրությունից ցած (10—15 սմ), փոքրիկ տարածության վրա (10—15 սմ) զույգ վատով առաջ ցատկել: Ցատկումներն անց են կացվում հետեւյալ խաղերում: «Հարթ ճամփով», «Նապաստակներ», «Ծիտիկներ», «Ավտոմոբիլ» և այլն:

Φορετήկ բարձրությունից ցած թռչելու և փոքրիկ տարածության վրայից թռչելու վարժությունները ավելի լավ և անցկացնել փոքրաթիվ յերեխանների հետ։ Դաստիարակը կարող է յեղած նյութեղենից (քառանկյունի բարակ գերաններ, շրջված արկղեր) փոքրիկ բարձրություններ պատրաստել, վորոնց վրա յեն բարձրանում յերեխաններն ու այնտեղից թռչում ցած։ Կամ գետանի վրա զուգահեռ ձգվում են յերկու լարեր, միմյանցից 10—15 սմ հեռավորության վրա, և առաջարկվում ե ցանկացող ներին թռչել «առվակի» վրայից։

Մագլցելու մեջ վարժեցնելու համար հարկավոր ե յերեխա-  
ներին արամագրել ցանկապատից (բարձրությունը 1—1 մի քառ-  
մետր), փոքրիկ ամբիոնի սանդուխքներից (վորը պետք է ունե-  
նա կողքերին ամրացված ճաղեր) ոգտվելու հնարավորությաւններ:  
Յերեխաները կարող են նույնական սողալով և մագլցելով մըտ-  
նել պարանի տակ (որինակ՝ «Թուխսն ու ճուտիկը», «Չղիոչել  
դանզին» խաղերը):

Պարանի բարձրությունը պետք է լինի 40—60 սմ։  
Յերեթուները մագլցում և իջնում են մեկմեկ կամ փոքրիկ  
խմբերով, ովք ինչպես կարող ե, դաստիարակի հսկողության տակ  
կտրիք չկա այդ հասակում շարժումների ճշտությունը հետա-  
պնդել, սակայն պետք է սովորեցնել յերեխաներին իջնել  
սանդուխքի կողերի ձողերով սինչև վերջին ծայրը, առանց  
ցած թռչելու կամ ձեռքերով կախվելու։ Փոքր խմբի յերեխանե-

բիւհետ կարելի յե անցկացնել մի քանի խաղեր գնդակով, սրինակ՝ զլորել մեծ գնդակ ( $20-15$  սմ տրամագծով) դաստիարակից դեպի յերեխաները և ընդհակառակը, նաև յերեխաների մեջև, գլորելով անցկացնել գնդակը առարկաների միջով (որինակ, նստարաններից, կառուցողական նյութերից և այլ առարկաներից կառուցված կամարների),  $1\frac{1}{2}$  մետր հեռավորությունից խփել գնդակը գետնին կամ նետել առաջ և վազել յետեսից, բռնել դաստիարակի նետած գնդակը և յետ նետել այն (տարածությունը  $1-1$  ու կես մետր):

Գնդակով վարժություններն ու խաղերն ավելի լավ և անց-  
կացնել յերեխանների փոքրիկ խմբերի հետ, վորպեսզի յերեխա-  
նները յերկար հերթի չսպասեն:

Գնդակներ պետք ե լինեն յուրաքանչյուր խմբում, վորպես  
ով յերեխաներն աղատ կարողանան նըանցով խաղալ:

Դաստիարակը խաղում է յերեխաների հետ, ցույց է տալիս, թե ինչպես ավելի հարմար է նետել և բռնել կամ գլուրել գնդակը:

Խաղերում և պարերում կարելի յէ տալ ձեռքերի, վոտների, իբանի վարժություններ, որինակ, բարձրացնել ձեռքերը, կողքից ցած իջեցնել («Թոչնիկներ»), շարժել արմուկներից ծալած ձեռքերը («Գնացք»), վատները բարձր ու ցած անել («Զիփախաղ»), վատները հերթով շարժել դեպի առաջ՝ պարելու ժամանակ, աթոփին նստած տեղից բարձրացնել հատակից փոքրիկ դրոշակը և թափառաբեկ այն գլխավերերը:

Խաղերում յերեխաները սովորում են հույնակն շարք, կանգնել մեկ-մեկու յետեղից (ով ում լետեղից ուղի) քայլել միմյանց յետեղից, հիշել իր տեղը և այն դունել քայլելուց և վազքից հետո, գաստիարակի ոգնությամբ շրջան կազմել:

Շըջան կտղմելն անց է կացվում, որինակ, հետեւյալ խաղերում. «Փամփուշտ», «Վանյան ման և գալիս», «Ծան շուրջն եմ ման գալիս»; Միմյանց հետմից քայլելն անց է կացվում «Գնացք», «Տրամվայ» խաղերում. Իր տեղը գտնելը պահանջվում է մի քանի խաղերում, ինչպես՝ «Գտիր քո տունը» և այլն:

Միջակ խմբի յերեխաները նույնպես վարժվում են քայլելու, վաղքի, թոփչքի, մազլցելու, գնդակ նետելու և բռնելու մեջ առավելապես շարժական խաղերում («Կատուն ու մկները», «Հավերն ու աքաղաքը», «Թռչնիկներ», «Գնացք» և այլն), բայց շարժումները բարդանում են՝ ավելի մեծ տարածություն և տրվում վաղքի համար, վաղքի մեջ մացվում և մեկմեկու բռնելը, խաղախմբերի բաժանվելը և այլն. ավելացվում են սանձ, ավելի նեղ տախտակներ և այլն. Զմեռը յերեխաները մտն են գալիս յերկար ու հեղ ձնակույտերի վրայով, սղում են փոքրիկ սառուցե շավիղներով (1—1 ու կես մետր յերկարության), բացի դաստիարակն ավելի մեծ ուշադրություն և դարձնում շարայդ, դաստիարակն ավելի մեծ ուշադրություն և դարձնում շարժումների ճշտությանը: Այս խմբում անց են կացվում նաև հատուկ վարժություններ:

Մարզվելով քայլելու և վաղքի մեջ՝ յերեխաները սովորում են քայլել ուղիղ, առանց զլութը կախելու, որինակ, «Պիոներները զրոյականիք» խաղում քայլել տեղում և դաստիարակի տված նշերը զբանանքի» խաղում քայլել տեղում և դաստիարակի տված նշանով առաջ շարժվել, վաղել մեկմեկու յետեղից սյունաշարով, թեթև, առանց աղմուկի վաղել յերկուսով («Զիերը յերասանակ-թեթև, առանց աղմուկի վաղել յերկուսով կարող լինեակող խաղեներով» խաղում), բռնել մեկմեկու՝ վաղք պարունակող խաղեներով, մասն գալ գետնին ընկած կամ 10-15 սմ բարձրությամբ ըում, մասն գալ գետնին ընկած կամ 10-15 սմ բարձրությամբ (25-20 սմ տրամագծով), մասն գալ գետնին 20-30 վերանի վրայով (25-20 սմ տրամագծով), մասն գալ գետնին 20-30 սմ բարձրության վրա դրված տախտակի վրայով (15-10 սմ լայնությամբ):

Վաղքի ժամանակ բերանը փակ պետք և լինի, պետք և սովորենել յերեխաներին շնչել քըով:

Թոփչքը յերեխաների շարժումների սիրած տեսակն է: Այդ խմբի յերեխաները ցած են թոշում փոքր բարձրությունից (20 մետրի), թեթև խփելով վոտները գետնին (մատների վրա). Դրա համար կարելի յե ոգտագործել հողաթմբերն ու ձնակույտերը, որին թոփչքին ու կոտուն» և այլ խաղերում, վեր են ցատկում նաև, «Ծիփեկներն ու կոտուն» և այլ խաղերում, վեր են ցատկում նաև, «Հջեցրու զանգալորեկ առարկայի համար (որինակ, «Հջեցրու զանգալորեկ»), թոշում են կանգնած տեղից դեպի առաջ (յերկարության կը), թոշում են կանգնած տեղից դեպի առաջ (յերկարության 40-60 սմ) և բարձրության թոփչք (15-20 սմ. բարձրության) լարի վրայից:

Մազլցումն անց և կացվում ինչպես յերեխաների ազատ

խաղերում, նույնպես և կանոններով խաղերում, որինակ, «Աղաման գայլից», «Կատվի ձագերն ու շան լակոտները»: Յերեխաները սովորում են բարձրանալ  $1\frac{1}{2}$ ,  $1\frac{1}{4}$  մետր բարձրության ցանկապատի վրա և ցած իջնել, անցնել ցանկապատի ամենացածր ձողի և 50—40 սմ բարձրության վրա ձգված պարանի տակով:

Դնդակը յերեխաների սիրած խաղալիքներից մեկն է: Յերեխաներն սովորում են նըանից իրենց աղաման ժամանակ, և բացի այդ դաստիարակը յերեխաների հետ գնդակով մի շարք խաղեր և վարժություններ և անց կացնում, որինակ, գլուխ գնդակը կամ զունդը մի շարք առարկաների՝ կեգիկի, խորանարդների կպցնենու համար. գնդակը նետել դաստիարակից յերեխային և ընդհակառակ ավելացնելով տարածությունը մինչև  $1\frac{1}{4}$ -2 մետր և ավելի: Դետնին թփել մեծ գնդակը և բռնել այն յերկու ձեռքով: Դնդակը և այլ առարկաներ նետելու մեջ վարժվելու համար յերեխաները կարող են աջ ու ձափի ձեռքով նետել ավաղով կամ սիսեռով լիքը պարկեր (150—200 գրամ ծանրությամբ), սոճու կոներ, գնդակներ խփել խոշոր նշանի (1 մետր լայնությամբ) 1—2 մետր հետավորությունից աջ ձեռքով և  $1\frac{1}{2}$  մետր՝ ձափի ձեռքով: Դնդակը նշանին խփելու ժամանակ դաստիարակն ու շարժություն և դարձնում յերեխայի ճիշտ կեցվածքին:

Գնդակ գլուխելու համար պետք և ընտրել հարթ մակերես, առարկաները դաստիարակ միմյանցից 5—10 սմ հեռավորության վրա:

Այդ հասակում յերեխան համեմատաբար ավելի լավ և ափրանքեառ իր շարժումներին, սակայն շարժումների մեջ ճշտություն նրանից դեռևս չի կարելի պահանջել: Այդ շարժումները ճշտելու համար արվում են ձեռքերի, վոտների և իրանի վարժությունները: Այդ վարժություններն անց են կացվում խաղերում, առավտյան մարմարագության ժամանակ և ֆիզկուլտ պարագմունքներին:

Վարժությունները տրվում են պատկերավոր ձեռվ՝ յերեխաները պատկերում են գնացքի, թռչունի շարժումը (ձեռքերի շարժում), ավտոյի շինը ոդ լցնելու շարժումը (իրանը կոացնելը) և այլն:

Յերեխաները վարժվում են գոչ բարդ շարքեր կազմելու և վերակազմելու մեջ՝ քայլել սյունաշարով ուղիղ իրար հետեւից, կարողանալ քայլել վորպես առաջատար, կանգ առնել ըստ ազդա-

նշանի, շուռ գալ այս ու այն կողմ սյունաշարում կանգնած տեղում, սյունաշարը վերածել զույգերի:

Գետք և սովորեցնել յերեխաներին սյունաշարով քայլելու ժամանակ լավագույն կերպով ոդտագործել խաղի հրապարակը քայլել հրապարակի յերեխով, սենյակների պատերի տակով: Առաջատարը նշանակվում է դաստիարակի կողմից: Այս ու այն կողմ դասնալը սյունաշարում միջակ խմբի յերեխաների հետ պետք է կատարել վոչ թե քայլելու ժամանակ, այլ կանգնած տեղում: Դաստիարակի ցուցումով յերեխաները դառնում են այնպես, վոր ամենավերջում կանգնած յերեխան դառնում և առաջատար:

Չույդ կանգնելը հետզինետե բարդացվում է: Սկզբներում յերեխաները զույդ են կանգնում, այլ ուժ հետ ուղում ե, հետո պետք է սովորեն սյունաշարից զույգեր կաղմել կողքին կանգնած ընկերոջ հետ:

Այդ բոլոր վարժությունները կարելի յե անցկացնել խաղի ձևով («Պատրաստվել զրուանքի», «Դատիր քո զույգը» և այլն):

### ՄԵԾԵՐԻ ԽՈՒՄԲԸ

Մեծերի խմբում պահանջները շարժումների կատարման նկատմամբ ավելանում են. այդ պատճառով անհրաժեշտ է յերեխն անցկացնել վարժություններ ըստ առանձին տեսակի շարժումների:

Քայլվածք, վաղք, հավասարակշռություն:

Քայլել փոփոխելով ուղղությունը դաստիարակի ցուցումներով:

Քայլել շրջանի շուրջը:

Քայլել վոտաթաթերի վրա:

Բանել մեկ-մեկու՝ վաղք պարունակող խաղերում (որինակ «Փախստականներ» խաղում):

Քայլել զերանի կամ 10 սմ լայնություն ունեցող և 30—40 սմ բարձրության վրա ուղիղ կամ թեք գրված տախտակի վրայով (փորի մի ծայրը բարձրացրած և 20—30 սմ):

Քայլվածքի ժամանակ դաստիարակն ուշադրություն է դարձնում, վոր յերեխաներն ուղիղ պահեն իրենց մեջքը, նայեն ուղիղ դեպի առաջ, չկուցնեն զլուխները, ազատ շարժեն ձեռքե-

քը և ազատ փոխեն վոտները: Հավասարակշռության վարժություններն անց են կացվում առավելապես «Գնացք», «Գնանք զբոսանքի» և այլ խաղերում:

Այս խմբում ու շաղրություն և դարձվում քայլվածքի վորաշակինության, վաղքի թեթեության վրա: Հավասարակշռության ավ մարզանք և համարվում դահուկներով ման դալը, սառած շաղիներով սղղալը:

### ԹՐԻՉՔՆԵՐ

Թուչկոտել մի վոտի վրա: Բարձրության թոփչք և թոփչք վաղքի թափով 30—40 սմ բարձրության պարանի վրայից:

Յերկարության թոփչք 60—70 սմ տարածությամբ (գետնից պոկվելով յերկու վոտով մի անգամից):

Թոփչքի բոլոր տեսակներում դաստիարակը պետք է հետեւ վար վայրեջքը յերեխաները թեթև կատարեն, այսինքն թոփչքից հետո վայրեջքի ժամանակ վոտները մի փոքր ծալեն ծնկներում և իջնեն վատների մատների վրա և վոչ թե ամրող թաթի վրա թոփչքները կարելի յե անցկացնել այնպիսի խաղերում, ինչպես «Գայլը փոսում», «Թիթեռներ վրասալը», «Առվակը», «Աղվեսը հավաքնումը», նաև մարզանքների ձևով, որինակ յերեխաները թոչում են մեկը մյուսի հետեւից մեկ-մեկ: Պարանի վրայից թոչելու դեպքում դաստիարակը պետք է հետեւից, վոր յերեխաները չափից դուրս շատ թոփչքներ չկատարեն: Կարելի չկա յերեխաներին 5—6 անգամից ավելի լայնության և յերկարության թը-ափչք տալ:

### ՄԱԳԼՅՈՒՄ

Մագլցել և իջնել 30—40 սմ բարձրություն ունեցող ցանկապատից: Պետք է ուշադրություն դարձնել շարժումների ներկաշնակությանը և մագլցման ձևերի կիրառմանը, վորպեսզի յերեխաները կես ձանապարհից ցած չթոչեն, ձեռքերով չկախվեն:

Կարելի յե ոգտագործել, որինակ, հետեւյալ խաղերը. «Հըր-չենաշները», «Կապիկներ վրասալը», «Թոչունների չուն»:

### ՆԵՏԵԼԸ

Վեր նետել գնդակն ու բոնել: Գնդակը մեկ-մեկու նետել ու բոնել (տարածությունը 1½—2 մետր): Նետել հեռու աջ և

ձախ ձեռքով 200—250 դրամ ծանրությամբ տոպրակներ կամ ձնագնդեր՝ 4—8 մետր տարածության վրա:

Ավազով լի տոպրակներով, գնդակներով, ձնագնդերով խփել նշանին (1-մետր տրամագծով) աջ ձեռքով 2—2½ մետր, իսկ ձախ ձեռքով 1½—2 մետր հեռավորությամբ: Գնդակը և այլ խողալիքները նետելու և բռնելու ժամանակ այս խմբում պետք ե ավելի ուշադրություն դարձնել մարմնի ճիշտ կեցվածքի վրա, նաև նետման ճարպկության, դիպուկության վրա: Նետելը պետք ե սկսել հեռու նետելու վարժությունից, վորովհետև այն ավելի հեշտ ե, քան թե նշանին խփելը:

Նետելու համար տոպրակները պատրաստվում են ամուր կտորից և լցվում են սիսեռով կտմ ավազով: Հեռու նետելու վարժությունն անց ե կացվում փոքրիկ խմբերով, հերթով: Այդ վարժությունները կարելի յե անցկացնել նաև խաղերում, որինակ «Խփիր և վայր գցիր գնդակը», «Ճիշտ նշան բռնիր», «Գաղանակները և գորսորդները» և այլն:

Անհրաժեշտ ե յերեխաններին ցույց տալ թե ինչպես պետք ե նշանին խփել, ինչպես ճիշտ թափահարել ձեռքը և թեքել իրանը:

### ՉԵՌՔԵՐԻ, ՎՈՏՆԵՐԻ ՑԵՎ ԻՐԱՆԻ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բացի այն վարժություններից, վորոնք ցույց են տրված առավտայան մարզանքի համար, կարելի յե անցկացնել նաև միշտաք այլ վարժություններ ինչպես առարկաներով, նույնպես և առանց առարկանների: Զեռքերը վեր բարձրացնել և իջեցնել չատակին պառկած տեղից բարձրանալ պարանի ոգնությամբ և նորից պառկել: Վեր բարձրացնել ողը, նայել նրան: Մտնել ողի մեջ և գուրս դալ:

Իջեցնել գետնի վրա վորոնե առարկա՝ փոքրիկ դրոշակ, պարան, ձեռնափայտ և այլն և կրկին բարձրացնել այն, աշխատելով այդ անել առանց ծնկները ծալելու:

Դաստիարակը նախ ցույց ե տալիս շարժումը, ապա նույնը կատարում ե յերեխանների հետ միասին, ուշադրություն դարձնելով վարժությունների կատարման ճշտության վրա:

### ՇԱՐՔ ԿԱԶՄՆԵԼ ՈՒ ՎԵՐԱԿԱԶՄՆԵԼ

Շարք կազմել մի քանի սյունաշարով: Քայլել տեղում, վորից հետո անցնել առաջընթաց քայլվածքի: Վերակազմել սյուն

նաշաբը գույզերի և ընդհակառակը՝ զույգերից կազմել մեկ սյունաշար՝ տեղում կամ քայլվածքի ժամանակ: Թառնալ աջ, ձախ կամ հետ սյունաշարով տեղում և քայլվելու:

Սյունաշարով քայլելու ժամանակ յերեխանները բաժանվում են 6—8 հոգուց կազմված սյունաշարերի, սյունաշարերի առաջատարները պետք ե միշտ փոխվեն: Մի կողմ կամ հետ դառնալու համար ցույց ե տրվում այն առարկան, վորի կողմը պետք ե համար ցույց ե տրվում այն առարկան, որինակ՝ «գարձեք աջ՝ դեպի պատը» կամ «գարձեք հետ պատը»:

### ՅՈԹ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ԽՈՒՄՔ

#### ՔԱՅԼՎԱԾՔ, ՎԱԶՔ, ՀԱՎԱՍԱՐԱԿԵՌՈՒԹՅՈՒՆ

Վարոշակի քայլվածք ձեռքերի և վատների շարժությունները գորոշակի քայլվածք գոտների թաթերի վրա առանց գաշնակությամբ: Քայլվածք վոտների թաթերի վրա առանց ծնկները ծալելու: Ման գալ շվեդական նստարանի ձողի վրայով հորիզոնական սանդուխքով՝ դրված 20—40 սմ բարձրության հորիզոնական սանդուխքով:

Վրա կապ վազր:

Վազր գույզերով, յեռյակներով:

Վազր ընդհատումով:

Կրապովում են խաղեր մրցման տարրերով՝ վազք արագության մըցումով, ինչպես որինակ՝ «Ռ'վ շուտ ողակից անցնելով թյան մըցումով, թյան մըցնելով»: Բարդանում են միմէկհամնի դրոշակին», «Փոխիր դրոշակը»: Բարդանում են յանց բռնելու ձևերն ու միջոցները, որինակ՝ մեկին բռնում են յանց բռնելու յերեքով, փոքր խմբակներով և ամբողջ խմբով, ինչյուներումով, յերեքով, փոքր խմբակներով և ամբողջ խմբով, ինչյուներումով, «Յեղիներու վորսալը», «Գաղանին շրջապատելը» և այլ խաղեր:

### Թ Ա Ի Զ Ք Ն Ե Բ

Բարձրության թոփքներ (40—50 սմ) պարանի վրայից վազքի թափով: Յերկարության թոփքներ՝ կանգնած տեղից (50—70 սմ), գետնից պոկվելով մի վոտքի հպումով:

Կանգնած տեղում պարան ցատկել: Խաղեր՝ թոփքի ապահովակներով՝ «Նապաստակները բանջարանոցում», «Աղվեսը բեր տեսակներով՝ «Նապաստակները բանջարանոցում», «Փորտերն ու ձկնիուլը» և այլն: հավաքնում», «Քայլը փոսում», «Փորտերն ու ձկնիուլը» և այլն:

Դաստիարակը յերեխանների ուշադրությունն ե դարձնում շարժումների վորակի վրա:

## ԳՆԴԱԿ ՆԵՏԵԼՆ ՈՒ ԲՌԱՆԵԼԸ

Խիել փոքրիկ գնդակը (6—8 սմ. տրամագծով) հատակին և բռնել մեկ, յերկու ձեռքով:

Դեպի վեր նետել մեծ, միջակ և փոքր գնդակը և բռնել այն յերկու ձեռքով:

Մեկմեկու նետել գնդակը՝ շրջան կամ յերկու շարք կազմած (2 ու կես—3 մետր հեռավորությամբ):

Նետել գնդակը ցանցի մյուս կողմը:

Նետել 200—250 գրամ ծանրություն ունեցող տոպրակները 6—10 մետր հեռավորությամբ աջ ձեռքով և 2—6 մետր ձախ ձեռքով:

Յերբ յերեխաները կսովորեն գնդակով կամ պարկով նշանին խիել, կարող են անցկացվել այնպիսի խաղեր, ինչպես որինակ՝ «Հավ նշան բռնիք», «Փազաններն ու վորսորդը», «Փախիր շրջանից», «Բոնելախաղ գնդակով»:

## Մ Ա Գ Լ Ց ՈՒՄ

Վարժությունները նույն են, ինչ վոր մեծերի խմբում, բայց մտցվում են բարդություններ, որինակ՝ բարձրանալ աշտարակ (վիշկա)՝ վայր բերել դրոշակը, ցած գցել այն և իջնել. Մազլցումը կարելի յե անցկացնել վոչ միան խաղերում, այլ և վարժությունների ձեռվ, վորսվեան հաճախ տարվելով խաղի բովանդակությամբ, յերեխաններն ուշազրություն չեն դարձնում կատարման վարակին:

Խաղեր՝ «Կատվի ձագերն ու շահ լակոտները», Թուչունների չվելը, «Մեղուներն ու արջի քոթոթները» և այլն:

ԶԵՐՔԵՐԻ, ՎՈՏՆԵՐԻ ԵԵՎ, ԻՐԱՆԻ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առավոտյան մարզանքից բացի կարելի յե անցկացնել հետեւյալ ինչպես իրերով, նույնպես և առանց իրերի վարժությունները, որինակ՝ վարժություն դրոշակներով, պարանով, փայտերով, ողերով, փայտը բարձրացնել վեր ու իջեցնել ցած (նըստած և կանգնած վիճակում), փայտը ուսերի յետե պահած մի քանի անգամ կոանալ առաջ կամ կողքի և ուղղվել. փայտը ուսերի յետե պահած դարձնել իրանը, անցնել փայտի վրայից նախ աջ, ապա ձախ վոտով, վորի հետեանքով փայտը կլինի մեջքի յետե:

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կազմել մեկ կամ յերկու սյունաշար դաստիարակի ցույց տված տեղում քայլելուց կամ վաղելուց հետո:

Դառնալ աջ, ձախ ու հետ, առանց նշելու հարկավոր ռւդրությամբ գտնվող առարկաները:

Զույգերից վերակազմել շրջան:

Քայլել շրջանի շուրջը առանց իրար ձեռքից բռնելու:

Քայլել հետադարձ (առաջատարը վորոշ տեղից ոկտում և շարժվել հակառակ ուղղությամբ):

Քայլել ոձաձե, առարկաների միջով:

Բացի սրանցից կրկնվում են նաև նախորդ խմբերի վարժությունները:

Մի շարք կազմել շարասյուներից մեկմեկ դառնալու միջոցավ:

Ման գալ դահուկներով (6—7 աարեկան):

Դաստիարակը ցուցումներ ե տալիս՝ ինչպես հազնել գահուկները, ման գալու ժամանակ հետեւում ե, վոր յերեխանները դահուկները ճիշտ դնեն (իրար զուգահեռ):

Դաստիարակը բոլոր ցուցումների հետ միաժամանակ ինքը ցույց ե տալիս դահուկներով ման գալու ձեկը (քայլ, վատների և ձեռքերի շարժում քայլելու ժամանակ, տեղում և ընթացքում, հետ դահուկ):

፭፻፲፻ II

100

Նախադպրոցական յերեխայի կյանքում ամենամեծ տեղը  
բռնում է խաղը։ Խափի դաստիարակչական նշանակությունը  
հսկայական է:

Խաղը հրապուրում և զրափում և յերեխային: Զանազան խաղերի ընթացքում դաստիարակը զարգացնում և յերեխաների համարձակությունը, ճարտարամտությունը, տոկունությունը, սերը միեր հայրենիքի և նրա լավագույն մարդկանց հանդեպ: Խաղի ընթացքում զարգանում են յերեխաների հետաքրքրությունը, հարցասիրությունը, հիշողությունը, ուշադրությունը, լեզվական ունակությունները, խաղը նպաստում և յերեխայի բազմակողմանի զարգացմանը:

**ՄԵԾ Ե խաղի դերը յերեվակայության դարպացման գործություն:**

Աբտացոլելով՝ շրջապատող կյանքի տալավորություններ՝ յերեխաները խաղի մեջ հնարյում են շատ հետաքրքրական մոմենտներ։ Որինակ՝ պետք է տիկնիկների համար կազմակերպել ուժախ «Կիխո», ինչպես «խոկական պարագյուտիստ»՝ թոշել «ավառնակից» կամ «սառույցների վրայից վերցնել պատճենականներին»։ Այսպիսի խաղերը դարձացնում են յերեխաների ստեղծագործական ձևոներեցությունը, խելամտությունը, ինքնուրույնությունը։

Յերեխաները ստվորում են համերաշխ խաղալ, միատեղ գտնել դժվարություններից դուրս գալու յելքը, ոգնել միմյանց:

Խաղի մեջ իրենց բուռն արտահայտությունն են գտնում՝ նույնպես և մանկական կենսուրախությունը, աշխուժությունը, արագաշարժությունը, վոր շատ կարենը և յերեխայի առողջության, նրա Փիդիկական զարդացման համար:

Յերեխաների խաղերը պահանջում են դաստիարակի հսկությունը:

զությունն ու գեկավարությունը: Խաղի մեջ լրիվ և ցայտուն կերպով դրսերվում են յերեխաների հետաքրքրությունները, նրանց ապրումները, զարգացման մակարդակը: Խաղեր դիտելը ոգնում է դաստիարակին՝ ճանաչել յուրաքանչյուր յերեխայի, գոտնել նրա նկատմամբ ճիշտ մոտեցում:

Յերեխաների խաղերը շատ բազմագան են: Մանկապարենքում մեծ տեղ են գրավում այն խաղերը, վորոնք ստեղծում են իրենք յերեխաները (ստեղծագործական խաղեր): Բացի զրանից անց են կացվում կանոններով հետաքրքրական շատ խաղեր: Առաջին և յերկրորդ տեսակի խաղերը սերտ կապված են միւնանց հետ:

Ստեղծագործական խաղերում յերեխաները պատկերում են այն, ինչ վար տեսնում են, ինչի մասին նրանց համար կարդում ու պատմում են, ինչը գրավում է նրանց ուշադրությունը, շարժում ճետաքրբությունը: Նրանք «յերկաթուղի» յեն կառուցում, խնամում են իրենց «կոլտնտեսային նախիրը», «թռչում են ուղանավով», զբաղվում են իրենց «յերեխաների» տիկնիկների հետ և այլն:

Սաեղծագործական խաղերի մեջ առանձնապես ցայտուն կերպով ե զարդանում յերեխաների յերեխակայությունը (Փանտադիան):

Յերեխաները վոչ թե ընդորինակում են կյանքը, այլ պատ-  
կերում են այն ըստ իրենց հասկացողության, խաղի մեջ շատ  
հնարքներ են մտցնում և իրենց վառ յերեակայության շնոր-  
հիվ հեշտությամբ մտնում են տարրեր դերերի մեջ, հնարքում  
են իրենց խաղալիքների ամենաարագմազան կիրառում։ Աթոռին-  
ոստելով, յերեխան կարող է իրեն յերեակայել յերբեմն վոր-  
պես շոֆեր՝ ավտոմեքենայի վրա, յերբեմն ել ձի հեծած հեծելա-  
պորային։ Միենույն ձողը կարող է ծառայել և վորպես ձի, և  
վորպես հրացան, և վորպես ձուկ վորսալու կարթ։

Յերբեմն խաղերը լինում են առանց սյուժետի, որի մակ յա-  
րեխաները վազում, թոշկոտում են, գնդակներով, գլաններով  
թագում են, նետեր են արձակում, տիկնիկներ, աշտարակ են գա-  
սավորում, կառուցում, խաղալիքներով զգարձանում, միաժամա-  
նակ կատակում ու ծիծաղում:

Խաղերի զեկավարության մեջ չպետք է լինեն մեթոդական մոռեցման ստանդարտ ձևեր: Յերեխաներին դիտելը, նրանց խաղերի ուշադիր ուսումնասիրությունը ոգնում է դաստիարակին:

ավելի լավ զեկավարել յերեխաների խաղերը, լրիվ պահպանելով  
խաղերի ազատ, վոչ հարկադիր բնույթը:

Խաղերի բովանդակությունը, նրանց բազմազանությունը  
կաթված և դաստիարակչական աշխատանքից, յերեխաների ըս-  
տացած տպավորություններից: Դաստիարակը կազմակերպում է  
շրջապատի կյանքի դիտումը, յերեխաներին պատմում և հե-  
քիաթներ, պատմվածքներ, ցույց ե տալիս գեղարվեստական նը-  
կարներ և այլն ու, այսպիսով, իր ազգեցությունն ե թողնում յե-  
րեխաների խաղերի բովանդակության և բազմազանության վրա:

Դաստիարակը պաշտպանում ե և դարձացնում հետաքրքրա-  
կան և իրենց բովանդակությամբ դաստիարակչական արժեք ու-  
նեցող խաղերի սյուժեները: Նա ամեն կերպ խրախուսում է  
յերեխաների ձեռներեցությունը, մտացածինը, փանտազիան, սպ-  
ում և իրականացնել նրանց մտահղացումները: Յերբեմն  
պահանջվում է յերեխային հիշեցնել այն մասին, ինչ  
վոր նու տեսել ե ու լսել, զարկ տալ նրա յերեխակայությանը,  
տալ խաղերի ծավալման համար անհրաժեշտ ուրիշ նոր խաղա-  
լիքներ, առարկաներ և այլն:

Յերբեմն նույն բովանդակությամբ խաղը շարունակվում է  
մի քանի որ, դաստիարակն ոգնում է զարգացնել խաղը՝ դարձ-  
նելով այն հետղետե ավելի հետաքրքրական:

Յերբեմն, գդվարություններից յելք չգտնելու պատճառով,  
հետաքրքրական խաղը ձախողվում է: Յերեխաների հիասթափու-  
թյան առաջն առնելու համար դաստիարակը յերբեմն ինքն և  
կատարում յերեխաների մտահղացումը, ինչպես որինակ, մի  
վորեն բան բարձր տեղից կախել կամ լավ ամրացնել, մի վորեն  
իր պատրաստել և այլն: Յերբեմն դաստիարակն ինքն ել մաս-  
նակից և դառնում խաղին, սակայն ամենեին հարկավոր չե միշտ  
խաղալ յերեխաների հետ:

Դաստիարակը վասակար խաղեր չպետք ե թույլ տա. որի-  
նակ՝ «սպիտակներ», «փաշխատներ», «հարբեցողներ» և այլն:  
Այդպիսի գեղքերում անհրաժեշտ ե յերեխաներին ցույց տալ  
իր բացատական վերաբերմունքը խաղերում պատկերվող այդ  
ժարդկանց և յերևույթների նկատմամբ ու խաղին տալ ճիշտ  
ուղղություն: Յերբեմն հարկավոր ե կիրառել նաև բացարձակ  
արգելք, բացատրելով յերեխաներին, թե ինչու չի կարելի այդ-  
պես խաղալ:

Վորոշ խաղեր կապված են շինանյութերի, ավագի, ձյունի

հետ: Շատ կարեոր ե ապահովել շենքերը պահպանելու հնարա-  
վորությունները, վորպեսզի յերեխաները կարսղանան կատարելա-  
գործել նրանց և իրենց խաղալիքներով խաղալ նըսնց մեջ: Դրա  
համար սենյակում և հողամասում պետք ե հատկացնել հարմար  
տեղ, վորտեղ կարելի լինի թսղնել յերեխաների կառուցումները,  
տեղ, վորտեղ կարելի լինի թսղնել յերեխաների կառուցումները,  
վորպեսզի նրանք կարողանան վերադառնալ ընդհատված խաղին:

Յերբեմն գաստիարակը կառուցման թեմա յե առաջարկում  
յերեխաներին, ոգնում է իր խորհաւրդներով կամ ցույց ե տա-  
լիս կառուցման վորոշ ձևեր: Դաստիարակը զարգացնում է յե  
րեխաների գեղարվեստական ճաշակը, շենքը գեղեցիկ շինելու-  
նրանց ձգտումը:

Խաղը յերեխաների մեջ մտերմություն, ընկերական հարա-  
րերություններ, կազմակերպվածություն, զարգացնելու լավա-  
գույն միջոցն ե:

Յերեխաները սովորաբար խաղի ժամանակ միանում են մի-  
քանի հազով, յերբեմն ել խաղում են ամբողջ խմբով: Նրանք խա-  
քանի հազով, յերբեմն կազմակերպում են ինքնուրույն կերպով, բայց վորոշ դեպ-  
ղը կազմակերպում են ինքնուրույն կերպով, բայց վորոշ դեպ-  
ղը կազմակերպում ե սպնել նրանց՝ համաձայնության դալու մի-  
քերում հարկավոր ե սպնել նրանց՝ համաձայնության դալու մի-  
քանի միջոցն ե այս կամ այն յերեխային, մյանց հետ, ներզրակել խաղի մեջ այս կամ այն յերեխային,  
գանել նրա համար վորեմ ակտիվ գեր:

Յերբեմն գաստիարակը խաղին մասնակից ե դառնում նրա  
համար, վորպեսզի միավորի յերեխաներին, ոգնի նրանց կազմա-  
կերպվելուն, խաղի մեջ մտցնի վորեմ նոր, հետաքրքիր բան:

Դաստիարակը հապաստում է կոլեկտիվ խաղեր կազմակեր-  
պելուն. նա կարող ե ընտրել այնպիսի խաղալիքներ, վորոնցով  
պելուն. նա կարող ե ընտրել այնպիսի խաղալիքներ, վան մենակ խաղալը, կան-  
միասին խաղալն ավելի հաճելի յե, քան մենակ խաղալը, վո-  
խում և հարթում ե վեճերն ու թյուրիմացությունները, վո-  
խում կարող են ծագել խաղի ժամանակ. որինակ, յերեխաները  
րոնք կարող են ծագել խաղի ժամանակ. Միշտ չի ուզում ճանա-  
«ճանապարհորդում են գնացքով» իսկ Միշտ չի ուզում ճանա-  
պարհ տալ, խանգարում ե խաղը, դաստիարակն առաջալիում ե  
կանոնացնել «զնացքը» և Միշտ չի ուզում ճանապարհ արդյոք ճանապարհը. Միշտ չի ուզում ճանապարհը. Միշտ չի ուզում ճանապարհը. Միշտ չի ուզում ճանապարհը.

Դաստիարակից պակաս ուշադրություն չեն պահանջում  
անհատական խաղերը. որինակ, յերեխան ինքն ե դաստի-  
արակը ձողիկները կամ մողարկան կամ կազմավորում չոգեկառք:  
բռնմ ձողիկները կամ մողարկան կամ կազմավորում չոգեկառք:  
Անհատական խաղերն ոգնում են դաստիարակին՝ լավ ճանաչել  
մի յերեխայի, գրսելու և զարգացնել նրա հետաքրքրու-  
թեմն մի յերեխայի,

Պյունը, հակումները, յեղիակայությունը, նախաձեռնությունը:  
Մանկապարտեզում պետք է լինեն բազմատեսակ խաղալիք-ներ և խաղանյութեր:

Խոշոր կառուցղական նյութեր, կոնստրուկտորներ:

Սյուժետային խաղալիքներ, տիկնիկներ, տիկնիկային կահկարասիք և ամանեղեն, թատրոնի համար խաղալիքներ, կենդանիներ, ավտոներ, գնացքներ և այլն, ինչպես նաև զգեստներ՝ կարմիր բանակայինի սաղավարտ, կոնդուկտորի պայուսակ և այլն:

Բացի առանձին խաղալիքներից, հարկավոր են նաև խաղալիքների ժողովածուներ, որինակ, «Մանկապարբեկ», «Եկեղացնաբանական այգի», «Թուչնանոց», «Յերկաթուղի», «Կարմիր բանակ»:

Ծառ հետաքրքիր են խաղալիքների այնպիսի ժողովածուներ, զորոնք հեքիաթներ են պատկերում:

Խաղալիք՝ զվարճալիքներ, որինակ, ման յեկող մազի, թաշող թռչնակներ, կռանչող բագ և այլն:

Դիտակտիկ (ուսուցանող) խաղալիքներ—մոզափկա, տաշեղներ, հնչուն խաղալիքներ և այլն:

Մոտորային խաղալիքներ՝ գնդակներ, ողիր, սանձեր, ցաւ-կիչներ, կեղլի, զանազան զլորաններ և այլն:

Հողմաշարժ խաղալիքներ՝ հողմադացներ, պտուակներ, հողմաթիռներ, պարագյուտներ և այլն:

Ինքնաշխն խաղալիքներ՝ նույնպես և զանազան առարկաներ, վարոնց համար յերեխաները բազմատեսակ կիրառում են դժոնում իրենց խաղերում, որինակ՝ շպազատ, կտորեղեն, արկեր, ֆաներկա, տախտակներ, ձողիկներ և այլն:

Խաղի մեջ ոգտագործվում են նաև ջուրը, ավաղը, կավը, ուլյսերը: Կարեռ և հրահրել և զարգացնել յերեխաների ինք-ուրուցն կերպով խաղալիքներ հնարելու և պատրաստելու ձգ-ումը: Այդպիսով հարստանում է խաղի միտքը և բազմաթիվ հետաքրքիր զբաղմունքներ են ստեղծվում: Ժամանակ առ ժա-անակ հաշվի առնելով դաստիարակչական խնդիրները և յերե-աների ձգտութմները, անհրաժեշտ է վորոշ խաղալիքներ փոխա-ինել ուրիշներով, տալ նոր խաղալիքներ:

Նոր խաղալիքը տրվում է տարբեր ձևերով։ Յերբեմն դաս-  
խաբակը նոր խաղալիքները ցույց է տալիս բոլոր յերեխանե-  
հն մի անգամից, յերբեմն ել յերեխաներն իրենց համար ան-

սպասելի կերպով նոր խաղալիքները դանում են իրենց խմբա-  
կային սենյակում կամ մանկավարտեղի բակում:

Դաստիարակը յերեխաներին սովորեցնում է խնամքով վար-  
վել խաղալիքների հետ. Խաղալիքները պահպում են այնպես,  
մոռ մերեխաններն իրենք կարողանան վերցնել.

Խաղերը կազմակերպվում են շենքում և բացովիյա: Բացօվ-  
յա խաղերին տարվա ըուլոր յեղանակներին պետք են հատկապես  
մեծ ուշադրություն նվիրել:

Նրանք շատ կարելու են յերեխաների առողջության համար  
և ստեղծում են առանձնահատուկ կենսուրախ տրամադրություն:  
Այդում կատար բակում յերեխաներն ավելի ազատ կարող են շարժ-  
վել, քան սենյակում, և կառուցումներ կատարել Ավագը, յունի՛  
ջուրը, բույսերը, մանր քարերը և այլն անսպառ նյութ են բազ-  
մապիսի խաղերի համար:

Այդ խաղերն ավելի մեծ տեղ կարող են գրավել զիւկա-  
կան պայմաններում։ Այստեղ բնական նյութերն ավելի հա-  
րուստ են ու մատչելի։

Սոճուկ կոները, կաղինները, մանր քարերը, ծաղիկները,  
հատապտուղները (մասուր. մամուլ) ամենաբազմազան կիրա-  
ռաւմ են գտնում խաղերում. որինակ, նրանք կարող են պատ-  
կերել մթերքներ, բեռներ և այլն:

Բացոթյա խաղերը տարբեր խմբերի յերեխանորդն սրբածում համարակալու համարակալություն են տալիս: Շատ հաճախ շենքի ներսում պատաժ խաղը շարունակվում է զբոսաշքի ժամանակի: Շատ կապած խաղը շարունակվում է զբոսաշքի ժամանակի:

Դաստիարակը, ապահովելով յերեխանութեաւ ըստ գացումը, հոգ և տանսւմ, վոր նրանց խաղերը հետզհետե ավելի բովանդակալից դառնան, Նա հավանություն և տալիս հետաքըլրաքիր իսպահէն, մյուս յերեխաների ուշագրությունը գրափում է

այդ խաղի վրա, վորեն բան ինքն և կառուցում կամ մեծ յերեւաների կառուցածը ցույց տալիս:

Յերեւմն դաստիարակն ինքը խաղում և յերեխաների հետ. որինակ՝ նստում և յերեխաների պատրաստած «զնացքը»: Նրա որինակին հետևում են յերեխաները և բոլորը միասին «ճանապարհ» են ընկնում:

Մանկական խաղերի սյուժեաները աստիճանաբար գարգանում են. որինակ՝ «կոլտնաւեսություն» խաղալու ժամանակ յերեխաները թռչնանոց, գոմ են սարքում, կաթը տանում են մանկապարտեզ: Խաղալիք-կենդանիները յերեւմն դառնում են սիրչած հեքիաթների գործող անձինք. որինակ՝ նապատակը և արջուկը գնում են բարեսիրութիւնը Այբոլիտի մոտ բուժվելու:

Դեռ նախադպրոցական փոքր հասակում յերեխաները սովորում են պայմանավորվել թե ինչ պետք ե խաղան: Դաստիարակը յերեխաներին ոգնում և համաձայնության գալ, հարմար խաղալիքներ ընտրել:

Զվարճալի խաղալիքները փոքրահասակներին շատ են զրավում: Նրանք մեծ զվարճություն և ուրախություն են մտցնում խաղի մեջ:

Խաղալու համար փոքրահասակը յերեխաներին տրվում են բազմազան խաղալիքներ և խոշոր ու մանր չափերի կառուցողական նյութեր:

Մեծահասակ նախադպրոցականների խաղերն ավելի բազմազան են և բավանդակությամբ ավելի հարուստ, այն կապակցությամբ, վեր այդ հասակում ավելի զարգացած և յերեխաների յերեակայությունը և նրանք ավելի լրիվ հասկացողություններ ունեն շրջապատող կյանքի մասին:

Նույն թեմաները, վորոնց մենք հանդիպում ենք փոքրահասակը յերեխաների խաղերում, նկատվում են և մեծահասակների մոտ, բայց ավելի լրիվ ու բազմակողմանի զարգացած: Շատ խաղեր ծագում են յերեխաների համար կարդացած գրքերի և շատամվածքների տպավորության տակ, որինակ, Պուշկինի հեքիաթների, ժողովրդական հեքիաթների և այլն: Առանձնապես յերեխաներին գրավում են այն խաղերը, վորակեղ արտացոլվում են հերոսական սիրազործությունները, արիությունը, ինչպիս որինակը, հյուսիսային բևեռի նվաճումը և այլն:

Դաստիարակի պատմած նոր եպիզոդը կամ հետաքրքիր ման-

բամանությունը, վոր յերեխաներն իմացել են գրքերից կամ նկարներից, ոգնում են այդ խաղերի զարգացմանը:

Մեծահասակ յերեխաների խաղերում մեծ տեղ են բռնում ինքնապործ հարմարանքները, վորոնցով նրանք լրացնում են պատրաստի խաղալիքները և կառուցումները: Մեծահասակ յերեխաներին պետք ե տալ ավելի բազմազան ձեզի կառուցողական նյութեր, ամրացնելու նյութերի հետ միասին: Այդ հնարավորություն ե տալիս նրանց ստեղծել ավելի բարդ կառուցումներ, ավելի գեղեցիկ ձեւագորել նրանց և իրենց խաղերում ավելի հետաքրքիր ձևով կիրառել այդ կառուցումները:

Դաստիարակը զրոսանքի ժամանակ յերեխաներին ցույց ե տալիս գեղեցիկ շենքեր, ընտրում և պարզ նկարներ և պարզ ձեր, նկարներով պատկերազարդված ալբոմներ:

Յերեխաները դաստիարակի ոգնությամբ հողամասում՝ շինում են վրաններ, տնակներ և այլն:

Մեծահասակ յերեխաները սովորաբար շատ են հետաքրությունում կոնստրուկտուրներով և լարվող խաղալիքներով, ինչպիսիք են՝ «ավտոմոբիլային կոնստրուկտորը», «մետրոն», լարվող տրակտորը և այլն:

Յերեխաների հարցանիրությունը և մեծ հետաքրությունը գրսնորված են նաև այն ժամանակ, յերբ նրանք խաղում են ավազով, ջուղի, ձյունով և այլ նյութերով: Յերեխաներին գուր և գալիս ավազի մեջ ջուղի լի ջրհոր շինելը, առվակներում պատվարներ ամրացնելը, ջաղաց շինելը և այլն:

Այդ հասակի յերեխաներն ունեն նաև զվարճալի խաղեր առանց վորոշակի սյուժեների: Յերեւմն այդպիսի խաղերը վերաբեր ածվում սյուժետավոր խաղերի, որինակ՝ «ցիրկ», «թատրոն»:

Այդ խաղերում զարգանում են յերեխաների հնարամտությունը և հումորը:

ԿԱՆՈՆՆԵՐՈՎ ՇԱՐԺԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Շարժական խաղերը շատ կարևոր են շարժումները, այն եւ վազքը, քայլվածքը, մազցումը, թոփչը և այլն զարգացնելու համար (տես ֆիզիկական դրագիրը):

Բացի գրանից, այդ խաղերը ճարպիկություն, համարձակություն, դիմացկունություն են զարգացնում և զայտիաբակում ուշյուն, իմացկունություն են զարգացնում և զայտիաբակում ուշյուն, իմացկունություն, հիշողությունը, յերեակայությունը, կազմակերպչածությունը:

Յերեխաների առողջության համար առանձնապես ոգտավետ են բացովյա շարժական խաղերը: Այդ խաղերի համար ինչպես դուրսը, նույնպես և շենքի ներսում պահանջվում են մեծ տարածություն, վորպեսզի չկաշկանդվեն յերեխաների շարժումները: Վորոշ խաղեր կարող են անցկացվել միայն բացովյա, որին սակ, բոնոցիկ, մրցավազք և այլն:

Ի նկատի ունենալով այն, վոր շարժուն խաղերում յերեխաները շատ են շարժվում, անհրաժեշտ են հետեւել, վորպեսզի նրանք չհոգնեն, չափից դուրս չգրգռվեն: Այդ նպատակով կիրառվում են հանգստյան ընդմիջումներ, վորոնք յերբեմն խաղը հանդարտ շարունակելու ձև են ընդունում: որինակ, ձիարշավալիս «կառապանները» կերակրում և մաքրում են «ձիերին» կամ տանում են ջրելու «ջրհորի» մոտ, «գնացք» խաղալու ժամանակ «բանվորները» տնտղում են վագոնները և մաքրում:

Շատ կարող են խաղի ձիշտ ընտրությունը: Խաղը պետք է հետաքրքիր լինի իր բովանդակությամբ և մատչելի՝ շարժումների և կանոնների տեսակետից: Շարժական խաղերի բովանդակությունը պետք է համապատասխանի դաստիարակչական խնդիրներին: Խաղերն ավելի հասկանալի են հետաքրքիրների են լինում յերեխաների համար՝ յերբ նրանք ունեն սյուժետ կամ անց են կացվում խաղալիքներով, բայց յերեխաներին հետաքրքրում են նաև այնպիսի խաղեր, ինչպես «բոնոցիկ», «մրցավազք» և այլն:

Անցկացնելով նոր խաղը, դաստիարակը յերեխաներին ժանդարմությունը և կանոններին: Բացառությունը պետք է լինի համառոտ, կենդանի և հետաքրքրություն առաջ բերի դեպի տվյալ խաղը:

Դաստիարակը կարող է հետաքրքրություն ստեղծել խաղի զուրջը տարրեր միջոցներով: Նա կարող է խաղն սկսել յերեխաների մի փոքրաթիվ լիմբի հետ, իսկ հետո խաղը կրկնելիս, ներդրավել նաև ուրիշ յերեխաների, կամ կարող է խաղն սկսել միանգից բոլոր յերեխաների հետ: Դաստիարակի պատմածը

խաղի թեմայի շուրջը կամ ցույց տված նկարները նույնպես յերբեմն բարձրացնում են յերեխաների հետաքրքրությունը խաղի նկատմամբ:

Շարժական խաղերից շատերում պետք է ոգտագործել խաղալիքներ, զգեստներ, բնական նյութեր (ձնագնդեր, սաղակողներ, սոճու կոներ և այլն):

Այն խաղերում, վորտեղ հարկավոր են դերերը բաժանել՝ կամ դաստիարակն են նշանակում այս կամ այն յերեխային, կամ թե այդ տեղի յեւ ունենում «վիճակելուկով»:

Սովորաբար դաստիարակը մասնակցում է խաղին. դա բարձրացնում ե խաղի հետաքրքրությունը, բայց յերբեմն նա թողնում ե խաղը, վորպեսզի հետզհետեւ յերեխաներին սովորեցնի ինքնուրուցյան խաղալ:

Դաստիարակը հետեւվում է, վոր պահպանվեն խաղի կանոնները, զեկավարում է դերերի բաժանումը, բարդացնում ե խաղը և փոփոխություններ մտցնում խաղի մեջ՝ յեթե այդ անհրաժեշտ ե: Դաստիարակը յերբեմն ինքն է խաղերի նոր վարիանտներ ստեղծում:

Անհրաժեշտ ե, վոր խաղերում դաստիարակն ինքը ձիշտ կատարի բոլոր շարժումները, վորպեսզի, ընդորինակելով նրան, յերեխաները հետզհետեւ կատարելագործեն իրենց շարժումները:

Կանոններով խաղերը փոքրանասակների խմբի համար իրենց բովանդակությամբ և շարժումներով պետք է լինեն պարզ և մատչելի, ինչպես, որինակ, «Գնացք», «Ձիարշավ», «Ավտոմարիլ» խաղերն են: Շարժական խաղերի համար արվում են գընդակակիներ, ողեր, գնդիկներ, փոքրիկ զրոշակներ, զանգակներ և այլն: Խաղալիքներով խաղերի շարքին են պատկանում, որինակ՝ «Գնդակ նետելը», «Գտիր զրոշակը»:

Խաղի կանոններն աստիճանաբար բարդացվում են: Սկզբում ցույց են տրվում այնպիսի խաղեր, վորոնցում բոլոր յերեխաները կատարում են դաստիարակի ցույց տված միանման շարժումները, որինակ՝ «Գնացք», «Նապաստակներ» և այլն: Յերեխեմն այդ խաղերում կրկնվում ե միանույն գործողությունը, յերեխեմն ել միմյանց հաջորդում են մի քանի գործողություններ:

Խաղերի մեջ աստիճանաբար մտցվում են ավելի բարդ կանոններ, որինակ, «թռչնիկները» և ուրուրը» խաղում թռչնիկները

թոշում են մինչև այն ժամանակ, յերբ կտրվի աղդանշանը և կերեվա ուրուը:

Այդպիսի խաղերի շարքին են պատկանում նաև «Արջը և յերեխաները», «Կատուն ու մկները», «Ինքնաթիռներ», «Կարմիք բանակայիններ»:

Մի քանի խաղերում մացփում ե աղդանշան, այն և՝ մի վորոշ բառ, վոր արտասանում ե դաստիարակը («կանգ առ», «վաղիր») կամ դրոշակ և այլն:

Այդպիսի խաղերից են՝ «Ռովկի կվերցնի դրոշակը», «Դե վազեքը բոնեք»: Խաղը սովորաբար զեկավարում ե դաստիարակը:

Փոքրահասակների խմբում դաստիարակը առաջաց չի բացատրում խաղը, այլ պայմանավորվում ե այն մասին, թե ինչ ե պահանջվում խաղն սկսելու համար: Խաղի ժամանակ յերեխաներն ընդորինակում են դաստիարակի շարժումները:

Մեծ տեղ են բռնում խմբակով խաղերը, որինակ, «Փոքրիկ չարաձճիններ», «Ուռենի», «Նապաստակներ»:

Միջակ խմբի յերեխաներից ավելի ինքնուրույնություն և դիմացկունություն ե պահանջվում, քան թե փոքրերի խորից: Խաղի մեջ աստիճանաբար մացփում են, որինակ, այսպիսի կանոններ.—ֆախչողին բռնել սկսել այն ժամանակ, յերեխացող յերեխաների մի մասը վերջացնի պայմանական տեքստի արտասանությունը, վազել միայն մինչև վորոշված գիծը, ժամանակին կատարել այս կամ այն գործողությունը, որինակ՝ ժամանակին դուրս վազել, բռնել, մագլել ցանկապատի վրա և այլն:

Կարելի յե անցկացնել նաև մրցավազքեր, վորոնց ժամանակ յերեխաները կարող են շարք կանգնել զույգերով, յեռյակներով և ավելի, սրինակ՝ «Անտուն նապաստակ», «Զույգերի խաղ», «Աթոռներով խաղ»:

Այս խմբում խաղերի սյուժետներն ավելի հարուստ են, որինակ, անց են կացփում այնպիսի խաղեր, ինչպես՝ «Խաղալիքների խանութ», «Վարսորդն ու դաշտաները», «Գուշակիքը, մում ենք բռնել»:

Բարձր խմբի յերեխաներից պահանջվում ե խաղի կանոնների ավելի ճիշտ կատարում, քան թե նախորդ խմբերում: Հաւախ խաղերում մացփում են զանազան խոչընդուներ, փորոնց հաղթահարելու համար պահանջվում ե շարժումների ճշտություն և արագություն՝ արգելակի վրայից ցատկելու, մագլել-տնցնե-

լու, հշանին խփելու և այլն, որինակ՝ «Ռվակ կվերցնի դրոշակը» «Լարիբյունթոս» խաղերը:

Անց են կացփում այնպիսի խաղեր, ինչպես՝ մրցավազքը, վազքը, ողակներ, զնդակներ գլորելը և այլն, վորոնը պահանջում են շարժումների վարժություններ. որինակ՝ «Գորտերն ու ձկնկուլը», «Վառներդ չթրջեք» և այլն խաղերը:

Բացի այդ, կարելի յե անցկացնել գորողկի, սերսո խաղերի և վուեյրովի պարզեցրած վարիանտները և այլ խաղեր:

Այս խաղերում, վորոնք պահանջում են արագություն, ձարպկություն, կազմակերպվածություն, կարելի յե խրախուսել յերեխաներին զանազան միջոցներով, որինակ, խաղը տանօղներին խաղը կրկնելու ժամանակ տալ առաջին հերթը, փոքրիկ դրոշակներ տալ և այլն:

Այս բանում յերեխաների նկատմամբ անհատական մոտեցում ե պահանջվում, վորպեսզի զարգանան ամեն մի յերեխայի ունակությունները և յերեխաների մեջ դաստիարակվեն մտերմություն ու միմյանց ողնելու պատրաստակամություն:

Խաղերում կարող են լինել այնպիսի առաջադրանքներ, վորտեղ պետք ե ճիշել շարժումների հաջորդականությունը, արագորեն գանել իր տեղը և այլն, որինակ՝ «Այսպես կարելի յե, այսպես չի կարելի», «Ճիշիր շարժումը», «Ի՞նչն ե թոշում» և այլ խաղեր:

Խաղի սյուժետներն ավելի բազմազան դառնալով, պահանջում են ձարպկություն, համարձակություն, հնարագիտություն: Այդպիսի խաղեր են, որինակ, «Հանձնիր գրոշակը», «Կարմիր հեծելազոր» և այլն: Անց են կացփում նաև խմբակային յերգերով խաղեր և յերգերի բովանդակությունը շարժումներով արտահայտող և զանազան այլ խաղեր. որինակ, «Ուռենի», «Նապաստակ» և այլն:

ՈՒԴԱԿՑԻԿ ԽԱՂԵՐ

Դիդակտիկ խաղերը նպաստում են յերեխայի բազմակողմանի զարգացմանը, և միաժամանակ ամեն մի խաղն ունի նաև իր խնդիրները, որինակ, վորոշ խաղերում յերեխաները ծանոթանում են առարկաներին, մյուսներում տարբերում են հընդունելու կամ վորոշում են առարկաները՝ շոշափելով և այլն: Հյունները կամ վորոշում են առարկաները շոշափելով և այլն:

Դիդակտիկ խաղերը բազմազան են: Նրանցից մի քանիսը անց է կացնում դաստիարակը, վորոնք հետաքրքիր ու յերեխան կամար մատչելի առաջադրանքների բնույթ են կրում, որին

հակ՝ դասավորել տիկնիկներն ըստ հասակի, նկարված որինակով հավաքել տնակը և այլն:

Ոգտվելով գիտակտիկ խաղալիքներից և նկարներից, վարոշ խաղեր սեփական նախաձեռնությամբ հնարաւմ են իրենք յերեխաները: Որինակ, յերեխաները կարող են իրենց ուղածի պես տաշեղներից կամ մողափիկից կազմավորել զանազան պատկերումներ կամ ոգտագործել զանազան գործադր մանր առարկաներ վորպես ափսեներ՝ տիկնիկներին հյուրաժիշտելու համար և այլն:

Բոլոր խմբերում մեծ տեղ պետք է գրավին անհատական կամ փոքր խմբերով խաղերը, բայց վորոշ խաղեր կարող են անցկացվել նաև մեծ թվով խաղացողների հետ. որինակ, հանելուկ-խաղերը՝ «Իմացիր, ինչ կա ձեռքում», «Ո՞վ կանչեց ձայնից ճանաչիր»:

Յերեմի դաստիարակը խաղի մեջ մտցնում է յերեխաների մտքում ծագած հետաքրքիր առաջադրանքները, յեթե այդ բալոր ավելի գրավիչ են դարձնում խաղը և յերեխաներին ինքնուրույնությունից և անկաշկանդ վարժությունից չեն զրկում:

Խաղը զեկավարելու գործում չի կարելի չար ու ցամաք զիգակտիզմ, ձեւական վարժություններ, կամ բարդ առաջադրանքներով յերեխաների ծանրաբեռնում թույլ տալ: Դիգակտիկ խաղերը պետք ե այն աստիճան գրավիչ լինեն, վոր յերեխան խաղալս չնկատի, թե ինքը ինչ-վոր վարժություններ ե կատարում:

Առանձնապես արժեքավոր են այն խաղերը, վորոնք հիմնաված են ինքնստուգման սկզբունքի վրա (տնակներ մողափիկից, իրավ մեջ հաջորդվող իրեր և այլն), վորովհետև գրանցով խաղալիս յերեխան ինքը կարող ե նկատել իր սխալը և ուղղել այն: Հետաքրքիր և արժեքավոր են նույնպես զիգակտիկ խաղերը սոճու կոներով, կաղիններով, մասուրներով, մանրիկ քարերով և այլն:

Խաղն ընտրելու ժամանակ դաստիարակը հաշվի յե առնում վոչ միայն յերեխաների հասակը, այլև նրանց հակումները, զարգացումը: Շատ խաղեր, վորոնք առաջարկված են փոքրերի խմբի համար, հետաքրքիր են նաև ավելի մեծ յերեխաների համար և ընդհակառակը, վորոշ գեպքերում, փոքրերի խմբի յերեխաներին կարելի յե առաջարկել խաղեր, վորոնք մատնանշված են միջակ խմբի համար: Զափազանց կարեվոր ե, վոր դաստիարակը շատ խաղեր իմանա և կարողանա խաղեր հորինել:

Դիգակտիկ խաղերում փոքրերի խմբի յերեխաներին կարող են արվել, որինակ, հետևյալ առաջարկությունները:

Տարբերել հիմնական գույները, որինակ, ձողիկի վրա շարել բոլոր կարմիր սղերը, ջոկելով դրանք մյուս գույների ողերից, բլորել կապույտ գնդիկը՝ յերեք բարձրացնում են կապույտ դրոշակլորել կապույտ գնդիկը՝ յերեք բարձրացնում են կարմիր դրոշել կարմիր գնդիկը և այլն:

Տարբերել ձեերը և չափերը, որինակ, տարբեր չափի մասը յուշաների խառնիխուռն կույներից ջոկել համապատասխան կերպուշաների ամբողջ մատրյոշկաներ կազմել: Ճիշտ կադմել աստիճանները և ամբողջ ամարյոշկաները կազմել: Ճիշտ կադմել աստիճանները չափավոր գույներով աշտարակը:

Տարբերել միմյանցից խիստ տարբերվող ձայները. որինակ՝ վորոշել թե ինչ են նվազում, սրինգ, թե թմբուկ, վորոշել՝ զանցութել թե սրինգի ձայնից ճանաչել, թե ով կանչեց: գակիք ձայն ե, թե բոժոժիքի, ձայնից ճանաչել, թե ով կանչեց:

Տալ առաջադրանքները, վորոնք զարգացնում են ուշադրությունը և դիտադրան հիշողությունը. որինակ, տեսակների բարձրությունը և դիտադրան հիշողությունը. որինակ, մանրիկ քարերը, իմանաւ, թե ժանել գնդակները, սոճու կոները, մանրիկ քարերը, իմանաւ, թե վոր խաղալիքը պակասեց հավաքածից:

Տարբերել առարկաները՝ շոշափելով. որինակ՝ գուշակել թե ինչ ե պահված պարկում: Գուշակելու համար կարելի յե տալ յերեխաներին լավ ծանոթ զանազան առարկաներ:

Միջակ խմբում յերեխաներին կարելի յե տալ, որինակ հետեւյալ առաջադրանքները (բացի փոքրերի խմբի համար մատնաված առաջադրանքներից):

Լրացուցիչ և զանազան յերկրորդական գույների տարբերելն ու անվանելը. որինակ, յերեխաներին առաջարկում ե ըրել այսինչ գույնի սղակը, կամ դասավորել հերթով մողափիկան, ըրել այսինչ գույնի սղակը, կամ վորենի այլ գույնի նրբերանգընտրելով կարմիր, կապույտ կամ վորենի այլ գույնի նրբերանգընտրելը:

Զեվերի և չափերի տարբերելը, նրանց անվանումը. որինակ՝ կազմել «առարկայական մողափիկայից» մի վորեն առարկա և այլն:

Շոշափելով իմանալ թե ինչից են ջնշած խաղալիքները, որինակ, առանց նայելու, շոշափելով տարբերել ոետինե, փայտյան կաղինակը, կամ առարկերել և անվանել տիկնիկների մետաքսյա ու մորթե գլխարկները և այլն:

Գույների և ձեերի համախմբում կատարել. որինակ, համբեկ և

կաղմել վորեն զարդանկար (նախշ) մոդաիկայից, նկարից ընդուրինակելով՝ մոգաիկայից, տաշեղներից կամ մանրիկ քարերից տուն, ծառ, շեղեկառք դասավորել:

Առաջադրանքներ՝ վորոնք զարդացնում են ուշադրությունը և հիշողությունը, որինակ, հիշել մի քանի առարկաների հաջորդականությունը և գասավորումը (խաղեր՝ «Ասա, Բնչպես եր», «Ի՞նչն և փոխվել»):

Տարբերել ձայները և հիշել ոիթմը. որինակ, իմանալ, թե ինչ են նվագում թառ, մանդոլին, ջութակ, թե՝ խաղալիքային գործիք: Կրկնել թմրուկի վրա պարզ ոիթմը («Նվագիր ինձ նման»), ճանաչել առանց բառերի յերգած յերգը («Նվագախումբ» խաղը):

Յեթե յերեխաները հեշտաւթյամբ են կատարում այս՝ կամ այն առաջադրանքը, խաղերը բարդացվում են. որինակ, կարելի: յե անցկացնել այնպիսի խաղեր, ինչպես՝ «Ո՞վ շուտ աշտարակ կկազմի», «Ո՞վ ավելի շատ մատրյուկաներ կսարքի» խաղերն են

### ՄԵԾԵՐԻ ԽՄԲՈՒՄ

Բացի նախորդ խմբերում ցուց տրված խաղերից, անց են կացվում հետեւյալ առաջադրանքներով խաղերը:

Տարբերել և անվանել հիմնական և ոժանդակ գույների՝ նրբերանգները (այսինքն յերկրորդական գույները), որինակ, հավաքել և աստիճանական կարքով դասավորել միենույն գույնի, բայց տարբեր նրբերանգների ողերով աշտարակը, ջոկել տիկիների համար միենույն գույնի, բայց տարբեր նրբերանգներից հագուստը՝ զլսարկ, զգեստ, զստի և այլն:

Գույների և ձեմերի համախմբում, որինակ, կաղմել մոզաիկայից մի զարդանկար (նախշ), ոգտվելով տարբեր գույներից և նրանց նրբերանգներից. մոզաիկայից և տաշեղներից նախշ կամ նկար կաղմել և այլն:

Տարբերել և հիշել տարբեր բարձրության և ուժի ձայները: Կոլոֆոնի վրա դուրս բերել վորեն թեթև մանկական յերգ՝ խաղալ «բարձրածայն» և մեղմ յերաժշտություն» և այլն:

Զեռքերի դաստակի և մատների մկանների զարդացում. որինակ՝ «բլուկի», «չոփախաղ», «բիբյուկի», թռչող թասակներ, «խճաված անցք», «լաբիրինթ», ներս զցել յերեք գնդիկները հատուկ անցքերով, կամ «մկներին» քշել իրենց բները և այլն:

Ուշադրության, հիշողության և յերեակայության զարդարում. որինակ՝ հիշողությամբ, առանց որինակին նայելով՝ սեղանի կառուցողական նյութերից, կոնատրուկտորից տնակ կաղմել, մազափիկայից, գույնդույն տաշեղներից վորեն նախշ հնարել: Այս խաղերի թվին են պատկանում նաև «շաշկի» խաղը պարզեցրած կանոններով, «զլսացավանք» հանելուկներուը և այլն:

Խոսքի (լեզվական ունակությունների), սրամտության, հնարագիտության զարդացում. որինակ, խաղեր՝ վորատեղ պահոնջում և գտնել ուրիշի մտքում պահած բառը, խաղեր՝ վորոնք պահանջում են բառերի ընտրություն կամ արգելվում են այս կամ այն բառերը, պահանջում են արագ պատասխան զըտնել, նկարագրված խաղալիքի անունը տալ և այլն:

Դիգակտիկ խաղերի մեջ առանձին տեղ են գրավում նըկարներով խաղերը: Այդ խաղերի մեջ հտառուկ նպատակով հակարների վաքած նկարների ոգնությամբ հարստացվում են յերեխաների վասկացությունները շրջապատի կյանքի մասին, զարդացնում հասկացությունները շրջապատի յերեակայությունը են զիտունակությունը, ուշադրությունը, յերեխաներուն և այլն: Նկարներով, ինչպես և խաղալիքներով՝ խաղերը համար կունենա ները կարող են խաղալ իրենց ուզածի պես, հնարել զննազան միավեր, որինակ, «կինոյում» նկարներ ցույց տալ, տարբեր կոմքինացիաներով դասավորել նկարները:

Դաստիարակը պարզ և հասկանալի ձևով բացատրում է խաղը և խաղում յերեխաների հետ միասին: Ամենից հաճախ խաղը առաջ յերեխաները դիտում են նկարները:

Դաստիարակը կարող և վարոշ չափով փոփոխել խաղի կարգ կանոնները՝ նա յերեմն հեշտացնում է խաղը, կամ ընդհանու կառակը, բարձացնում է նրա առաջադրանքներն ու կանոնները: Կառակը, տարբեր վարիանտներով կարող ե անցկացվել Միենույն խաղը տարբեր վարիանտներով կարող ե անցեասակ և փոքրահասակ յերեխաների հետ: Նկարները տարմեծահասակ և փոքրահասակ յերեխաների հետ կոմքինացիաներով և զանազան հավելումներով կարող են բեր լուսոն կարելի յե ոգտադործել բոլոր խմբերի խաղերում՝ ներ՝ լուսոն կարելի յե ոգտադործել բոլոր խմբերի խաղերում՝ նկարներով խաղի կանոնները և բովանդակությունը, ինչպես նաև փոփոխելով նկարների ժողովածուն:

Նկարներով խաղերից շատերը փոքրերի խմբի համար կառացվում են բոլոր խաղացողների միաժամանակ և միանման զըտնեղությունների հիմունքով, որինակ՝ «Պահենք ու գտնենք»

խաղը։ Մի փոքր ավելի բարդ են այն խաղերը, վորոնք պահանջում են յերեխաներից դորձողությունները կատարել հերթով, որինակ, «Հանճառարություններ», «Կոլխոզ» խաղերը։ Փոքրերի խմբի յերեխաներին խաղերում առաջարկվում են հետեւյալ խընդիրները, գտնել տվյալ նկարի համապատասխան դույզը, գրտնել դաստիարակի անվանած նկարն ուրիշ նկարների միջից, վորոնք խառն դրված են սեղանին, կամ սենյակում աչքի ընկնող վորեն այլ տեղ, իմանալ՝ թե վմբ նկարը պակասեց (որինակ, «Ով գնաց» խաղը). Նկարը կազմել յերկու, յերեք կամ չորս մասից (քանդովի նկարներ), ճանաչել նկարում պատկերված առարկան նրա բնորոշ հատկանիշով, որինակ, ձայնը նմանեցնելու ուղղությամբ ճանաչել կովը կամ ձին։

Փոքրերի հետ անցկացվող խաղերի համար կարելի յե ոգտագործել, որինակ, «Նկարներ մանկիկներին», «Հոտո մանկիկներին», «Մանկիկներ», «Քանդովի նկարներ», «Ծուլդրուղում և այլն։

Միջին խմբում հարկավոր են ավելի բարդ կանոններով և ավելի բազմազան բովանդակությումը խաղեր, քան թե փոքրերի համար, որինակ, լոտո, վորտեզ պահանջվում ե փոքրիկ նկարները ջոկել ըստ վորոշ հատկանիշի։

Մոցգում են խաղեր՝ վորոնցում պահանջվում ե առարկաների ավելի նուրբ ու մահրազնին տարբերում. որինակ, «Գույն-զգույն ամանեղեն» լոտոյում համեմատվում են ձևով այնպիսի առարկաներ, ինչպես՝ բաժակը և գավաթը, ինչպես՝ կճուճը, թեյամանը, կաթնամանը և այլն։

Վորոշ խաղերում յերեխաները համեմատում են առարկաներն ու համախմբում նրանց ըստ առանձին հատկանիշների, որինակ, ջոկում են այն նկարները, վորոնցում պատկերված ե ամեն քան, «Բնչ վոր կարելի յե ուտել» կամ «Բնչ չով կարելի յե խաղալ» և այլն։

Վորոշ խաղերում առաջարկվում են նույն խնդիրները, ինչ վոր փոքրերի խմբում, բայց մտցվում են բարդություններ, վորոնք պահանջում են ավելի՝ հնարագիտություն, որինակ, «Ո՞վ գնաց և ով յեկավ», «Վորտեզ թագնվեց վոզնին» և այլ խաղեր։

Յերեխն յերեխաներին առաջարկվում ե ասել, թե ինչն ինչին և վերաբերում (որինակ, անիվն՝ ավտոմոբիլին, սլաքը՝ ժամացույցին). լուծել համելուկը, վորը կապված է տվյալ նկարի հետ, կազմել նկարն ավելի բազմաթիվ ու բարդ ձևով կտրատված մասերից, քան կրտսեր խմբում։

Բացի նախորդ խմբի համար մատնանշված խաղերից, կարելի յե տալ, որինակ, այնպիսի խաղեր, ինչպես՝ «Գույնզգույն» ամանեղենն, «Բուսաբանական լոտո», «Կենդանաբանական լոտո», «Երարանցում» (պարզեցված վարիանտ), «Տես ու հիշիր» և այլն։

Բարձր խմբում յերեխաներից պահանջվում ե համեմատելու և ընդհանրացնելու ավելի մեծ հմտություն, որինակ, միքանի խաղերում պահանջվում ե ցույց տալ, թե վնասեղ ի՞նչ է բուսանում, թե վար կենդանին ե ուժեղ։ Մյուս խաղերում պետք ե կշռադատել, թե ինչպիսի հագուստ ե հարկավոր հրդեհաշեղին, կարմիր բանակայինին, հլուսիսի բնակչին և այլն։ Մեծահասակ յերեխաների խմբերի, ինչպես և նախորդ՝ խմբերի խաղերից շատերը հանելուկների բնույթ են կրում. որինակ, լուսու-հանելուկը, վարպեսզի ստացվի նկար, կամ նկարագրել նըկարում պատկերած առարկան և յերեւյթը, առանց նրա անունը տալու։

Մի քանի խաղեր հերիաթների կամ պատմվածքների դրամատիկական ներկայացման բնույթ են ընդունում, դրանց սյուժենը յերբեմն յերեխաներն իրենք են հօրինում։ Բացի միջակ խմբի խաղերից, մեծ յերեխաներին կարելի յե տալ նաև այնպիսի խաղեր, ինչպես՝ «Բանջարեղեն» և պտուզներ», «Ծաղիկներ», «Զրային տրանսպորտ», «Յամաքային փոխադրական միջոցներ», «Սիմաֆոր», «Երարանցում», «Կենդանիների ձայները» (առանց տեքստի), «Գրքույկախաղեր», «Կանգ առ», «Պարացյուտիսաներ» և այլն։

Բարձր խմբի խաղերի համար կարելի յե տալ նկարներ, վորոնք պատկերում են զանազան ժողովարդների կյանքը, տաք և ցուրտ յերկրների նկարագրությունը և այլն։

ԳԼՈՒԽ III

ՆԿՐՉՈՒԹՅՈՒՆ, ԺԵՓ (ԿԵՂԱՊՔԲՈՒՄ), ՅԵՎ ԱՅԼ ՆԵՇԻԹԵԲՈՒ  
ԶԲԱԼՄՈՒՆԵՔՆԵՐ

Նկարչությունը, ծեփը և զանազան նյութերի (թղթի, ստվարաթղթի, փայտի) հետ կապված զբաղմունքները նախադպրոցական հասակում հիմնականում գյուտարարական բնույթ են կրում. յերեխաները ծեփի, նկարչության և իրենց այլ աշխատանքների միջոցով սովորաբար պատկերում են այն, ինչ վոր իրենք տեսել են շրջապատող կյանքում, այն, ինչ վոր նրանց համար ընթերցել են, ինչ վոր նրանց պատմել են:

Այդ տեսակ պղարապմունքները սերտ կապված են խաղի հետ։  
Յերեխան փայտից մի բան և շինում, կավից ծիփում ե,  
ոց կտրատում և հաճախ իր արտադրածով խաղում, — ծեփել  
սավառնակ և ահա ձեռքին բարձր բռնած վաղվզում և սեն-  
մ, «թռչում ե»։ Փայտի կտորներից մի ավտոմոբիլ և շինել  
մասն ու «քառում» է։

Նկարչությունը, ծեփը և գանազան նյութերով գրաղմունք-ները, նրանց ճիշտ զեկավարման պայմաններում, մեծ հաճույք են պատճառում յերեխային և նպաստում են նրա ընդհանուր զարգացմանը։ Այդ տեսակ պարապմունքներում դաստիարակի առաջ դրվող հիմնական խնդիրներն են՝ զարգացնել յերեխաների ստեղծագործական ընդունակությունները, գեղարվեստական ճաշակը, հնարագիտությունը, Յերեխայի մտահղացումների իրականացումը նրա այլ և այլ ստեղծագործական զբաղմունքներում դաստիարակում և նրա ակտիվությունը, կամքը, համառությունը, խոչընդուները հաղթահարելու կարողությունը։ Այդ զբաղմունքներում, ինչպես և շրջապատող կյանքը գեղարվեստական վայր գույներով պատկերող կերպարվեստի ստեղծագործություններից ստացած տպավորությունների ոգնությամբ, դաստիարակները ընդլայնում են յերեխաների մտապատկերները, յերեխանե-

բի մեջ սեր ե դաստիարակում գեղի հայրենիքը, նրա առաջնորդ-ները և հերոսները:

Ստեղծագործական միտաեղ զրադաշների ժամանակ յերեխաներն ապրում են ընդհանություններով, ընդհանություններով, ապավորությունների փոխանակում են կատարում, ուժեղանում և նրանց փոխադարձ մտերմությունը, սովորում են միատեղ և ստեղծագործական աշխատանքի՝ համաձայնության գլուխ և միմյանց ողնելով:

Նկարչության, ձեփի և զանագան նյութերով զբաղմունքների ոգնությամբ զարգանում են յերեխաների աշխաչափ և ձեռքի պուլության ու տարածության մտապատճերները:

Այս բոլորի հետ պետք է սովորեցնել յերեխաներին մատիւ-  
տից, մկրատից, վրձինից, սոսինձից, ներկերից ոգտվելու ճշշտ-  
մել, զորը կոբնի ագելի լավ պատրաստել նկարը, ծեփվածքը, ա-  
վելի լավ շինել խաղալիքը:

Զբոսանքի, եքսկուրսիաների միջոցին լերեխտանքու պատշաճում են բազմապիսի նոր տպավորությունները: Դաստիարակը զարգացնում է յերեխաների դիտունակառնություննը, սովորեցնում է տեսնել շրջապատող կյանքի արտահայտիչ ձևը, գույնների գեղեցիկ գուգորդումը, յերեխաների ուշադրությունն են հրավիրեցիկի գուգորդումը, յերեխաների՝ գույնի, մեծության ըում առարկայի հիմնական հատկանիշների՝ գույնի:

Յերեխայի գեղարվեստական ձաշակը և ստորագրուական  
ընդունակությունը զարգացնելու համար մեծ նշանակությունը  
ունեն նրան. Եթի ջապատող միջավայրը, առարկաները, գեղեցիկ կա-  
ռավագանքը, ամանեղենը, ծաղիկները, քանդակները, յերեխա-  
կավորումը, ամանեղենը, ծաղիկները, քանդակները, յերեխա-  
կավորումը, ամանեղենը, ծաղիկները, քանդակները, յերեխա-  
կավորումը, ամանեղենը, ծաղիկները, քանդակները, յերեխա-

Բոլոր զբաղմունքներում շատ կարմոր և պարզու և  
բությունը, սրանց բազմազանությունը և խնամքով նախապատ-  
րաստելը՝ լավ լուծված ներկը, փափուկ, ձեռքերին չկպչող կավը,  
համը, առ առ կտակեկ կտառները և այլն:

Ավելի հաճախ նոր հյութերը յերեխաներին արվուս են սահմանված զբաղմունքների ժամերին և հետո թողնվում են՝ պատուակութելու համար։ 1)

1)  $\Phi_{n_2 p k p h} \quad l u f f b f p n u f \quad k w q p \quad u \quad n b f k b p p \quad q \sigma \eta \eta b b$

Բոլոր նյութերը պետք եւ պահպեն խնամքով, դասավորվեն վորոշ կարգով և այնպես, վոր յերեխաները կարողանան ինքնուրույնորեն վեցնել ուղած նյութերը:

Իր վարքով դաստիարակը ճշտապահության և կարգ ու կանոնի որինակ եւ տալիս յերեխաներին՝ խնամքով և վերաբերվում նյութերին, ալիտույժներին և յերեխաների աշխատանքներին, հավաքում և դրանք մի վորոշ տեղ: Դաստիարակը յերեխաներին մասնակից և դարձնում պարապմանքների նյութերը նախապատրաստելու և տպա նրանց հավաքելու աշխատանքին: որինակ առաջարկում և թուղթը դասավորել սեղանի վրա, շարել սոսինձի և ներկի սրբակները, բաժանել կավը վրան դնելու տախակները և այլն:

Զբաղմունքների ընթացքում դաստիարակն ոգտվում է զեկավարության զանազան ձեւերից, չխախտելով յերեխաների ձեռներեցությունն ու ինքնուրույնությունը: Յերբեմն հետաքրքիր ներածությամբ դաստիարակը հիշեցնում և յերեխաներին այն մասին, ինչ վոր նրանք տեսել են: Ցուցում տալով, թե ինչ կարելի յե շինել, հորինել, դաստիարակը խթանում և յերեխաների ձեռներեցությունը, նրանց ուշադրությունը բենում և պատրաստած նյութերի վրա: Մի հարց կամ վորեն խորհուրդ տալով, նա ոգնում է նկարն իր բովանդակությամբ ավելի հետաքրքրական դուրս բերել, ոգնում և ամելի լավ թուղթ կամ ներկ ընտրել և այլն: Հետեւում ե յուրաքանչյուր յերեխայի զբաղմունքին, ցույց ե տալիս աշխատանքը կատարելու ավելի հեշտ ձեւ, կամ ընդհակառակը, ցույց ե տալիս, թե ինչպես բարդացնել աշխատանքը, ինչպես այն ավելի հետաքրքրական դարձնել:

Զափազանց կարեւոր ե դաստիարակի ուշադիր և խնամքով վերաբերմունքը բոլոր յերեխաների աշխատանքներին և դրանց հավանություն տալը. կավի աշխատանքներից ջոկովում են լավագույնները և պահվում, մյուսները վոչնչացվում են, բայց վոչ յերեխաների ներկայությամբ:

Յերեխաների նկարչական աշխատանքները պահելու համար դաստիարակը գործ ե ածում անհատական ծրարներ՝ յուրաքան-

գելի բարդ նյութեր, տրվում են առավելապես սահմանված զբաղմունքների ժամերին

Հյուր յերեխայի համար մեկը, վորաեղ ամեն մի յերեխա դեռեւ ում և իր աշխատանքը:

Ծրաբների վրա նշաններ են դրվում, վորպեսի յերեխաները ճանաչեն իրենց ծրաբը: Աշխատանքի վրա նշվում է ամսաթիվը:

Յերբեմն հարկավոր ելինում նաև քննադատական դիտություններ անել. որինակ, տալ այսպիսի հարց. «Իսկ ուր են աղջկա աչքերը», «Ճնակը դուռ չունի, ապա վորտեղից պետք ե տաւն մտնել»:

Մեծահասակ յերեխաների աշխատանքների նկատմամբ համեմատաբար խիստ պահանջներ պետք ե առաջադրել բովանդակության և կատարման տեսակետից:

Նկարչությունը, ծեփը և ուրիշ նյութերով զբաղմունքներն անց են կացվում սահմանված պարապմունքների կարգով կամ անց են կացվում սահմանված պարապմունքների կարգով կամ յերեխաների ազատ ընտրությամբ տեղի ունեցող զբաղմունքների կարգով:

Սահմանված պարապմունքների, ինչպես և խաղերի և աղատ ընտրությամբ զբաղմունքների ժամանակ դաստիարակն ուշագընտրությամբ հետեւում և յուրաքանչյուր յերեխայի, ոգնում և նրա մտադրության իրականացմանը, դաստիարակում և յերեխաների մտադրության կենացնունը և կենացնունանալու ունակությունը: Տեսաստատակամությունը և ամենալավ հետաքրքրությունը և հանդիպությունը, վոր վորեն բանում յերեխան դժվարության և հանդիպությունը, վորելի աղջկա աշխատանքից ձեռք քաշել, դաստիարակը պում և պատրաստ և աշխատանքը լավ թուղթը հետաքրքրությունը ունակած աշխատանքը ամուսնությունը և ամենալավ հետաքրքրությունը ամենալավ հետաքրքրությունը: Յեթե քուը ջը, ոգնում և զտնել համապատասխան նյութերը: Յեթե առ զուը ջը, ոգնում և զտնել համապատասխան նյութերը, առաջարկել նոր նյութեր, տալ վորեն հեղաղմունքները, առաջարկել նոր նյութերը, տալ վորեն յերեխային, դաստիարակն աշխատանքը բարդ ե և նոր նյութերը տալ վորեն յերեխային, դաստիարակն այսպիսի առաջարկությունը, յերեխան ոգնել այն կատարելու, առաջարկում և այն ընդհակառել և վերջացնել մի ուրիշ անդամ: առաջարկում և այն ընդհակառել և վերջացնել մի ուրիշ անդամ: այլի առաջարկում և այլն:

Սահմանված զբաղմունքների ժամանակ յերեխաները նկատմամբ օգնում են, ծեփում են, թուղթ են կարտում իրենց ընտրած կամ բում են, ծեփում են, թուղթ են կարտում իրենց ընտրած կամ բում առաջարկությունը թեմայով: Յեթե կու դեպքումն ել դաստիարակի առաջարկած թեմայով:

բելու և աշխատանքն իր բռվանդակությամբ ավելի հետաքրքրական դարձնելու:

Յեթե յերեխաներին առաջաղբանք ե տրվում, ապա այն պետք ե մատչելի և հետաքրքրական լինի նրանց համար: Աստիճանաբար բարդացնելով առաջաղբանքը, զաստիարակը զարգացնում է յերեխաների ստեղծագործական ընդունակությունը:

Վորոշակի թեմայով զբաղմունքները հիմնականում արվում են բարձր խմբում: Միայն շատ հեշտ առաջաղբանքներ կարելի յերբեմն տալ նաև միջակ խմբի յերեխաներին:

### ՓՈՔՐԵՐԻ ԽՈՒՄԲԸ

Մանկապարտեղի փոքրերի խմբում անց են կացվում ըղբաղմունքների հետեւյալ տեսակները:

Նկարչություն՝ սև և գունավոր մատիտներով, ներկերով, կաֆճափ, վերջինս զբատախտակի վրա, խաղերի և յերեխաների ընտրած ինքնուրույն զբաղմունքների ժամերին:

Ծեփ՝ կավից:

Թղթի զբաղմունքներ՝ կտրատել ամուր թղթից, փակցնել պաւնավոր թղթից կտրտած պատրաստի ձևերն (քառակուսի, զրշան, յեռանկյունի) ու վոչքարդ նկարները (խնձոր, գնդակ և այլն), ազատ կտրտել և փակցնել (ապլիկացիաներ) գույնզգույն թղթից:

Յերեխաներին հնարավորություն տալով զբաղվել ազատ նկարչությամբ, ծեփով և թղթից կտրտումով, դաստիարակը հետզհետե հասցնում է նրանց ծանօթ առարկաներ նկարելու կարողությանը, առանձին յերեխաներին հաբցնում ե, թե ինչ են նրանք նկարում, խորհուրդ և տալիս վերցնել մի ուրիշ գույնի ներկ և այլն:

Կարենոր և յերեխաներին սովորեցնել մաքրություն պահպանել ծեփելու և ներկելու ժամանակ, սեղանը, իրենց հագուստը չկեղատել, կավը չթափել հատակին, վրձինը, քսելով բաժակի յեղբին, կամացուկ մզել, ներկերը չխառնել, մատիտը վրձինը, մկրատը կանոնավոր բռնել, մատիտը չափից գուրս չսեղմել և այլն:

Թղթից կտրտած ձևերը փակցնելիս պետք ե յերեխաներին

սովորեցնել սոսինձը շատ թանձր չքսել և ինամքով փակցնել թղթից կտրտած փիգուրները և հարթել շորի կտորով: Դաստիարակը յերեխաներին սովորեցնում է ձիշտ անվանել իրենց գործածած ներկերը և թղթի գույները:

Սկզբում յերեխաներին պետք ե տալ մատիտներ՝ վորոյն ավելի ծանօթ և պարզ նյութեղներ, հետո՝ կավ, վորոշ ժամանակից հետո ներկեր (սոսնձաներկ, ջրաներկ և այլն): Նախ 2—3 խիտ միջանցից տարբերվող գույնի, իսկ հետո ավելացնել և ուղիղները: Գյուղական մտնկապարտեզներում, վորտեղ յերեխան փոքր հասակից ոգտվում ե բնական նյութերից (ավաղ, կավ), կարելի յե այդ նյութերը տալ առաջին հերթին:

Գույնավոր մատիտները և ներկերը պետք ե տալ վառ գույների, խիստ միջանցից տարբերվող, առաջին հերթին՝ հիմնական գույնները: Մատիտների և ներկերի քանակը մեծ չե՝ տարվա սկզբին 2—3 գույնի: Հետագայում յերեխաները կարող են ոգտըզվել 5—7 գույնի մատիտներից: Մատիտներով նկարելու համար պետք ե գործածել ամուր թուղթ, ուղղանկյուն կտրտված (որին նաև, 20×15 սմ), իսկ ներկերով նկարելու համար՝ մեղմորեն յերանգավորված սեղանի թուղթ, 20×30 սմ չափի: Ներկերի համար պետք ե տալ խոռի մազի վրձիններ (մոտ 1 սմ համար առ թյամբ):

Ծեփելու համար ավելի լավ և կավ ողտագործել և վոչ թե պլաստելին: Գետք և ծեփել փոքրիկ ատխտակների կամ լինուելով վրա: Նովատակահարմար և ալգ խմբում կավը տալ առանց լրացուցիչ նյութերի:

Թղթից կտրտելու և փակցնելու համար լավ և գործածել միջանցից խիստ տարբերվող վառ գույնների թուղթ, սկզբում 2—3 գույնի, հետո ավելացնել մյուս գույնները (նույնը, ինչ վոք ներկերով նկարչության համար): Թուղթը կարելի յե գործածել գունավոր, չփայլող կամ փայլուն, սոսինձը՝ կարտոֆիլի կամ վորենի ալյուրից, մկրատը՝ փոքր չափի և անպայման բութ ծայրերով:

Միջակ խմբում անց են կացվում հետեյալ դրազմունքները՝ նկարչություն մատիաներով և ներկերով, աղատ կամ գոտաշիարակի սառաջարկած թեմայով։ Դեկորատիվ նկարչություն ներկերով, յերկրաչափական ձևեր (շրջան, քառակուսի, յեռանկյունի) նկարելը, նկարչություն սպիտակ և գունավոր կավճիկներով՝ դրաստախտակի վրա։

Տեփա աղատ, յերբեմն առաջադրությամբ։

Զմուն զրսանքների ժամանակ հնարավոր և ձյունից գնդեր զլորել և ուղարկեր զարդարել պատրաստի ներկած սառակտորներով, դրաշակներով, տիկնիկների համար սառցարլուր կառուցել և այլն։

Զրադմունքներ թղթով կտրտելը և փակցնելը (ապլիկացիա) գունավոր թղթից։

Յերեխաներին պետք և տալ յերկրաչափական ձևեր կտրտել յեղրազների ողնությամբ և նրանց փակցնել նախշերի ձևով, ինչպես և նրանցից աղատ կոմքինացիաներ կազմել ըստ գույնի և ձեր։

Ամուր թղթից յեղրազներով կտրտել ծանոթ առարկաների սիլուետներ և ոգուագործել խաղի ժամանակ։

Մալելու միջոցով թղթից խաղալիքներ պատրաստել (մակույկ, գլխարկ և այլն)։

Այլ նյութերով զրադմունքներ՝ պատրաստել ամենապարզ խաղալիքներ (խաղալիք կահավորում, սավառնակներ, շողենավ), զանազան տուփերից, կոճերից, տախտակի կտորներից, քառանկյունի և կլոր ձողերից, փոքրիկ անիվերից, ստվարաթղթից (կարտոնից), կտորներից և այլն։ Հողի կամ ափակի մեջ խաղալիք – սեղաններ, հստակներ շիներ։

Մանր քարերից, կոներից, կաղիններից, մասումներից նկարներ, նախշեր շարել։

Յերեխաների ստեղծագործությունը զարգացնելու համար դաստիարակը խրախուսում և յերեխաների ձեռներեցությունը, յերեմն տալիս և փոքրիկ, պարզ առաջադրանքներ, որինակի նկարել՝ ինչպես են թուում սավառնակները, կավից շինել զանազան պտուղներ, բաշտակեցնել, ամանեղեն, կենդանիների և մարդկանց կերպարաւոներ և այլն։

Գարապմունքների ժամանակ դաստիարակը ցուցումներ և

առաջիս, թե ինչպես պետք և ոգտվել նյութերից՝ մատիտից, վրձինից և այլն, ցույց և տալիս ավելի ճիշտ ձեռքը, ոգնում և ավելի լավ պատկերել առարկաները՝ խորհուրդներ տալով, հիշեցնելով ավյալ առարկայի կամ յերեսույթի մասին, յերեխաների և ետ միասին դիտելով առարկան, յերեսույթը և այլն։

Զանազան նյութերից վորեն բան կառուցելիս՝ յերեխայի համար գժվարություն առաջ գալու դեպքում զաստիարակն անմիջապես ոգնում և նրան (կազում և լարը, սղոցում և տախտակը և այլն) և յերեխաներին ել մասնակից և դարձնում իրենց խկերներին օգնելու գործին։

Յերեխաները հետզհետե վարժվում են պատկերել այնպիսի առարկաների փոքրիկ խմբեր, վորանք միավորված են մի ընդհանուր բովանդակությամբ՝ ոգտագործել ներկերը բաղմապիսի միացումներով և տալ վոչ բարդ նախշեր դեկորատիվ նկարներում և այլն։

Յերեխաներն ընտելանում են ներկը խնամքով վերցնել վրձինով, վրձինը վզզողել ջրի մեջ և սրբել շորով, ճիշտ ձեռք ոգտվել մկրատից և խնամքով վերաբերվել նյութերին։

Նկարչության համար նպատականարմար և բացի սպիտակ թղթից տալ նաև բաց գույնի թուզի։

Յերեմն կավով աշխատանքների համար տրվում են լրացուցիչ նյութեր՝ ձողիկներ, ձյուղեր, մանր քարեր, խիտանջի խեցիներ և այլն։ Կավ չունենալու դեպքում այդ հասակի յերեխաներին կարելի յետալ պլաստելին, բայց բավարար քանակությամբ, վորպիսզի աշխատանքները չափազանց մանր դուրս գույնը և հստակությունը լինի վորոշ ժամանակ պահել նրանց չփան։

Տախտակի կտորները, քառանկյունի ձողիկները, վորոնք կործ են ածվում խաղալիքներ շինելու համար, պետք և լինեն հղկված։

Տախտակի կտորները պետք և լինեն փափուկ տեսակի փայտից՝ սոճի, յեղինի, լորենի։ Մուրճի քաշը՝ 100–125 գրամ։

ՄԵԾԵՐԻ ԽՈՒՄԲԸ : ԵՎ. 7 ՏԾՐԵԿԱՆ ՅԵՐԵԱՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ

Այդ խմբում անց են կացվում հետեյալ պարապմունքները։ Նկարչություն՝ աղատ և ըստ առաջադրանքի, գունավոր

մատիտներով և ներկերով գեկորատիվ նկարչություն (սոսնձառներկ, ջրաներկ, գուաշ), սպիտակ և գունավոր կավիճներով պրատաբանակի վրա ազատ նկարչություն:

Ամառվա պայմաններում պետք եւ խրախուսել նկարչությունն ավաղի վրա՝ նկարներ դուրս բերել, շարելով ավաղի, հողի վրա զանազան նյութեր, նայած բնական պայմաններին (մանր քարեր, սոճու կոներ, խիունչի խեցիներ, մասուր և այլն); 7 տարեկան յերեխաների խմբում առաջադրանքով նկարչությունն ավելի մեծ տեղ և բռնում քան նախօրդ խմբում:

Ծեփ կավով ազատ և առաջազրանքով: Կարելի յեւ ոգտադրժել և լրացուցիչ նյութեր՝ ձողիկներ, ձյուզեր, գրոշակներ և այլն:

Զմեող յերեխաները կարող են հողամառում ձյունից ծնվել կենդանիների, մարդկանց կերպարանքներ, տնակներ, շոգենաշնչեր՝ խաղի համար և այլն, զարդարելով դրանք զաստիարակի հետ միասին նախորդ պատրաստած դունավոր սաղակառներով, ձյունի վրա շոամպներով դրոշմել ֆիգուրաներ:

Զբաղմունքներ թղթով ազատ կտրատել և փակցնել, ուրիշագործով յերկրաչափական ձևեր կտրատել և նըանցից գեկորատիվ ապլիկացիաներ կազմել.

Ամեւր թղթից կամ ստվարաթղթերից ֆիգուրաներ կտրատել (ուրիշագործով), ամրացնել դրանք հենարանների, կամ ձողիկների վրա և ոգտագործել խաղերի կամ ստվերային թատրոնի համար: Թուղթը կորացնելով և ծալելով պատրաստել զանազան սնամեջ խաղալիքներ (մակույկներ, գլխարկներ, զամբյուղիկներ, տնակներ, տոնածառի համար լապտերներ և այլն) և նախշել:

Զբաղմունքներ բնական և այլ նյութերով սյուժենատային և զարդանկարային ապլիկացիա չորացրած ծաղիկներից, կեչի ծառի բարակ կեղեցից, մամուռից: Իւշնագործ խաղալիքների կառուցում կաղիններից, սոճու կոներից, ծառի կեղեցից և այլ տեղական բնական նյութերից: Թելի կամ լարի վրա շարել տաշեղներ, կոներ, հատապտուղներ (մասուր և այլն), նըանցից զարդարանքներ պատրաստել տիկնիկների անկյունի համար և այլն:

Խաղալիքներ կառուցել զանազան տուփերից, տախտակի կտորներից, քառանկյունի և գլանաձեղ ձողիկներից, անիվ-

ներից, կոճերից: ստվարաթղթերից, թղթի կտորներից և այլ բազմազան նյութերից՝ ողտագործելով սոսինձ, թել, մեխեր և այլն:

Վերսհիշյալ աշխատանքներից մի քանիսը կարելի յեւ ներկեց սոսնձառներինով, անելինի ներկերով: Ամառը պետք եւ խրախուսել գետնի վրա տիկնիկների համար խաղատնակների, նրանց ցանկապատերի; շվաբարանների, տաղագարների կառացումը: Գետք և յերեխաներին խաղերի և պարագմունքների համար կավ և ավագ տալ (առվակներում պատվարներ շինելու, տիկնիկների տնակները սվաղելու և այլ աշխատանքների համար):

Եերեխաներին պետք եւ հնարագորություն տալ կարել և առեկնագործել զանազան տիկնիկային պարագաներ,—անձեռագիկներ, սրբիչներ, շաղիկներ, տրուսիկներ, զլիարկներ և այլն: Միջահատակ յերեխաներն արդեն իրենք կարող են կպցնել կութականակ յարկամար և, վոր յերեխաները, շուլալելով, սպիտակ հակները: Հարկալոր ե, վոր յերեխաները, շուլալելով, սպիտակ կամ բաց միագույն կտորի վրա վառ գույնի թելերով տսեղակամ բարձեն: Սկզբում նողատակահարմար և յերեխաներին զատրառագործեն: Նկարը նկար տալ, հետազոտում յերեխաներն իրենք կարող են տսեղակամ համար նկարներ հորինել: Թաստիարակը են տսեղակամ թելերը, բեր բնչպես պետք եւ բրոնել տսեղը, բնչպես պետք եւ միմյանց հետ կարել գործվածքի յերկու կտորներ և այլն:

Կաղմակերպելով յերեխաների ծեփը, նկարչությունը և մյուս պարագմունքները, գաստիարակը պետք եւ ձգտի այն բանին, որ յերեխաները կարսղանան աշխատել վոչ միայն ինքնուրեսյն վոր յերեխաները կարսղանան աշխատել վոչ միայն ինքնուրեսյն վոր յերեխաներից կարսղական կյանքից կամ ներ բնության յերեկոյթներից, հասարակական կյանքից կամ գործադրության մեջ կարսղական կյանքից, որբից, որինակ, թոշունների չվելը, կարգացված հեքիաթից, դրբից, որինակ, թոշունների չվելը, կամ ամուսնական մասնակի, տոնակատարություն ակրամաթափը, պուրակը ձմեռ ժամանակ, տոնակատարություն և այլն:

Աշխատանքի պրոցեսում գաստիարակը կարող է սպնել յերեխաներին, անմիջականորեն ցույց տալով տվյալ աշխատանքի բնականական առանձին ձեերը: Աչքի չափով թուղթ կտրաելու ժակատարման առանձին ձեերը, մասնակի չափով թուղթ կտրաելու ժակատարման առանձին ձեերը, մասնակի կարելի յեւ ցույց տալ զանազան համաշափ առարկաներ մասնակի կարելի յեւ ցույց տալ զանազան համաշափ առարկաներ կարելու ձեեր թուղթը յերկտակ ծալելու միջոցով: Յերկրաչափական կարելու ձեեր թուղթը յերկտակ ծալելու միջոցով:

կամ ձեւրից հախանքը կազմելու կամ դարդանկարչության համար սկզբնական պարագաների ժամանակ կարելի յէ ցույց տալ պատրաստի որինակներ:

Մեծ յերեխաներին կարելի յէ դարդանկարելու համար առաջ յերբեմն զանազան ձեմի ամանեղենի ուրվագծեր, որինակ՝ սափոք, սկահակ (վաղա), գավաթ և այլն, կամ առաջարկել յերեխաներին հորինել զարդանկար՝ տիկնիկացին դորդի, զսդնոցի, անձեռոցիկի համար:

Յերեխաները կարող են նույնպես մասնակցել խաղերի համար զգեստների դարդարմանը (շաբանի սկնությամբ). Յերբեմն կարելի յէ տալ սպիտակ թուղթ՝ զանազան գույներով կամ մարզարի գույնի ներկելու համար:

Ներկերով նկարելու ժամանակ պետք է սովորեցնել յերեխաներին իտառնել ներկերը զորոշ գույներ ստանալու համար (կանոչ բաց մանիշագույն, նարնջագույն):

Դաստիարակը մեծ ուշադրություն պետք է դարձնի նույնպես զանազան նյութեղենից խաղալիքներ հորինելու վրա.

Յերեխաները յերբեմն իրենք կարող են տախտակի կտորները կտրաել սղոցատուփի ոգնությամբ:

Պարագաների ընթացքում դաստիարակը յերեխաներին սովորեցնում է լավ կշռադատել իրենց աշխատանքը, տալ ավելի բազմազան բովանդակությամբ նկարներ և այլն և, ըստ ձեմ՝ ավելի կատարելագործված, այսինքն ավելի բազմաթիվ հատկանիշներով պատկերված տուրկաներ. որինակ, թուշող սավառնակներ կարինով, նրա մեջ նստած ողաշուռով, պրոպելերով և առանձին առարկաների և նրանց մասերի միջև ավելի ճիշտ համաշխատության պահպանելով:

Դաստիարակն աստիճանաբար զարդացնում է յերեխաների մեջ քննագատական վերաբերմունք իրենց աշխատանքների նըրկատմամբ, զգուշորեն մատնանշում է յերեխաների աշխատանքի առանձին թերությունները՝ նրանց ուղղելու նպատակով, խրախուսում է յերեխաների ձգտումը՝ միանալ փոքրիկ խմբերով ընդհանուր աշխատանքի համար, ողնում և նրանց՝ աշխատանքի բաժանում կատարելու դորձում:

Այդ խմբերի յերեխաներին տրվում են ավելի բազմազան նյութեր՝ լրիվ կոմպլեկտներով զունավոր մտաիտներ, ներկեր, գունավոր կավիճներ, զանազան տեսակի և գույնի թուղթ, պարզ կամ ծաղկանկարներով զանազան գույնի փափուկ գործվածքներ,

գույնպղույն թելեր, տախտակի կտորներ, քառանկյունի և զլանաձև ձողիկներ, փոքրիկ անիմսներ, ֆաներայի շերտիկներ և այլն. Նախորդ խմբերի համար մատնանշված նյութերն այսուեղ չեն թվարկվում, բայց նրանք մնում են գործածության մեջ նաև այս խմբերում:

¶ L U T U IV

ՅԵՐԱՎԵՏՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՅՑՈՒՆ.

Յերաժշտական դաստիարակությունը նպաստում է նախա-  
դպրոցական յերեխայի ընդհանուր յերաժշտական զարգացողու-  
թյանը, դաստիարակում և նրա հետաքրքրությունը գեղի յերա-  
ժշտությունը, զարգացնում և նրա յերաժշտական լսողությունը,  
յերաժշտական հիշողությունը:

Դրա հետ առընթեր յերաժշտական դաստիարակությունը նովաստում է յերեխաների մեջ աշխալց և ուրախ տրամադրություն ստեղծելու, դաստիարակում և նրանց մեջ սեր դեպի մեր հայրենիքը, դեպի նրա առաջնորդները, հերոսները, դեպի խորհրդային յերկրի լավագույն մարդիկ, նպաստում և մանկական կողեկտիվի կազմակերպմանը, դաստիարակում և յերեխաների հույցները, դարբաննում և նրանց յերեխակայությունը, ուշադրությունը, շարժումների փորոշակիությունը, նրանց արտահայտիչ ընույթը:

Յերեխաների յերաժշտական դաստիարակությունն անց և կացվում յերաժշտության ունկնդրման, յերգի և յերաժշտության տակ կատարվող շարժումների\*) ձևերով, վորոնք կազմում են մի անբաժան ամբողջություն և դաստիարակչական աշխատանքում սերտ կերպով հյուսված են, միմյանց հետ:

Յերածշտական գաստիարակության խնդիրները կարելի յերազումնել միայն այն գեպքում, յերբ գաստիարակը սիստեմատիկ աշխատանք տանի յերածշտական գաստիարակության ուղղությամբ, յերբ յերգը և նվազի տակ կատարվող շտրժումները մտնեն մանկապարտեզի ամենուաւ և աւաճ - և աւաճ

Կարելի յե անցկացնել լեռաժամութաւ:

\*<sup>4)</sup> ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — «Ընթացիկա» դարձվածքը փոխարինված է շաբաթումնուց յերաժշտության տակ՝ դարձվածքով: Այդ հասկացությունն ավելի լայնորեն և ավելի լրիվ և ընդգրկում ծրագրում ամփոփված շաբաթութեալ ժամանակակից բնույթը:

զի տակ կատարված շարժումներ՝ տիկնիկային թատրոնի ցուցադրման, հեքիաթի բեմագրման, յերեխաների խաղի, ամառացին դրսանքների ժամանակ և այլն:

Մանկապարտեզի բոլոր խմբերում պետք է փորոշակի որեր համեմ հատկացնել սահմանված յերաժշտական պարապմունքների համար:

Սովորաբար յերաժշտական պարագմտնքների մեջ ստուգ են յերգելը, յերաժշտական հատվածի կամ յերգի ունկնդրումը և շարժումները (յերաժշտական խաղ, պար և այլն):

Պարապմունքներն անց են կացվում յերեխաների ամբողջ մարի հետ միաժամանակ, յերբեմն եւ փոքրաթիվ խմբի հետ:

Պարապելով յերեխաների փաքրաթիկ խմբի հետ, գառտիա-  
քակը կարող և լսել մի քանի յերեխաների յերգը, չոչողնե-  
ցնելով և յերկար չզահելով ամբողջ խումբը, յերեխաների հետ  
ուղար նախապատրաստել, լսել ծնծղա նվագող յերեխաներին, որ-  
ուի նուանդ, տալով հարկավոր ցուցումներ:

Դաստիարակը հնարյակություն պետք և տա յերեխային  
դրսնորել իր ստեղծագործական ունակությունը, որինակ, յերա-  
ժշտությունը լսելուց հետո յերեխան շարժումներով յօւրովեն  
վերարտագրում և յերաժշտության բնույթը և յերաժշտական  
ռահեծագործության տարրեր մասները:

Պարի հաջող հօրինված շարժումները դաստիարակը կտրող պատճեն է առաջարկել, այն կատարել բոլոր յերեխաններին.

ի բարեկառաւութեալ և առաջարկված այս գործությունը զբանորվում  
է Եւրեխայի ստեղծագործական ունակությունը զբանորվում  
է յերբեմն այն բանում, վոր հայերդում ե իր մելոդիաները զա-  
նազան տեքստերով, վանկերով (լաւլա), նվագում ե մելոդիա-  
ներ ծննդղայի վրա: Դրա համար պետք ե յերեխաներին տուլ ըլ-  
սիլոֆոններ, գանդակներ, դահիրաներ, հնչուն յեսանկիւններ,  
թմրուեներ և ճշտորեն լարած ծննդղաներ:

Ավելորդ աղմուկից խուսափելու նպատակով առարձնաւ առաջ գուքը քանակությամբ յերաժշտական խաղալիքներ (ծնծառ յերկուսից վեց ավելի), նրանց պարապ չժամանցն զրագեցնելու համար:

Դաստիարակը պատասխանատու յե իր խմբի յերածշատկառ  
դաստիարակության համար և ակտիվորեն մասնակցում և այդ  
գործին նաև այն մանկապարտեկներում, վորտեղ կա հատուկ  
էլեկտրական աշխատող:

Դաստիարակը մասնակցում է յերաժշտական պարագունք-ների պահպանմանը, քննարկում է յերաժշտական աշխատազի-

Հետ միասին առանձին յերեխաների յերաժշտական դաստիարակ կության հաջողություններն ու թերությունները և միջացառումներ և նշում թերաթյունների վերացման նկատմամբ:

Թաստիարակը յերաժշտական, աշխատողի սպնությամբ յառացնում է յերաժշտական նյութը, վորպեսզի կարգանա ճիշտ անցկացնել յերգերը, խաղերը, պարերը, յերաժշտության աւանդությունը (որինակ, պատեփան), յերաժշտական աշխատողի սպնությամբ սավորում և նվագել յերաժշտական խաղալիքները և այլն։ Այսպիսով դաստիարակը հետզհետե լծվում է յերկխաների հետ անցկացվող ամեն, տեսակի յերաժշտական աշխատանքներին - և պատրաստվում է յերաժշտական պարապմունքներ անցկացնելու համար։

Այն մանկապարտեղներում, վորտեղ դաշնամուր չկա, յերաժշտական պարագամունքներն անց են կացվում ուրիշ գործիքների (ջութակ, մանղողինա, զիտարաև այլն), դաստիարակի կատարած յերդի, պատեփոնի, ռազիոյի (մանկական հազարդութեր) ողջությամբ։ Մեծ չափով կարաղ են ոգտագործվել զանազան ժողովրդական յերաժշտական գործիքները։

Ցուցումներում տրված և որինակելի սեպերտուարներն ըստ խմբերի, բայց այդ չի նշանակում թե սեպերտուարը պետք է կատարել ամբողջությամբ և նույն կազմութեան մեջ:

Նյութն ընտրելու ժամանակ զաստիաբուլը հաշվի պետք է առնի տվյալ մանկապարտեղի կոնկրետ պայմանները: Անեղեք տուարում ցույց տրված ժողովրդական յերգերի հետ միասին, պետք և ոդտագործել նաև տարրեր աղջությունների ժողովրդական յերգերից իրենց բովանդակությամբ և մելոդիայով յերեխաների համար մատչելի յերգեր:

Անհրաժեշտ և նաև սուտագործել յերեսաների համար մտա-  
չելի ազգային պարերը:

Տարբեր պազմությունների ժողովրդական յերգերը, պարերը, յերաժշտությունը յերեխանների մեջ հետաքրքրություն են դաստիարակում գեղի նրանց ստեղծագործությունները, նպաստում են յերեխաններին ինտերնացիոնալ մոռու ուսում՝

«Յերաժշտությունը կազմով դաստիարակելու գործին։ Ենարքումներ նվազի տակ հատվածներում փորոշ պահանջներ կրկնվաւ են աշարեր իշխանությունը այդ պահանջները յուրաքանչյուր հաջորդ խթա-

բում կատարվում են ավելի բարդ յերտֆշտական նյութի նվազ-  
գույցությամբ:

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԽՈՒՄՔ

## Յերաժշտությա ու նկանդրությա

Յերեխաներն ամենից հեշտ են յուրացնում յերգեր՝ յեր  
նրանք կատարվում են առանց դործիքի նվազակցության:

Սակայն, աստիճանաբար կարելի յէ մտցնել յերգերի ունկնդրում գործիքի նվազակցությամբ, ինչպես նաև դաշնամուրի կամ մի այլ յերաժշտական գործիքի վրա կատարած յերգերի ունկնդրում:

Յերաժշտության ունկնդրումն այս խմբում տից և կացված պլիսագորապես նվազածությամբ կատարվող շարժումների հետ զուգըրդված (խաղեր, պարեր, զօրոշ մարզանքներ)։ Արինակ նախ քան «Ճնճռողիկներն ու կատուն» խաղն սկսելը, դառտիարակներ առաջարկում են յերեխաներին լսել յերաժշտություն այն մասին, թե ինչպես են թռչում ճնճռողիկները, ինչպես քայլում կատուն։

Այդպիսով՝ յերեխաները սովորում են լսել մասկական յաշ-  
դերը մեծահասակների կատարումով, ճանաչել յերգերը՝ լսելով  
լոկ յեղանակներն՝ առանց խստերի, ճանաչել յերգերը՝ լսելով  
նբանց բնորոշ ներածությունը, կամ լսել ամբողջը յերաժշտա-  
կան գործիքի (դաշնամուրի, մանզոլինի) կատարումով, լսել  
փոքրիկ, վոչքարդ և, իրենց բնույթով արտահայտիչ յերաժշտա-  
կան հատվածներ։

3 b p c

Սկզբներում յերեխան միայն լսում և յերգը, վորը կտառ-  
բում և դաստիարակը: Լսելով յերգը, նա սկսում է ձայնակցել,  
յերգելով նախ առանձին բառեր, յերգի մասեր և տղա ամրագի  
յերգը: Հետզհետեւ յերեխաները սովորում են ինքուրույն կերպավ  
յերգը: Հետզհետեւ յերեխաները սկսած յերգը: Յերգի բառերը չղեաք և  
վերջացնել դաստիարակի սկսած յերգը: Յերգի բառերը չղեաք և  
սովորեցնել առանձին, այլ միայն յերգի հետ: Բառերի հստակ  
արտահայտությամբ դաստիարակը նպաստում է տեղստի ճիշտ

Փրաղներով և հնչյունների վոքը ծավալով, կամ ինչպես առում են՝ փոքը զիապազնով):

Այս վարժությունների ոգնությամբ յերեխաները հետզհետե սովորում են յերգել մանկական յերգեր՝ յերածշտական զործիքների նվագակցությամբ, զեկավարի ոգնությամբ, առանց մեկ-մեկուց հետ մատու կամ առաջ ընկնելու:

### ԾԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՆՎԱԶԻ ՏԱԿ

Յերածշտակության տակ անց են կացվում այն շարժումները, վորոնք յերեխաները լավ են տիրապետել, այն և քայլվածք, վազք և պարի շարժումներ (որինակ, ծափ տալը, վոտքերի դայտունը, յերկու վոտքով ցատկելը, շուռ գալը և այլն):

Այդ շարժումներն անց են կացվում խաղերում և պարերում:

Դաստիարակը յերեխաներին ցույց է տայիս շարժումները և մասնակցում է խաղերին և պարերին: Հետզհետե յերեխաները մկնում են շարժումներն ինքնուրույն կատարել:

Այդպիսով՝ յերեխաները վարժվում են իրենց շարժումներով արտացոլել յերածշտակության բնդիանուր բնույթը (որինակ, հանդարտ յերածշտակության հետ նստում են, ուշախ նվազի հետ՝ պարում), սովորում են արտացոլել յերածշտական արտահայտության առանձին ձեւերը, այն և հնչյունի ուժը՝ ուժգին, մեզմ (որինակ, ճոճում և պահում են գրոշակները), հնչյունի ուժիսարը՝ ցածր և բարձր (որինակ, «Ավտոմոբիլ և թունիկներ» խաղը) և տեմպն՝ արագ ու զանգաղ (որինակ, քայլվածքը և վազքը «Ջեր» խաղի մեջ):

### ՄԻԶԱԿ ԽՈՒՄԲ

#### Յերածշտության ունկնդրում

Յերածշտական դաստիարակության սիստեմատիկ աշխատանքի պայմաններում յերեխաները կարող են ճանաչել զարդարությանակները, ինչպես նաև վորոշ, յերկու միմյանց հա-կառագ հառակածները, ինչպես նաև վորոշ, յերկու միմյանց հա-սպառակածները, որինակ, զառապատճեն առաջակած հառակածները և յերածշտական յերկու ստեղծագործություն՝ Շնորհական և «Արջը», իսկ յերեխաներն իրենք են վարա-շում, թե զնու յերածշտությունն և պատկերում նապաստակ-ները և վնրը արջը, կամ զնու յերածշտությունն և պատկերու հա-մար և վնրը քայլելու: Ի հարկե պարտադիր չե, վոր յերեխաները

միշտ վորոշին յերածշտական ստեղծագործության բնույթը, յե-րեխաները կարող են լսել յերածշտությունը՝ ըմբռնելով այն անձմիջաններն, առանց վերլուծության:

Յերածշտության ունկնդրումը անց է կացվում վորոշես ընդ-հանուր յերածշտական պարապմանքի մի մասը, նույնպես և ինք-նուրույն պարապմանքի կարգով: Այդ պարապմաւնքների ժա-մանակ յերեխաները լսում են զործիքային յերածշտության 1-2 հատված և դաստիարակի կատարած 1-2 յերգ: Այդպիսի պարապ-մաւնքները համերդի բնույթը են կրում և կարող են անցկացվել ժամանակում ամսական 1-2 անգամ:

